Պատվի համար

Exported from Wikisource on 08/12/20

Պատվի համար

Շիրվանզադե

դրամա 4 արարվածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՆԴՐԵԱՍ ԷԼԻԶԲԱՐՅԱՆ – Տեղական հայտնի հարուստներից մեկը: 55 տարեկան, առույգ և ամրակազմ տղամարդ, կարճ խուզած ալեխառն մազերով, ցանցառ մորուքով և կարմիր այտերով:

ԵՐԱՆՈՒՀԻ – Նրա ամուսինը: Քահանայի դուստր, 46 տարեկան, ժամանակից առաջ թառամած, դժգույն, նիհար կին, համակրելի և գեղեցիկ:

ԲԱԳՐԱՏ – Էլիզբարյանների ավագ որդին: Ժամանակակից գործնական երիտասարդ, 27 տարեկան, եռանդուն դեմքով: Ձևերն ու շարժումներն արագ են, ոճը կտրուկ և գրական:

ՍՈՒՐԵՆ – Էլիզբարյանների երկրորդ որդին, 23 տարեկան կենսախինդ երիտասարդ, որի դեմքը կրում է շվայտ կենցաղի վաղաժամ հետքերը, բայց համակրելի է: Հագնվում է վերջին տարազով:

ՌՈԶԱԼԻԱ – Էլիզբարյանների մեծ աղջիկը: 24 տարեկան, բավական գեղեցիկ, բայց չափազանց ինքնագոհ դեմքով օրիորդ: Հագնվում է միշտ շքեղ, առանց գույների խտրության:

ՄԱՐԳԱՐԻՏ – Էլիզբարյանների երկրորդ աղջիկը: 22 տարեկան, մտախոհ դեմքով, արտահայտիչ աչքերով օրիորդ՝ մի քիչ մորը նման, բայց ավելի գեղեցիկ: Հագնվում է համեստ, ճաշակով:

ԱՐՏԱՇԵՍ ՕԹԱՐՅԱՆ – Անդրեասի հանգուցյալ ընկերոջ որդին և նախկին որդեգիրը: 26-27 տարեկան, խոհուն դեմքով, նյարդային շարժումներով: Հագնվում է միշտ սև:

ՍԱՂԱԹԵԼ – Երանուհու եղբայրը և Անդրեասի հավատարիմ աջակիցը: Մոտ 50 տարեկան, անվրդով, բայց խորամանկ դեմքով: Երեսը սափրում է, քունքերի մոտ փոքրիկ մորուսհատներ թողնելով: Հագնվում է միշտ միատեսակ – լայն վարտիք, սև ատլասի արխալուղ, վրեն երկարավուն, լայն պիջակ: Վզովը գցած ժամացույցի ոսկե շղթա: Մեջքին կապած ոսկե քամար: Միշտ գործ է ածում դեղին սաթի տերողորմյա խոշոր հատիկներով: Կոշիկների տակերը մի մատնաչափ հաստ են:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ – Անդրեասի հաշվապահը: Ժամանակից առաջ ծերացած, 42 տարեկան տղամարդ: Սովորական ծառայողի միջին տիպար:

ՎԱՐԴԱՆ – Սպասավոր Էլիզբարյանների գրասենյակում: Երիտասարդ: Խոսում է Շամախու բարբառով:

ԶԱՐՈՒՀԻ – Երիտասարդ աղախին:

Գործողությունը կատարվում է Էլիզբարյանների տանը: Մեր ժամանակի անցք:

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Անդրեաս և Բագրատ Էլիզբարյանների պարապելու սենյակը, որ բռնում է սեփական տան վերին հարկում անկյունային դիրք՝ բնակարանի և գրասենյակի միջև: Միջին մեծության սենյակ: Աջ առաջին պատի մեջ դեպի փողոց երկու մեծ լուսամուտներ, որոնց մեջտեղում դրված է Անդրեասի գրասեղանը, վրեն, բացի գրելու պարագաներից, համարակալ, հեռախոսի ապարատ և էլեկտրական լամպ: Սեղանի մոտ, պատի կողմում մի մեծ բազկաթոռ, մյուս կողմում մի հասարակ աթոռ: Խորքի պատի մեջ երկու դռներ, մեկը բեմի կենտրոնական ուղղությամբ, դեպի գրասենյակ, մյուսը բոլորովին ձախ, գրեթե անկյունում, դեպի նախասենյակ:

Ձախ պատի մեջ ևս դռներ, որոնք տանում են դեպի բնակարան: Այս դռների մոտ, դրված է Բագրատի գրասեղանը, վրան, բացի սովորական պարագաներից, գրելու գործիքներ, գծագրություններ և մի քանի մասնագիտական գրքեր՝ ինժեներների համար: Սեղանի հետևում երկաթե դրամարկղ: Խորքում, դեպի աջ-վառարան: Պատերի տակ աթոռներ: Հատակի աջ կողմը ծածկված գորգով: Լուսամուտները վարագուրված են:

ՏԵՍԻԼ 1

ՍԱՂԱԹԵԼ ԵՎ ԿԱՐԻՆՅԱՆ Վարագույրը բարձրանալիս, Սաղաթելը, Անդրեասի գրասեղանի մոտ կանգնած, հեռախոսով խոսում է:

Խորքի դռները բացվում են, ներս է մտնում Կարինյանը և սկսում է Անդրեասի գրասեղանի վրա շատ դանդաղ ինչ-որ փնտրել: Այս դռները բացվելիս հեռվում երևում է մի բարձր հաշվեսեղան, որի քով կանգնած պարապում է մի երիտասարդ: Մերթ ընդ մերթ երևում են և ուրիշ ծառայողներ, նաև այցելուներ, որոնք այս ու այն կողմ են անցնում զբաղված դեմքերով: Գործողության ընթացքում, մինչև գրասենյակի փակվելը, այնտեղից լսվում են համարակալի չխչխկոց և հեռախոսի զանգակի հնչյուններ:

ՍԱՂԱԹԵԼ – (Հեռախոսով) «Համեեե՞: Այո, շուտով կգա: Հը՞մ, չեմ լսում: Հա: Լավ, ուղարկիր: Ցտեսություն»: (Զանգակը հնչեցնում է և գործիքը դնում է իր տեղը): Օրինվի տելեֆոն հնարողը, շատ լավ բան է վաճառականի համար: Հա ինչ էի ասում, Արիստակես, հենց որ ձեռքիդ գործը վերջացնես, կսկսես Բագրատի հաշիվը կազմել: (Հեգնորեն): Մեր պարոն ինժեները ուզում է իմանալ, ինչքան է ծախսված իր գործարանի վրա:

ԿԱՐԻՆՅԱՆ – Բայց դուք ձեր արած ծախսերի հաշիվները դեռ չեք ներկայացրել գրասենյակին: Պարոն Բագրատն ամեն մի ծախսի համար արդարացուցիչ դոկումենտ է պահանջում:

ՍԱՂԱԹԵԼ – Բան է հնարել պարոն Բագրատը. - արդարացուցիչ դոկումենտ: Ես Անդրեաս Էլիզբարյանի մոտ մինչև օրս առանց արդարացուցիչ դոկումենտի եմ ծառայել, էլի կծառայեմ: Հայրը հավատում է, թող որդին էլ հավատա: (Լռություն): Այդ ի՞նչ ես փնտրում:

ԿԱՐԻՆՅԱՆ – Մնացականյանների պայմանագիրը: (Դադարում է փնտրել):

ՍԱՂԱԹԵԼ – Հեր օրհնած, այսքան ժամանակ ծառայում ես այստեղ, էլի չգիտե՞ս, որ Անդրեաս Էլիզբարյանը սեղանի վրա երբեք հարկավոր թղթեր չի թողնում:

ԿԱՐԻՆՅԱՆ – Ճշմարիտ, ես մոռացել եմ, որ Անդրեաս Էլիզբարյանը բոլոր մարդկանց համարում է գող ի ծննդենե:

ՍԱՂԱԹԵԼ – Այո, նրա կարծիքով, մարդիկ գողանում են ամեն ինչ, որ կողպեքի տակ չէ: Եվ այդ շատ ճիշտ կարծիք է: Աշխարհի երեսին դրուստ մարդ չկա, բոլորը գող են: (Տեղողորմյան ձեռքերի մեջ տրորում է և հոտ քաշում):

ԿԱՐԻՆՅԱՆ – Խղճի դեմ բաներ եք ասում, պարոն Սաղաթել:

ՍԱՂԱԹԵԼ – Էհ, դու էլ խոսքի տակին գլխին – խիղճ: Ինչպես տեսնում եմ, այդ կերակուրը շատ ես սիրում:

ԿԱՐԻՆՅԱՆ – Այո, շատերի համար անմարսելի է:

ՍԱՂԱԹԵԼ – Ինչպես, օրինակ՝ հրամանոցդ համար: Տեսնում եմ քառասուներկու տարեկան մարդ ես, մազերդ ճերմակել են, մեջքդ ծռվել է և էլի, խիղճ-խիղճ ասելով, հալվում ես: Երանի գիտենայի, այսօր-էգուց որ ոտներդ ձգես, կնիկդ գրպանումդ պատանի փող կգտնի՞:

ԿԱՐԻՆՅԱՆ – Կարող է չգտնել, բայց ես գոնե հանգիստ հոգով կմեռնեմ:

ՍԱՂԱԹԵԼ – (Կծու հեգնությամբ) Ինչպես չէ, կես դյուժին ճրնկլը-ճտեր քաղցած փորով թողնելով փողոցում: Է, պարոն, խիղճը լավ բան է, միայն ափսոս, որ գերի է ընկել փողի ձեռը և օր-օրի վրա մաշվում է տանջանքից: Հա, ինչ էի ուզում հարցնել, այսօր Օթարյանն եկե՞լ է այստեղ:

ԿԱՐԻՆՅԱՆ – Ոչ:

ՍԱՂԱԹԵԼ – Էհ, զոհություն Աստծո: (Տեղողորմյան տրորում է և հոտ քաշում):

ԿԱՐԻՆՅԱՆ – Ասացեք, խնդրեմ, ի՞նչ է պատահել այդ երիտասարդի և պարոն Անդրեասի մեջ:

ՍԱՂԱԹԵԼ – Այդ երկար պատմություն է: Բայց մեր գործը չէ:

ՏԵՍԻԼ 2

ՍԱՂԱԹԵԼ, ԿԱՐԻՆՅԱՆ ԵՎ ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ – (Ներս է մտնում շտապով ձախ դռնից վերարկուով ու գլխարկով) Պապան այստեղ չէ՞: Ավելի լավ: (Սաղաթելին) Քեռի, ի սեր Աստծու, տուր ինձ իսկույն երեք հարյուր ռուբլի:

ՍԱՂԱԹԵԼ – (Տեղողորմյան գրպանը դնելով): Հեե հե, էլի վազեց գլխիս: (Սուրենին): Ի՞նչ է պատահել, էլի բարկացած ես:

ՍՈՒՐԵՆ – Հարցուփորձի ժամանակ չէ: Ինձ ձեռաց երեք հարյուր ռուբլի փող է հարկավոր:

ԿԱՐԻՆՅԱՆ – Երևի, էլի բակարայում տանուլ եք տվել:

ՍԱՂԱԹԵԼ – Բաս չէ, առուտուրում վնաս է արել: Սրանը կամ բակարան է, կամ թխլիկ-թխլիկ մամզելները:

ՍՈՒՐԵՆ – (Գրգռվելով Կարինյանի դեմ) Պարոն թանաքլգող, այդ ձեր գործը չէ, խնդրեմ անկոչ վերահսկողի դեր չկատարեք: Քեռի, եթե այս րոպեին երեք

հարյուր ռուբլի չունենամ – կխայտառակվեմ: Պատվի խնդիր կա մեջտեղ: Եթե ինձ սիրում ես – մի ուշացնիր:

ՍԱՂԱԹԵԼ – Շատ եմ սիրում, Սուրեն ջան, բայց որ փող չկա, ի՞նչ անեմ: Քեզ հայտնի է, որ այժմ հորդ գործերը եղբայրդ է կառավարում: (Տեղողորմյան գրպանից հանում է):

ՍՈՒՐԵՆ – Եղբայրս, եղբայրս, ամեն տեղ նա ինձ խանգարում է: Բայց թող սպասի, մի օր ատամներս ցույց կտամ նրան:

ՍԱՂԱԹԵԼ – Է, նա այն պտուղներից չէ, որ քո ատամներից վախենա:

ՍՈՒՐԵՆ – (Անհամբեր) Տալո՞ւ ես փող, թե՞ չէ:

ՍԱՂԱԹԵԼ – Այ եղբայր, ես ի՞նչ անեմ, ահա նա , սնդուկը, սա էլ դու, համեցեք, վերցրու, ի՞նչ ես յախիցս կպել:

ՍՈՒՐԵՆ – Բանալին տուր:

ՍԱՂԱԹԵԼ – (Հառաչելով) Չկա, Սուրեն ջան, չկա: Այժմ արքայության դռների պահապանն ես չեմ: Մեկ էլ մեր մեջ ասած, հիմա այդ սնդուկում, բացի պայմանագրերից և վեքսիլներից, ոչինչ չկա: Եղբայրդ մեր կարգ ու կանոնները փոխել է: Դրանից առաջ այդ սնդուկում տաս-քսան հազարներով փող էր լինում շաբաթներով ընկած: Հիմա եղբայրդ բանկումն է պահում:

ԿԱՐԻՆՅԱՆ – Նա ասում է փողն ու խելքը միշտ շարժման մեջ պետք է լինին:

ՍՈՒՐԵՆ – Որ այդպես է, տուր քո գրպանից:

ՍԱՂԱԹԵԼ – Սուրեն ջան, ախար ես փող որտեղի՞ց ունիմ: Ես մի խեղճ գործակատար եմ:

ՍՈՒՐԵՆ – Էլի մի սկսիր Ղազարոսի շարականը երգել: Կաշիդ դաբախանում կճանաչեմ: Քո կոշիկների այդ հաստ կարկատանի մեջ էլ փող կա:

ՍԱՂԱԹԵԼ – Տեր, անցո զբաժակս այս հինեն:

ՍՈՒՐԵՆ – Դե լավ, հորդ խոսքերը մի կրկնիր: Ասում են, դու նրան այնքան ես նման, որքան ես Առաքյալին: Հանիր քսակդ, տեսնենք:

ՍԱՂԱԹԵԼ – (Մեկուսի) Դրա ձեռքից ազատվել չի կարելի: (Տերողորմյան հանդարտ դնում է գրպանը և շատ հանդարտ պիջակի գրպանից հանում է մի ահագին մաշված, կեղտոտ կաշվե փողաման): Կարծեմ հարյուր ռուբլուց ավել

չունիմ: (Երեսը դարձնելով, թաքուն նայում է փողամանի մեջ): Փահ, իսկի հարյուր էլ չկա, հիսուն է:

ՍՈՒՐԵՆ – Այդ հեշտ է ստուգել: Տուր ինձ այդ տոպրակը, կտեսնեմ: (Փողամանը խլում է):

ՍԱՂԱԹԵԼ – (Վախեցած) Վայ, այդ ի՞նչ ես անում:

ՍՈՒՐԵՆ – Ուզում եմ մի քիչ հետազոտել այդ հնագիտական զզրոցը: (Սկսում է փողամանը տնտղել և մեկ-մեկ դուրս բերում անվանած իրեր): Այստեղ մտիկ արեք, ինչ ասես կա: Հին մուրհակներ, ակցիաներ, բանկային կտրոններ, գերբովայա մարկաներ և յաղլիկ գինու շշից...

ՍԱՂԱԹԵԼ – Ադա, ամոթ է:

ՍՈՒՐԵՆ – (Դուրս է բերում մի նամակ) Ա՞յս ինչ բան է: Վարդագույն թղթի վրա նամա՞կ, կնոջ ձեռքով գրվա՞ծ: (Հոտ է քաշում): Անուշահոտ...

ՍԱՂԱԹԵԼ – (Կարինյանից քաշվելով) Ադա, ամաչիր, մարդ կա այստեղ...

ԿԱՐԻՆՅԱՆ – (Թաքուն ծիծաղում է):

ՍՈՒՐԵՆ – (Հանելով նամակի միջից շորի մի կտոր) Ահա այս է նամակի պատասխանը-դեյրացվի նմուշ, արշինը վեց շահանոց, Տեր ողորմած Աստված, այստեղ մտիկ արեք, դեղատոմսեր, աչքի ճար, քինաքինա, ամբողջ դեղատուն: Պակասում է բժիշկը: Հապա, տեսնենք ուր է ցավդ, որ բժշկենք: Ահա, օ, այստեղ երեք հարյուր էլ կա, հինգ էլ, տասն էլ:

ՍԱՂԱԹԵԼ – (Ամբողջ ժամանակ անհագիստ աշխատում է փողամանը խլել) Այդ խոմ ափաշկարա կողոպտել է նշանակում: Տեսնո՞ւմ ես, Արիստակես, օրը ցերեկով:

ԿԱՐԻՆՅԱՆ – (Մեկուսի) Ավելի լավ է այդպես կողոպտել, քան թաքուն գողանալ, ինչպես դու:

ՍՈՒՐԵՆ – Մի վախենար, ավելի չեմ վերցնիլ: Այն, ցվայ, դրայ, հերիք է: (Փողերը դնում է գրպանը, փողամանը վերադարձնում է Սաղաթելին) Ստացիր թանգարանդ, ֆի, մազութի հոտ է փչում:

ՍԱՂԱԹԵԼ – (Փողամանը ծոցը դնելով) Կարող եմ ասել, որ էլի լավ պրծա...

ՍՈՒՐԵՆ – Շնորհակալություն: Այժմ պատիվս փրկված է: Անիրավները չէին ուզում ինձ հետ ապառիկ խաղալ: Աուֆվիդերզեհեն: (Ուզում է գնալ):

ՍԱՂԱԹԵԼ – Ամոթ չլինի հարցնել. - բաս վե՞քսիլը:

ՍՈՒՐԵՆ – Գրիր քեզ հայտնի պայմանով, կստորագրեմ, բայց տես Շեյլոկի տոկոս չբարդես վրեն: (Քայլերն ուղղում է դեպի նախասենյակ):

ԿԱՐԻՆՅԱՆ – (Գլուխը շարժելով անցնում է գրասենյակ):

ՏԵՍԻԼ 3

ՍՈՒՐԵՆ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

ԵՐԱՆՈՒՀԻ – (Գալիս է ձախ դռներից տնային հագուստով, առանց գլխարկի: Հուզված է): Կաց մի գնար:

ՍՈՒՐԵՆ – (Կանգ է առնում) Է, մամա, հերիք է ինչքան լացուկոծ բարձրացրիր, ես ներվային մարդ եմ:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Սաղաթելին) Դու նրան փող տվեցի՞ր:

ՍՈՒՐԵՆ – Այո, մամա, եղբայրդ ավելի բարի գտնվեց, քան դու և մեծ որդիդ:

ԵՐԱՆՈՒՀԻ – Հետ վերցրու, Սաղաթել, հետ վերցրու: Փողը նրան փչացրեց, փողոցները գցեց:

ՍՈՒՐԵՆ – Լավ, մամա, հին երգ երգելու տեղը չէ, գրասենյակից կլսեն: (Գրասենյակի դռները ծածկում է):

ԵՐԱՆՈՒՀԻ – Էհ թող լսեն: Այժմ ամենքն էլ գիտեն, որ դու որդի չես ինձ համար, այլ Աստծու պատիժ:

ՍՈՒՐԵՆ – Ինչո՞ւ: Որովհետև ապրե՞լ եմ ուզում: Այնպես, ինչպես ապրում են իմ բոլոր ընկերնե՞րը:

ՍԱՂԱԹԵԼ – Այսինքն, բոլոր անառակ զավակները: (Մի կողմ) Վա, ինչ ասացի:

ՍՈՒՐԵՆ – Քեռի, իմ գործերին մի խառնվիր: Քոնն այն է, որ հորս հաշիվներին վերադիր անես և սպանաղ ու դանձիլ ուտես:

ՍԱՂԱԹԵԼ – (Մեկուսի) Լավ կծեց, տեղն է քեզ, Սաղաթել:

ՍՈՒՐԵՆ – Իսկ դու, մամա, հոգս արա մյուս որդուդ համար: Կարող եմ հավատացնել, որ նա ինձանից ավելի վատ ճանապարհի վրա է: Մեր փողը կեղտ

է, նրան փչացնելը մեղք չէ: Հասկացա՞ր, սիրելի մամա: Ցտեսություն, ճաշին ինձ չսպասեք: (Գնում է նախասենյակի դռներով):

ՏԵՍԻԼ 4

ԵՐԱՆՈՒՀԻ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

ԵՐԱՆՈՒՀԻ – (Թուլացած նստում է աթոռներից մեկի վրա) Տանջեցին ինձ, բութ դանակով մորթեցին: Հանել է ոևոլվերն ու դրել եղբոր կրծքին. «փող տուր, թե չէ կսպանեմ»: Ոտներս թուլացան, աչքերս մթնեցին, ասացի երկուսն էլ կորան: Մի կերպ բաժանեցի: Ախ, դեռ աշխարհիս երեսին կանայք կան, որ ինձ նախանձում են, հարուստի կին եմ:

ՍԱՂԱԹԵԼ – Է, ոչինչ, եթե մեկ որդիդ անառակ է, մյուսը խելոք է: Մեկի քանդածը մյուսը շինում է:

ԵՐԱՆՈՒՀԻ – Էհ, չեմ ուզում ոչ քանդողին, ոչ շինողին: Մեկի համար փողը գերեզման է, մյուսի համար հայր ու հավատամք: Երկուսն էլ Աստծու ճանապարհից դուրս են: Մեր ժամանակներում փողը երկնային թագավորի պատիժն է:

ՍԱՂԱԹԵԼ – Օրհնվի նրա կտրողի ձեռները: Փողի պես էլ քաղցր բան կա՞ աշխարհում:

ԵՐԱՆՈՒՀԻ – Հեթանոսներ, Աստված չունիք, Բեհեղզեբուղին եք երկրպագություն տալիս:

ՍԱՂԱԹԵԼ – Է հե, էլի կրկնեցիր մեր հոր խոսքերը:

ԵՐԱՆՈՒՀԻ – Լույս գա նրա գերեզմանի վրա: Նա ասում էր փողը հնարված է սատանայի ձեռքով, որ մարդկանց գեհենը տանի:

ՍԱՂԱԹԵԼ – Ասում էր, որովհետև քահանա էր, իսկ մենք աշխարհականներ ենք, մե՞զ ինչ:

ԵՐԱՆՈՒՀԻ – Վախեցիր ահեղ դատաստանից, Սաղաթել: Մի պաշտիր փողը կուռքի պես:

ՍԱՂԱԹԵԼ – Քույր, Աստծու պատիժն էլ, վարձքն էլ այս աշխարհումն է: Ահեղ դատաստան-մատաստան չկա:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Զարհուրած) Կա, անհավատ, կա:

ՍԱՂԱԹԵԼ – Դե հը, կա թող լինի: Բայց հարցրու մեծ որդուդ, տես նա ինչ է ասում: Բանից դուրս է գալիս, որ մյուս կյանք ասածդ էլ անբախտ մարդիկ են հնարել՝ իրանց այրված սիրտը մխիթարելու համար: Որդիդ է ասում, լսո՞ւմ ես, ասում է՝ գիտության խոսքն է:

ԵՐԱՆՈՒՀԻ – Անիծվի ձեր գիտությունը:

ՍԱՂԱԹԵԼ – Ինչո՞ւ: Որ այն հոտած փիյի մոմի տեղ մեզ պայծառ էլեկտրական լո՞ւյս է տվել: Ասա խնդրեմ, երկաթուղի, շոգենավ, տելեգրաֆ, տելեֆոն, գրամոֆոն գիտությո՞ւնն է հնարել, թե քո տերտերները:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ջուր չեն ասում, թե տերտերի որդին անհավատ կլինի:

ՍԱՂԱԹԵԼ – Ախ, Երանուհի, դու մարդուցդ հիսուն տարի հետ ես մնացել: Խելքի եկ, բաց արա աչքերդ, տես ինչպես են ապրում մյուս հարուստների կանայք: Ուտում են, խմում, քեֆ անում, ամեն ամառ գնում են արտասահման, իսկ դու վախում ես... Ահեղ դատաստան: (Փոքրիկ պառուզա): Մի նոր բան էլ այն փոքր աղջիկդ է հնարել. – Մարգարիտը, ճշմարտություն: Երեկ սկսեց գլխիս ավետարան կարդալ, «Քեռի, մարդիկ պարտավոր են ճշմարտություններով ղեկավարվել»:

ԵՐԱՆՈՒՀԻ – Վատ բան է ասել, հա՞:

ՍԱՂԱԹԵԼ – Գիտես, սիրելիս, մեր հանգուցյալ հոր նման ճշմարիտ մարդ հազիվ թե լինի այս քաղաքում: Բայց ի՞նչ թողեց մեզ համար: Վերջին կոպեկի կարոտություն, սով: Մեռավ թե չէ, սկսեցինք սրան-նրան ձեռք պարզել: Դեռ փառք Աստծու, որ դու մի քիչ գեղեցիկ էիր, բախտը քեզ այս տունը գցեց; Ի՞նչ պիտի անեինք, եթե Էլիզբարովը քեզ հետ չամուսնանար: Հանգուցյալը մի արհեստ էլ չէր սովորեցրել ինձ: Ուզում էր, որ ես էլ տերտեր դառնամ, այսինքն՝ իր նման քաղցածի մեկը: Չէ, քույր, ոչ քեզ եմ հավանում, ոչ Մարգարիտին: Ապրել չգիտեք: Այ, մեծ աղջիկդ, քեֆս է գալիս, աշխարհի բերանն է պատռում: Տեսնո՞ւմ ես տուն ու տեղդ ինչպես է կարգի գցել, ինչ շիկ է բանեցնում: Դու իսկի նման չես միլիոնատերի կնոջ: Էհ, թողնենք, կարծեմ, Անդրեասի ձայնն է:

ՏԵՍԻԼ 5

ԵՐԱՆՈՒՀԻ, ՍԱՂԱԹԵԼ ԵՎ ԱՆԴՐԵԱՍ

ԱՆԴՐԵԱՍ – (Երևում է գրասենյակի դռների մեջ գլխարկով ու վերարկուով: Մի ոտը շեմքի վրա, խոսում է դեպի գրասենյակ): Ասացեք այդ մարդկանց, որ ես այստեղ չեմ: Գիտեմ ինչի համար են շնորհ բերել: Ճանապարհ դրեք: Հետո գրասենյակը փակեցեք, գնացեք ճաշելու: Դուք հարկավոր չեք: Իրիկունը շուտ եկեք: (Ներս է գալիս, դռները հետևից ծածկելով):

ՍԱՂԱԹԵԼ – Էլի ովքե՞ր էին:

ԱՆԴՐԵԱՍ – Ազգային ագռավներ: Փահ, կարծես, բարեգործական ընկերություն եմ բաց արել կամ իրենցից հիմար եմ, չգիտեմ ում է հարկավոր օգնել, ումը – ոչ: Հավաքվել են մի դյուժին անգործներ ու դոնե դուռ ընկել, թե ինչ է՝ «Աշխատանքի տան» համար փող ենք հավաքում: (Սաղաթելի օգնությամբ հանում է վերարկուն և գլխարկի ու ձեռնոցների հետ տալիս է նրան: Հագած է լայն և երկարավուն պիջակ, լայն վարտիք: Ժիլետի վրա ժամացույցի ոսկե շղթա, աջ ձեռքի մատի վրա ահագին ադամանդյա մատանի): Աշխատանքի տո՞ւնս որն է: Աշխատող մարդը ինքը գործ էլ կունենա, տուն էլ: Հավաքել են ծույլերին ու անպիտաններին, ձրի կերակրում են, թե ազգ ենք փրկում:

ՍԱՂԱԹԵԼ – Իմաստունի խոսքեր են: (Վերարկուն ու ձեռնափայտը տանում է նախասենյակ և իսկույն վերադառնում):

ԱՆԴՐԵԱՍ – (Նստում է իր գրասեղանի քով և այդ պահին տեսնում Երանուհուն) Աա, դու այստեղ ես: Էլի ի՞նչ ես ունքերդ կիտել: (Գրգռվելով) Մի սևացնի օրս, մի սևացնիր, առանց քեզ էլ սևացնողներ կան:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ու գողին մերժելը մեղք է:

ԱՆԴՐԵԱՍ – (Կծու հեգնությամբ) Հա, միլիոնատերի աղջիկ: Որ այդպես է, տուր էլի քո օժիտից կամ հորդ թողած ժառանգությունից, այ, այն մեծ-մեծ քարավաններից:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Վեր կենալով) Դու միշտ իմ հոր աղքատությունը երեսովս ես տալիս:

ԱՆԴՐԵԱՍ – Ախար, ինչ անեմ, նա էլ միշտ քարոզում էր. «բարություն արեք»: Ինքը չուներ, ուրիշներից էր պահանջում: Բարություն: Բարությո՞ւնս որն է: Մարդս անասուն է, ցեխի մեջ որ տեսնես, պետք է ոտով խփես, խորը գցես, ոչ թե ձեռքից բռնես բարձրացնես: (Սակավ լռություն: Տոնը փոխելով, Սաղաթելին): Չի՞ եկել այն տղան:

ՍԱՂԱԹԵԼ – Դեռ ոչ:

ԱՆԴՐԵԱՍ – Ի՞նչ ես ցցվել աչքիս առաջ: Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Հառաչելով) Ոչինչ,

ԱՆԴՐԵԱՍ – Փառք Աստուծո, կարծեցի էլի պիտի սկսես նախատել ինձ:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ես քեզ ե՞րբ եմ նախատել:

ԱՆԴՐԵԱՍ – Դո՞ւ: Դու երեսուն տարի է շարունակ նախատում ես ինձ: Ես քեզ լավ եմ ճանաչում, դու իմ առաջին թշնամին ես: (Վեր է կենում և սկսում անցուդարձ անել):

ԵՐԱՆՈՒՀԻ – Չեմ իմանում ինչով եմ քո թշնամին:

ԱՆԴՐԵԱՍ – Ինչո՞վ: Քո մտքերով: Դու երբեք իմ մասին լավ բան չես մտածել: (Լռություն) Ի՞նչ է խոսել քեզ հետ Օթարյանը:

ԵՐԱՆՈՒՀԻ – Արտաշե՞սը: Ոչինչ: Ինչ որ քեզ հետ է խոսում, նույնն էլ ինձ հետ:

ԱՆԴՐԵԱՍ – Ի՞նչ ես կարծում, նա ինչպիսի տղա է:

ԵՐԱՆՈՒՀԻ – Նա օրինավոր տղա է, շատ օրինավոր, համեստ, խելոք...

ԱՆԴՐԵԱՍ – Լավ, լավ, մի երկարացնիր, գովելդ ավելորդ է...

ԵՐԱՆՈՒՀԻ – (Հառաչում է):

ԱՆԴՐԵԱՍ – (Գրգռվելով) Լսիր, հազար անգամ ասել եմ, էլի եմ կրկնում, թող այդ հառաչանքներդ, ախ ու վախդ: Քո դեմքի վրա, աչքերիդ մեջ, ամեն խոսքիդ տակ ես զգում եմ նախատինք: Քո տխրությունն ինձ կատաղեցնում է: Ես շատ լավ գիտեմ, որ դու ստվերի պես հետևում ես ինձ, ծուռ եմ դնում ոտս, թե՞ ուղիղ, ումի՞ն գրկեցի, ումի՞ց ավելորդ վերցրի, ումի՞ն պակաս տվեցի: Թող ինձ հանգիստ, դու իմ խի՞ղճն ես ինչ է: Չի հարկավոր, կարոտություն չունիմ: Իմ մեջ խիղճ էլ կա, հոգի էլ, Աստված էլ...

ԵՐԱՆՈՒՀԻ – (Տարակուսանքով) Ոչինչ չեմ հասկանում ասածներիցդ...

ԱՆԴՐԵԱՍ – Ա, շատ լավ ես հասկանում: (Անհանգիստ նայելով ժամացույցին) Արդեն երկու ժամն է: Չեկավ այդ տղան:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Զսպելով իրեն) Տա՞նն ես ճաշելու:

ԱՆԴՐԵԱՍ – Իհարկե, ա՞յդ էլ հարց է:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Խորհրդավոր) Ո՞վ գիտե քո բանը:

ԱՆԴՐԵԱՍ – Այ, տեսնում ես, հենց այդ «ով գիտե» -ի տակ սատանան է նստած: Նախատինք, միշտ նախատինք: Օձի նման է կծում: Հեռացիր: Առավոտից դեռ շան պես անոթի եմ: Գնա, ճաշ պատրաստիր: Մի ման էլ Արտաշեսի համար

դիր: Ես նրան ճաշի եմ պահելու: Լավ վարվիր նրա հետ, այդ ինձ հարկավոր է: Բագրատը տանն է, ուղարկիր այստեղ: (Երանուհին գնում է ձախ դռնով):

ՏԵՍԻԼ 6

ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

ԱՆԴՐԵԱՍ – (Լռություն): Քույրդ ամեն բան գիտե: Պետք է աշխատել, որ նա գործը չփչացնի:

ՍԱՂԱԹԵԼ – Իսկ դու նրա հետ այնպես ես վարվում, որ ինքդ կարող ես փչացնել:

ԱՆԴՐԵԱՍ – Այդ ճշմարիտ է: Ես երբեմն չգիտեմ ինձ զսպել: Բայց ինչ անեմ, այսօր առավոտից դես գրգռված եմ: Մարդիկ սկսել են խոսել իմ մասին: Ա, ես գիտեմ, որ սև նախանձը նրանց հանգստություն չի տալիս: Անդրեյ Պետրովիչ Էլիզբարովի աստղը շատերի աչքն է ծակում: Տներս ու քարավաններս տանջում են մարդկանց: (Լռություն): Ծառայողները գնացի՞ն:

ՍԱՂԱԹԵԼ – (Գրասենյակի դռնից ներս նայելով): Գնացել են:

ԱՆԴՐԵԱՍ – (Խոսում է, կարծես ինքն իր հետ, անցուդարձ անելով): Փահ, Էլիզբարովի տների ու տափերի կեսն իմն է, ասում է, ոչ ավել, ոչ պակաս: (Լռություն): Ժամանակ-ժամանակ ինքս էլ մտածում եմ, կարելի է պարտական եմ: Բայց ինչպե՞ս աչքերս բաց վերցնեմ և ունեցածիս կեսը տամ նրան: Ի՞նչ կասեն մարդիկ: «Հորս հետ միասին ես առել տափերը»: Այո, ճշմարիտ է, բայց ե՞րբ:

ՍԱՂԱԹԵԼ – Նոյ Նահապետի ժամանակներում:

ԱՆԴՐԵԱՍ – Ճշմարիտ է, ընկերներ ենք եղել, բայց չէ որ փողն ես եմ աշխատել, ես, Անդրեաս Էլիզբարովս: Դալլաք Էլիզբարովի թոռը իր բոլոր կարողությունը, դիրքը, անունը, պատիվը ձեռք է բերել իր խելքով ու աշխատանքով: Տասնուհինգ տարի ծառայել եմ Մուսայել աղայի մոտ, տարել եմ նախատինք, թուքումուր: Շան կյանք եմ քաշել, վերջը սուտ-ղորթով մի քիչ փող եմ ձեռք բերել, դուրս եկել և այն ժամանակը ընկերացել Առաքել Օթարյանի հետ:

ՍԱՂԱԹԵԼ – Հե, երազի պես միտս է հին բազարում բախկալի դուքան ունեիք: Կանաչեղեն ու թթվեղեն էիք ծախում: Ջատիկ-ջրօրհնենքին էլ գնում էիք Սալիան, ձկնեղեն բերում ու ծախում:

ԱՆԴՐԵԱՍ – Խոսք չունիմ, Առաքելն էլ աչքաբաց էր: Բայց եթե նրա խելքով վարվեի, այսօր էլ դուքանչու մեկը կլինեի: Նա հոտառություն չուներ: Ես էի, որ անդադար ասում էի. «Առաքել, առնենք այդ էժան տափերից, հետո ոսկի են

դառնալու»: Սկսեցինք առնել ծովի ափերում հոտած ճահիճներ, աղբանոցներ, սաժենը հիսուն կոպեկից սկսած: Առաքելը չէր ուզում, առնողը ես էի, ուրեմն ես եմ աշխատել իմ հարստությունը, իմս է այն, միմիայն իմս: Իսկ այդ լակոտն եկել է ու ասում է, «Տուր ինձ կեսը»: Փահ, գժվել եմ, որ տամ: Եթե գժվել եմ, ինչո՞ւ չեն ինձ գժատուն տանում (Գրգռվում է): Համեցեք, այս էլ ձեզ բարեգործություն: Որդեգիր եմ վերցրել հոր հիշատակի համար, ուսում տվել, մարդ շինել, տարիներով պահել եմ մորն ու քույրերին, ի՞նչ է այսօր վարձս: - Քոռ ապերախտություն:

ՍԱՂԱԹԵԼ – Լավ, քիչ խառնիր արյունդ: Մի կերպ ռեխը կկապենք, կգնա:

ԱՆԴՐԵԱՍ – Իհարկե, պետք է ռեխը կապել: Ես խոմ չեմ կարող նրա հետ դատարան գալ; Կգցի ինձ մի թոկից փախած ադվակատի ձեռք, արի ու ազատվիր...

ՎԱՐԴԱՆ – (Ներս է մտնում նախասենյակից: Հագած է սև արխալուղ, դեղնագույն պիջակ արխալուղից կարճ, մեջքին արծաթյա գոտի: Խոսում է շատ անփույթ, Շամախու բարբառով) Ան Արտաշեսը եկալ ա, ուզում ա քեզ տեսնի:

ԱՆԴՐԵԱՍ – Խնդրիր: (Վարդանը հետ է գնում) Սաղաթել, դու անցկաց գրասենյակ, հետո կգաս:

ՍԱՂԱԹԵԼ – (Գնում է գրասենյակ, դռները ծածկելով):

ԱՆԴՐԵԱՍ – (Նստում է իր բազկաթոռի վրա, ուշքը ժողովելով և դեմքին սիրալիր արտահայտություն տալով):

ՏԵՍԻԼ 7

ԱՆԴՐԵԱՍ, ՕԹԱՐՅԱՆ, հետո ԲԱԳՐԱՏ, ավելի ուշ՝ ՍԱՂԱԹԵԼ

ՕԹԱՐՅԱՆ – (Ներս է մտնում նախասենյակից, հանդարտ և քաղաքավարի գլուխ է տալիս):

ԱՆԴՐԵԱՍ – (Սիրալիր) Բարով որդի: Այդ ի՞նչ է, դու մեզ մոռացե՞լ ես:

ՕԹԱՐՅԱՆ – (Սեղմելով Անդրեասի ձեռքը) Երեկ ձեր տանն էի:

ԱՆԴՐԵԱՍ – Հա՞, բաս ինձ չեն ասել: Նստիր, այսօր մեզ մոտ ես ճաշում: Մի քիչ խոսենք, հետո կանցնենք այն կողմ: Գործ ճարեցի՞ր:

ՕԹԱՐՅԱՆ – (Նստում է Անդրեասի գրասեղանի քով, երեսը դեպի հասարակություն) Այո, մի քանի մասնավոր դասեր:

ԲԱԳՐԱՏ – (Գալիս է ձախ դռնից, երկայն կոշիկներով և նավթի բծերով ծածկված պիջակով: Նկատելով Օթարյանին, թեթև ցնցվում է, սառը գլուխ է տալիս, նստում է ձախ գրասեղանի քով և անմիջապես սկսում է գործով զբաղվել – չափում է կարկինով, գծագրում: Միևնույն ժամանակ ուշադիր է դեպի խոսակցությունը):

ԱՆԴՐԵԱՍ – Դասեր: Այնքան ուսում ստանալուց հետո վարժապետությո՞ւն ես անում:

ՕԹԱՐՅԱՆ – Ի՞նչ արած, պարոն Անդրեաս, առայժմ ստիպված եմ:

ԱՆԴՐԵԱՍ – Բայց դրանով փոր չի կշտանալ, որդի, արի քեզ համար մի տեղ սարքենք մեր գործերում: Հը՞մ, ի՞նչ կասես Բագրատ, երևի, քո գործարանում մի պաշտոն կլինի: Իհարկե, հարմար պաշտոն...

ԲԱԳՐԱՏ – (Կտրուկ) Իմ գործարանը դեռ շուտ պատրաստ չի լինի:

ՕԹԱՐՅԱՆ – Շնորհակալ եմ, պարոն Անդրեաս, ես ծառայելու միտք չունիմ:

ԱՆԴՐԵԱՍ – Ամո՞թ ես համարում:

ՕԹԱՐՅԱՆ – Ոչ, կարծում եմ, որ կարիք չեմ ունենալ ծառայելու, իսկ եթե ունենամ էլ, համենայն դեպս, ձեր որդուն չեմ ծառայիլ:

ԱՆԴՐԵԱՍ – Ինչո՞ւ:

ԲԱԳՐԱՏ – (Կծու եղանակով, գործը չընդհատելով) Իդեալիստի ճերմակ փետուրները կարող են սևանալ բուրժուայի գործերում:

ՕԹԱՐՅԱՆ – (Զսպված) Միայն այն դեպքում, երբ այդ գործերը մրոտ են:

ԱՆԴՐԵԱՍ – Չեմ հասկանում, ինչո՞ւ եք այդպես գրգռված խոսում երկու ընկեր:

ԲԱԳՐԱՏ – (Հեգնորեն) Ընկեր, հը, ընկեր: Ոչ հայրիկ, մեր մեջ ընկերական ոչինչ չկա:

ԱՆԴՐԵԱՍ – (Հանդիմանությամբ) Բագրատ:

ԲԱԳՐԱՏ – (Մատիտն ու կարկինը ձգելով սեղանի վրա) Հայրիկ, ես կարծում եմ, որ ժամանակն է մեր հաշիվներն այդ պարոնի հետ պարզելու: Նա ինչ-որ պահանջներ ունի քեզանից:

ԱՆԴՐԵԱՍ – (Խիստ) Այդ քո գործը չէ: Դու բանիդ կաց:

ԲԱԳՐԱՏ – (Վեր կենալով) Ներիր, հայրիկ, ես չեմ կարող սառը վերաբերվել դեպի մի մարդ, որ ուզում է մեր անունը խայտառակել: Այն էլ մի այնպիսի մարդ, որ դեռ չի դուրս եկել մեր փողերով գնված հագուստից:

ՕԹԱՐՅԱՆ – (Հուզված վեր է կենում, բայց իսկույն ևեթ զսպում է իրան) Պարոն Անդրեաս, զսպեցեք ձեր որդուն: Ես չեմ կարող նրա հետ վեճի բռնվել այստեղ:

ԲԱԳՐԱՏ – Իսկ ես թույլ եմ տալիս ինձ պահանջել ձեզանից բացատրություն: Հայրիկը կարող է ձեզ հետ վարվել ինչպես կամենում է, իսկ մեր մեջ պետք է ամեն բան պարզվի հենց այժմ:

ԱՆԴՐԵԱՍ – (Գրգռված) Ասացի, որ այդ քո գործը չէ, մի խառնվիր:

ԲԱԳՐԱՏ – Բայց հայրիկ, իմ ինքնասիրությունը վիրավորված է: Ուստի թույլ տուր նրան մի քանի հարցեր առաջարկել: (Դառնում է Օթարյանին) Ես կկամենայի իմանալ, դուք բավարարվա՞ծ եք մեզանից, թե՞ ոչ:

ՕԹԱՐՅԱՆ – (Զսպված) Այո:

ԲԱԳՐԱՏ – Ո՞վ է ձեզ խնամել և բարձր ուսում տվել:

ՕԹԱՐՅԱՆ – (Զսպված) Ձեր հայրը:

ԲԱԳՐԱՏ – Ո՞վ է տարիներ շարունակ պահպանել և կերակրել ձեր մորն ու քույրերին:

ՕԹԱՐՅԱՆ – Ձեր հայրը:

ԲԱԳՐԱՏ – Եվ այդ բոլորը խոստովանելուց հետո հանդգնում եք լինել երեխտամո՞ռ: Եվ բոլորից հետո, դու, հայրիկ, պահանջում ես, որ ես սա՞ռը վերաբերվեմ այդ մարդուն:

ԱՆԴՐԵԱՍ – Ես ասում եմ, որ այդ քո գործը չէ: Դու ոչինչ չես հասկանում:

ՕԹԱՐՅԱՆ – (Բագրատին) Լսեցեք, պարոն, ձեզ հետ ես այսօր մտադիր չէի հաշվի նստելու, բայց, որովհետև ստիպում եք, կխոսեմ: Այո, ես Էլիզբարյանների խնամքով մեծացած մարդ եմ:Դուք ինը տարի պահել ու պահպանել եք ինձ, մորս ու քույրերիս: Բայց ինչպես - այդ միայն ինձ է հայտնի: Այն, ինչ որ ես եմ զգացել տարիների ընթացքում, չէի ցանկանալ զգալ ոչ մի ինքնասեր մարդու: Դուք ձեր ամեն մի կոպեկի մեջ թույն եք սրսկել և այնպես տվել ինձ...

ԱՆԴՐԵԱՍ – Պարտական մնամ, եթե արած լավություններս գոնե մի անգամ երեսովդ տված լինիմ:

ՕԹԱՐՅԱՆ – Բայց մի՞թե պիտի խոսեիք, որ ես զգայի իմ ողորմելի դրությունը: Այո, իմ վերաբերմամբ դուք արտաքուստ քաղաքավարի եք եղել: Բայց այն, ինչ որ խոսքերով չեք արտահայտել, արտահայտել եք ձևերով, աչք-ունքով, շարժումներով: Դուք ինձ ստորացրել եք իմ աչքում ամեն անգամ, խայթել եք իմ ինքնասիրությունը լուռ, ինչպես, ներեցեք ասել, մի կարիճ...

ԲԱԳՐԱՏ – (Հեգնորեն) Զարմանալի է, որ տարիներ շարունակ լռել եք և նոր եք միայն ձայն բարձրացնում:

ՕԹԱՐՅԱՆ – Ախ, լռել եմ, որովհետև խնամում էի մորս ու քույրերիս: Գիտեի, որ եթե ձայն բարձրացնեմ, պիտի զրկեք նրանց մի կտոր հացից: Ես մտածում էի այսպես. «Կքաշեմ մի կերպ այս վիրավորանքը և մի օր, բոլոր պարտքերս վճարելով Էլիզբարյաններին, կթեթևանամ հոգով»: Մայրս էլ է լռել: Բայց հարցրեք, ինչ լռություն է եղել այդ: (Անդրեասի կողմ) Ամսական քսանհինգ ռուբլի տալով քսանհինգ անգամ նախատել եք նրան. «Շատ ես ծախսում, ապրիր ներքնահարկում, կար արա ուրիշների համար, լվացք արա, թող աղջիկներդ աղախին մտնեն...»:

ԱՆԴՐԵԱՍ – (Անհամբեր) Տեր մեղա քեզ Աստված:

ՕԹԱՐՅԱՆ – Իսկ մի օր այնքան անգութ եք եղել, որ առաջարկել եք նրան աղքատանոց մտնել: Ձեր խոսքերն ասեղների պես խոթվել են խեղճ կնոջ սիրտը: Քույրերս այսօր էլ առանց արտասուքի չեն կարողանում հիշել այդ օրը: Եվ ինչո՞ւ, ո՞վ է եղել իմ մայրը: Չէ՞ որ ձեր հավասար ընկերոջ այրին: Մի կին, որ նույնչափ հարուստ է, որչափ դուք: Երբ նա արտասուքը աչքերին պատմում էր իր կրած վշտերը, այրունս պաղեց երակներիս մեջ: Ես անզորությունից սկսեցի մազերս փետտել, մատներս կրծոտել: Ես վրիժառության միջոցներ էի փնտրում, չէի գտնում: Եվ ահա այդ ժամանակ հենց մայրս ինքը հասավ ինձ օգնության...

ԱՆԴՐԵԱՍ – Եվ ասաց, որ ես կողոպտել եմ քո հորը, հա,հա,հա:

ԲԱԳՐԱՏ – Եվ զրպարտեց իր բարերարին սև ապերախտությամբ:

ՕԹԱՐՅԱՆ – (Ուշք չդարձնելով Բագրատի կողմ) Այո, պարոն: Նա հաղորդեց ինձ իմ հոր վերջին խոսքերը. «Ես մեռնում եմ աղքատության մեջ, ինձ կողոպտեց ընկերս: Ահա քեզ այս թղթերը, կհանձնես որդուս, երբ ուսումը կավարտի»:

ԱՆԴՐԵԱՍ – (Ցնցվելով) Թղթեր, ի՞նչ թղթեր:

ՕԹԱՐՅԱՆ – Մի քանի ընկերական պայմանագրեր, որոնք պիտի ապացուցեն, թե ձեր հարստության կեսն ինձ է պատկանում: Դուք օգտվելով իմ հոր ծանր և երկարատև հիվանդությունից, խաբել եք նրան օր-օրի վրա և ձեր անունով վերածել բոլորը, ինչ որ եղել է ընկերական:

ԱՆԴՐԵԱՍ – (Վրդովվելով) Այդ սուտ է: Ես ինչ որ ունիմ, օրենքով և նոտարական դոկումենտներով է հաստատված ինձ վրա:

ՕԹԱՐՅԱՆ – Այո, բայց առանց մի կոպեկ վճարելու: Դուք կարողացել եք խաբել նույնիսկ օրենքները: Ահա հենց այս բանը պիտի ապացուցանեն իմ հոր թղթերը:

ԲԱԳՐԱՏ – (Կատաղի) Դուրս այստեղից, ստախոս:

ՕԹԱՐՅԱՆ – (Հպարտ և կատաղի) Պարոն, խնայեցեք ձեր հորը...

ԱՆԴՐԵԱՍ – (Ձեռն ուժգին զարկելով սեղանին, ոտքի է կանգնում) Լռիր, ասում եմ, դու ինձ կատաղեցնում ես:

ՍԱՂԱԹԵԼ – (Ներս է մտնում):

ԲԱԳՐԱՏ – Բայց նա քեզ անպատվեց: Նա քեզ կողոպտիչ անվանեց:

ԱՆԴՐԵԱՍ – (Զսպում է իրան) Թող անվանի, ո՞վ է հավատացողը: Երեխա է, ոչինչ չի հասկանում, տաքանում է: (Դառնում է Օթարյանին): Որդի, այդ բոլորը, ինչ որ ասացիր, դատարկ բաներ են: Ես քեզ ներում եմ հոր պես: Խոսենք չափահասների նման: Գիտեմ, արյունդ եռ է գալիս, ապրել ես ուզում, բայց չունիս: Էհ, մտածել ես, մտածել ու այդ բանը հնարել...

ՕԹԱՐՅԱՆ – (Վրդովման նշան է անում):

ԱՆԴՐԵԱՍ – Մի տաքանար, որդի, խոսենք հանդարտ: Էհ, ինչ արած, շատ եմ օգնել հորդ հիշատակի համար, էլի կօգնեմ: Արի ստացիր ինձնից մի քանի հազար ռուբլի, թուղթ տուր, որ ինձանից պահանջ չունիս և ինձ էլ ազատիր գլխացավից:

ԲԱԳՐԱՏ – (Դրականապես) Երբեք: Ես թույլ չեմ տա մի կոպեկ անգամ տալ նրան:

ԱՆԴՐԵԱՍ – Մեղա քեզ Տեր Աստված, վերջապես, ձայնդ կտրելո՞ւ ես, թե՞ չէ:

ՍԱՂԱԹԵԼ – (Մի կողմից կամացուկ Բագրատին) Թող տա, դու չես հասկանում:

ԲԱԳՐԱՏ – (Չլսելով Սաղաթելին) Այդ անկարելի է: Փող առաջարկել այդ մարդուն, կնշանակե վախենալ նրանից: Թող դիմի դատարան, ես ինքս քեզ կպաշտպանեմ նրա զրպարտության դեմ, որովհետև համոզված եմ, որ նա քեզ զրպարտում է:

ՕԹԱՐՅԱՆ – Զգուշացեք, պարոն, այդ խոսքերը կարող են թանկ նստել ձեզ:

ԲԱԳՐԱՏ – Ա, թողեք այդ ֆրազները: Ես ձեր բարոյական ուժը լավ եմ ճանաչում և զուր չեմ միշտ ձեզ արհամարհել: Սակայն ինչու ավելորդ խոսքեր շռայլել, ահա կարճ կտրական իմ խոսքը, արեք, ինչ որ կարող եք, ես ձեր հակառակորդն եմ: (Շտապով իր գրասեղանից վերցնում է մի քանի թղթեր): Քեռի, ես գնում եմ գործարան: Պատվիրիր Զեյլմանին, որ խողովակները շուտով ուղարկի: Հայրիկ, ինձ ճաշի չսպասեք: (Արագությամբ հեռանում է նախասենյակի դռներով, ձգելով Օթարյանի վրա մի արհամարհական հայացք):

ՍԱՂԱԹԵԼ – (Մեկուսի) Աֆարիմ տղա, կրակի կտոր է:

ՏԵՍԻԼ 8

ԱՆԴՐԵԱՍ, ՕԹԱՐՅԱՆ, ՍԱՂԱԹԵԼ, հետո ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՆԴՐԵԱՍ – Տեսնում ես, որդի, էլի մենք, հին մարդիկս ավելի բարի ենք, քան դուք, նորերդ: Արի քարը փեշիցդ թափի, ստացիր երեք հազար ռուբլի, հաշտվենք:

ՕԹԱՐՅԱՆ – Էլ ուրիշ ասելիք չունի՞ք:

ԱՆԴՐԵԱՍ – Ուրեմն համաձա՞յն ես (Տալով Սաղաթելին սնդուկի բանալին) Սաղաթել. տուր ինձ չեկի տետրակը: Իսկ դու նստիր և մի թուղթ գրիր, որ ոչինչ պահանջ չունիս:

ՍԱՂԱԹԵԼ – (Բանալին առնելով, մոտենում է սնդուկին):

ՕԹԱՐՅԱՆ – Մնաք բարով:

ՍԱՂԱԹԵԼ – (Կանգ է առնում):

ԱՆԴՐԵԱՍ – Ո՞ւր: Սպասիր: Հաշիվը-հաշիվ, բարեկամությունը-բարեկամություն: Դու մեզ մոտ պիտի ճաշես:

ՕԹԱՐՅԱՆ – Մնացեք բարով:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դուրս է գալիս ձախ կողմի դռնից տնային համեստ հագուստով: Օթարյանին) Մայրիկը ձեզ հրավիրում է ճաշի:

ՕԹԱՐՅԱՆ – (Քայլերն ուղղելով դեպի նախասենյակ, կանգ է առնում):

ԱՆԴՐԵԱՍ – Տեսնում ես, քեզ ինչպես են սիրում այս տանը: Իսկ դու ուզում ես երես դարձնել մեզանից:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Զարմացած նայում է Օթարյանին) Երես դարձնել մեզանի՞ց, ինչո՞ւ:

ԱՆԴՐԵԱՍ – Ով գիտե, ինչ որ հակառակ քամի է փչել: Բայց դու նրան խելքի կբերես: Սաղաթել, մենք գնանք, Մարգարիտը, երևի, նրան կամաչացնի: (Օթարյանին) Դե, որդի, շատ սպասեցնել չտաս մեզ: (Գնում է Սաղաթելի հետ ձախ դռնով):

ՏԵՍԻԼ 9

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ՕԹԱՐՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏ – Այդ ի՞նչ է նշանակում: (Բռնում է նրա ձեռքը ջերմագին) Ինչո՞ւ այդպես այլայլված ես:

ՕԹԱՐՅԱՆ – Ոչինչ, դատարկ բան է:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ի՞նչ է պատահել, ինչու ճաշի չես մնում: Ի՞նչ են նշանակում հայրիկի խոսքերը. «Դու ուզում ես մեզանից երես դարձնել»: Ասա, ես համբերություն չունիմ:

ՕԹԱՐՅԱՆ – Եթե կարելի է, Մարգարիտ, այսօր ինձանից ոչինչ մի հարցնիլ:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Վշտացած, բաց է թողնում նրա ձեռքը) Շատ գեղեցիկ, չեմ հարցնիլ: Եթե կամենաս, ես քեզ չեմ էլ պահիլ, քանի որ քեզ համար ձանձրալի է մնալ:

ՕԹԱՐՅԱՆ – Ախ, Մարգարիտ, թող այդ երեխայական ձևերը, դու նման չես ուրիշ կանանց:

ՄԱՐԳԱՐԻՏ – Բայց դու ինձ հետ վարվում ես ինչպես մի երեխայի հետ, ո՞ւր են քո խոսքերը, թե միմյանց սիրող անձանց մեջ չպիտի լինի ոչ մի գաղտնիք: Այդպե՞ս ես կատարում երդումդ:

ՕԹԱՐՅԱՆ – (Շփոթված) Բայց կան գործեր, որոնց հետ դու չպիտի ծանոթանաս: Քո սիրտը դեռ շատ մանուկ է: (Նորից բռնում է նրա ձեռքը և ջերմ սեղմում):

ՄԱՐԳԱՐԻՏ – Իսկ ես կարծում էի, թե չկա գործ, որ քեզ վերաբերվի և ինձ ոչ: (Ձեռքը խլելով) Թող ինձ, դու ինձ վիրավորում ես: (Երեսը դարձնում է) Դա անգթություն է սիրող կնոջ վերեբերմամբ:

ՕԹԱՐՅԱՆ – Ի՞նչ արած, վիրավորված ինքնասիրությունն երբեմն անգութ է լինում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Վիրավորված ինքնասիրությո՞ւնը: Ո՞ւմ ինքնասիրությունն է վիրավորվել: Քո՞նը: Ո՞վ է վիրավորել: Հա՞յրս, թե՞ եղբայրս: (Դադար) Բայց դու լռում ես: Դու ինձանից դարձնո՞ւմ ես երեսդ: Բավական է, մի փորձիր համբերությունս: Ես ատում եմ կեղծիքը, հասկանո՞ւմ ես: Ասա պարզ և աներկյուղ, ի՞նչ է պատահել: Ա, հասկանում եմ: Դու խոսել ես հորս հետ իմ մասին, խնդրել ես նրա համաձայնությունը: Մերժել է... Բայց ոչ, ինչ եմ ասում: Հայրիկը սիրալիր էր դեպի քեզ: Վերջապես նրա մերժումը չի կարող քեզ վիրավորել, քանի որ ես սիրում եմ քեզ և իմ գլխի տերը միմիայն ես եմ: (Դադար) Սպասիր, իմ մեջ ծագեց ուրիշ կասկած: Դու նրա հետ խոսել ես իմ... Բայց ոչ, դու ընդունակ չես այդ տեսակ անվայել սակարկության: Վերջապես, ասելո՞ւ ես, թե ոչ:

ՕԹԱՐՅԱՆ – Դու բռնություն ես գործ դնում իմ կամքի վրա, Մարգարիտ: Կրկնում եմ, կան բաներ, որոնց հետ դու չպիտի ծանոթանաս:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Եռանդով) Ոչ, ասում եմ: Մազի չափ գաղտնիք չպիտի ունենաս ինձանից: Կամենում ես, այս պայմանով սիրիր ինձ, ոչ – կարող ես հեռանալ: Ուրիշ տեսակի փոխադարձ սեր ես չեմ ընդունում:

ՕԹԱՐՅԱՆ – (Մի վճռական շարժում անելով) Ահ, թող լինի, ինչ որ լինելու է: Միևնույն է, անհնարին է քեզանից թաքցնել:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Գրեթե շնչապատառ) Հապա՞, հապա:

ՕԹԱՐՅԱՆ – Ասա ինձ, Մարգարիտ, սիրո՞ւմ ես հորդ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ե՞ս, իմ հո՞րը: (Դրական և ջերմագին) Այո:

ՕԹԱՐՅԱՆ – Ոչ միայն իբրև զավակ, ոչ միայն արյունակցի սիրով, այլև գիտակցորոն:

ՄԱՐԳԱՐԻՏ – Չեմ հասկանում միտքդ:

ՕԹԱՐՅԱՆ – Ուզում եմ ասել, հարգո՞ւմ ես նրան ինպես մարդու:

ՄԱՐԳԱՐԻՏ – Անտարակույս: Չէ՞ որ իմ հայրն էլ մի մարդ է:

ՕԹԱՐՅԱՆ – Եվ ազնիվ մարդ, այնպես չէ՞:

ՄԱՐԳԱՐԻՏ – Անկասկած, իմ հայրն անազնիվ չէ:

ՕԹԱՐՅԱՆ – Համոզմունքո՞վ ես ասում այդ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Խորին համոզմունքով: Գոնե ինձ մինչև օրս հայտնի չէ նրա որևէ անազնիվ արարքը: Հարգում եմ ինչպես մի աշխատասեր և խելոք մարդու, որ երկար տարիների տառապանքով ապահովել է իր զավակների դրությունը: Նա ինքը տգետ լինելով, իր զավակների կրթության համար ոչինչ չի խնայել: (Դադար) Բայց ինչո՞ւ ես կասկածանքով նայում ինձ, միթե չե՞ս հավատում իմ անկեղծությանը:

ՕԹԱՐՅԱՆ – Եվ ո՞չ մի թերություն չես գտնում հորդ մեջ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ինչո՞ւ չէ: Նա փողասեր է, իր հաշիվների մեջ խիստ է, մտածում է միմիայն իր գործերի մասին: Բայց չէ՞ որ նրա շրջանի մարդիկ բոլորն էլ այդպես են: Համարել նրան անազնիվ, ոչ, անկարելի է:

ՕԹԱՐՅԱՆ – (Դադար) Ի՞նչ կանեիր, Մարգարիտ, եթե մի օր համոզվեիր, որ նա անազնիվ է:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դառնագին և զայրացած) Արտաշես...

ՕԹԱՐՅԱՆ – (Տաքանալով) Այո, այո, անազնիվ է գոնե իր անցյալում:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Նույն եղանակով) Արտաշես, մտածիր, ինչ ես ասում:

ՕԹԱՐՅԱՆ – Ասում եմ այն, ինչ որ գիտեմ: Քո հոր անցյալում կա մի սոսկալի հանցանք:

ՄԱՐԳԱՐԻՏ – Եվ ի՞նչ է այդ հանցանքը:

ՕԹԱՐՅԱՆ – (Ջերմ շեշտով) Մի անողորմ գրկողություն:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ցնցվելով) Ո՞ւմ է գրկել նա:

ՕԹԱՐՅԱՆ – Մի անտեր և անօգնական մնացած ընտանիք: Իր հավատարիմ ընկերոջ որբ զավակներին:

ՄԱՐԳԱՐԻՏ – Քե՞զ:

ՕԹԱՐՅԱՆ – Ինձ, մորս և քույրերիս...

ՄԱՐԳԱՐԻՏ – Ահ... (Թուլացած ընկնում է աթոռի վրա, ձեռներով երեսը ծածկելով):

Երկարատև լռություն:

ՕԹԱՐՅԱՆ – Դու ինքդ կամեցար իմանալ ճշմարտությունը:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ուշքը ժողովելով ոտքի է կանգնում) Ապացուցիր ասածդ: Լսո՞ւմ ես, ապա թե ոչ, դու չես կարող զրպարտել քո բարերարին: Դու նրան սիրում էիր և հարգում: Անշուշտ այստեղ մի թյուրիմացություն կա: Դու պետք է բացատրես բոլորը: Միևնույնն է, թող նա լինի իմ պաշտելի ծնողը, իսկ դու իմ երջանկությունը - երկուսիցդ ավելի ինձ համար թանկ է ճշմարտությունը:

ԶԱՐՈՒՀԻ – (Երևում է ձախ դռների մեջ) Ձեզ ճաշի են սպասում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Իսկույն:

ԶԱՐՈՒՀԻ – (Գնում է հետ):

ՕԹԱՐՅԱՆ – Համաձայնվիր, որ այլևս իրավունք չունիմ այս տունն այցելելու:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ոչ, ընդհակառակը, պետք է այցելես: Դու իմ սերը թունավորեցիր, դու էլ պարտավոր ես բժշկել այն: Այժմ կարող ես հեռանալ, բայց վաղը դու կտաս ինձ բացատրություն:

ՕԹԱՐՅԱՆ – (Գլուխ է տալիս և արագ քայլերով գնում է նախասենյակ):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Թույլ քայլերով գնում է դեպի ձախ, և կանգ առնելով, հենվում է դռներին) :

Վարագույրն իջնում է հանդարտ:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Էլիզբարյանների մեծ հյուրասենյակը, կահավորված շատ հարուստ, բայց առանց որոշ ճաշակի: Աջ պատի մեջ երկու դռներ, որոնցից խորքինը տանում է դեպի նախասենյակ, իսկ մյուսը՝ դեպի Անդրեասի սենյակը: Երկու դռների միջև գահավորակ, շուրջը բազկաթոռներ, առջևը կլոր սեղան մետաքսյա սփռոցով ծածկված: Վրան ճյուղավոր էլեկտրական լամպար:

Խորքում ևս երկու դռներ, որոնցից աջ կողմինը տանում է սեղանատուն, ձախ կողմինը – օրիորդների սենյակները: Ձախ պատի մեջ միայն մի դուռ, որ տանում է Բագրատի և Սուրենի սենյակները: Այս պատի առջև, դեպի բեմի խորքը գահավորակ, առջևը նույնպես կլոր սեղան, շուրջը կիսաբազկաթոռներ: Սեղանի վրա ալբոմ և գեղեցիկ իրեր:

Գահավորակի հետևում, պատի վրա հայելի ապակյա շրջանակով: Նույն պատի առջև դաշնամուր: Ոսկեզօծ աթոռներ, թանկագին թավշյա նստարաններ, բազմոցներ, վազաներ, կիսարձաններ, տրոպիկական բույսեր և այլն: Հատակը ծայրիծայր ծածկված է գորգերով: Դռները վարագուրված են ուրախ գույնի վարագույրներով: Առաստաղից քաշ է արած մի մեծ էլեկտրական ջահ շատ ճյուղերով:

Կեսօր է: Սեղանատան դռները բաց են: Այնտեղ երևում է Զարուհին, որ սփռոց է գցում ճաշի սեղանի վրա և ապա սկսում է նախաճաշ պատրաստել:

Վարագույրը բարձրանալուց մի քանի վայրկյան անցած սեղանատնից լսվում է պատի ժամացույցի տասներկու զարկը: Նախասենյակի դռներից մտնում է Վարդանը կարմիր չերքեզիով, գլխին մեծ սպիտակ մորթե գդակ: Նա բեռնավորված է զանազան թղթե կապոցներով և ձեռքին զգուշությամբ բռնած մի ահագին թղթարկղ, մեջը կանացի գլխարկ:

ՏԵՍԻԼ 1

ՎԱՐԴԱՆ ԵՎ ԶԱՐՈՒՀԻ

ՎԱՐԴԱՆ – Ուֆ Աստված վկա, հոգիս բողազս եկավ: (Սկսում է մեկ-մեկ կապոցները ձգել հատակի վրա: Թղթարկղը ձեռքից բաց չի թողնում: Երեսի քրտինքը սրբում է չերքեզկու փեշով և այդ միջոցին գդակը գցում է հատակի վրա):

ԶԱՐՈՒՀԻ – (Ներս է մտնում սեղանատնից, սուրճի գավաթն անձեռնոցիկով սրբելով) Հըմ, եկար: Այդ ի՞նչ շատ բաներ ես բերել:

ՎԱՐԴԱՆ – Ալ մագազին չը մնաց չըմտանք, ալ պեան չմնաց – չառնի: Իստեղ միտիկ արա ա, կասես մի յարմուրկա յանք սարքիլու:

ԶԱՐՈՒՀԻ – (Հետաքրքրված՝ գավաթն ու անձեռնոցիկը դրել է ոսկեզօծ աթոռներից մեկի վրա և կապոցները տնտղում է) Դերիացու, կոռժովներ, զոնթիկ, վեյեր, շալ, պերչաթկաներ մի դյուժին: Հապա տեսնեմ ինչպիսի գլխարկ է:

ՎԱՐԴԱՆ – (Թղթարկղը հեռու պահելով) Հե, հե, հեռի կաննիր, ասալ ա իսկի մարդի ցոյց չտաս: Բերանիդ ջուրը քի քինյա: Հեարյաս ինքն ալ կյամ ա:

ՏԵՍԻԼ 2

ՎԱՐԴԱՆ, ԶԱՐՈՒՀԻ ԵՎ ՌՈԶԱԼԻԱ

ՌՈԶԱԼԻԱ – (Ներս է մտնում նախասենյակից գլխարկով և վերարկուով) O, mon Dieu, հոգնեցի: Ման եկա, ման եկա, հազիվ կարողացա իմ ճաշակով մի քանի բաներ գտնել: Այն օրից, որ Փարիզը տեսել եմ, էլ այստեղ ոչ մի բան չեմ հավանում: (Վարդանին) Հիմար, ինչո՞ւ ես հատակի վրա գցել: (Զարուհի) Վերցրու, տար իմ սենյակը: Գլխարկը թող այստեղ: (Առնում է Վարդանից թղթարկղը և դնում սեղանի վրա):

ԶԱՐՈՒՀԻ – (Վարդանի օգնությամբ կապոցները տանում է խորքի ձախ դռներով և իսկույն վերադառնում են):

ՌՈԶԱԼԻԱ – (Մոտենում է հայելուն և հրճվանքով նայում իրան: Հետո վերցնում է իր գլխարկը և դնում սեղանի վրա):

ՎԱՐԴԱՆ – Ինսուն մանեթ... Վայ սատանա փռնողանց Վարդան, ինսուն մանեթով Շամախիում մի տուն կարելի ա շինել... Հալա կտուրն ալ դռած...

ՌՈԶԱԼԻԱ – (Առանց նրան նայելու) Դու դեռ այստե՞ղ ես:

ՎԱՐԴԱՆ – Հրամանիդ ամ սըպասում: Ալ պյան չե՞ս ասիլու:

ՌՈԶԱԼԻԱ – (Երեսը դարձնելով նրա կողմը) «Չես» ասիլու «Չե՞ս»-ը որն է, ես քո՞ւյրդ եմ, թե ընկերդ:

ՎԱՐԴԱՆ – Ա բալամ, դե մենք չոբան մարդ անք, հինչ իմանանք:

ՌՈԶԱԼԻԱ – Հիմա էլ «մենք»: Այդ ինչ տեսակի մարդիկ են, արքայական եղանակով են խոսում, ուրիշներին «դու», իսկ իրենց մասին «մենք»: Գնա Իվանին ասա, որ կառքն ինձ հարկավոր չէ: (Վարդանը շփոթված հեռանում է նախասենյակ, գդակը մոռանալով հատակի վրա: Զարուհուն) Ո՞վ կա տանը: (Նոր գլխարկը դնում է թղթարկղի մեջ):

ԶԱՐՈՒՀԻ – Տիրուհին և օրիորդը:

ՌՈԶԱԼԻԱ – Կանչիր այստեղ Ռիտային: Տար այս գլխարկը սենյակ:

ԶԱՐՈՒՀԻ – (Վերցնում է թղթարկղը և գնում օրիորդների սենյակները):

ՌՈԶԱԼԻԱ – (Հանում է վերարկուն, ձգում բազկաթոռներից մեկի վրա, նորից մոտենում է հայելուն և մազերն ուղղում:)

ՎԱՐԴԱՆ – (Հետ է գալիս նախասենյակից և հատակի վրա որոնում է գդակը): Աշի, հինչ տեղ կորավ անտերը:

ԶԱՐՈՒՀԻ – }

ՎԱՐԴԱՆ – } Սպասում են հրամանի:

ՌՈԶԱԼԻԱ – (Բաց է անում թղթարկղը, դուրս է բերում ահագին կարմիր փետուրով մի սպիտակ գլխարկ և հիացած նայում): Հապա մեկ էլ տեսնեմ լավ է սազում: (Դնում է գլխին և նայում հայելուն): Հը՛մ, օրիորդ Իլդարյանն ուզում էր ինձ հավատացնել, որ մոդելը միայն իր համար է բերված: Կարծեմ, վատ չէ, աա՞, Զարուհի:

ԶԱՐՈՒՀԻ – Ույ, օրիորդ, ինչպես է սազում, ինչպես:

ՎԱՐԴԱՆ – Կասես, նուռնի ծաղիկ իլի, յա լալազար:

ԶԱՐՈՒՀԻ – Ով գիտե, քսան մանեթ եք տվել...

ՌՈԶԱԼԻԱ – (Արհամարհանքով) Ֆիդոն, հիմա ամեն մի մակլերի աղջիկ էլ քսան մանեթանոց գլխարկ է հագնում: Փարիզից է բերել տված, արժե ինսուն ռուբլի:

ՌՈԶԱԼԻԱ – Այդ ի՞նչ ես փնտրում:

ԶԱՐՈՒՀԻ – (Վերադառնում է, վերցնում է Ռոզալիայի հին գլխարկն ու վերարկուն և տանում նախասենյակ):

ՎԱՐԴԱՆ – Շուլլահիս: Չամ իմանըմ հինչ տեղ թողի: (Գնում է): Հա, հեարեաս: (Վերցնում է): Այ քո տիրոջ վիզը կոտրվի հա: (Ձեռքով զարկում է գդակին):

ՌՈԶԱԼԻԱ – (Կատաղած): Ի՞նչ ես անում, վայրենի: Դուրս եկ, անկիրթ հայ:

ՎԱՐԴԱՆ – (Մեկուսի) Աշի, դրանց ղուլլուղ անիլը թամամ խաթաբալա ա յա քի... (Գնում է նախասենյակ):

ԶԱՐՈՒՀԻ – (Վերադառնում է նախասենյակից):

ՌՈԶԱԼԻԱ – Արի ու այդ տեսակ արջերից մարդ պատրաստիր: Իսկ ես դեռ ուզում եմ կաբրիոլետիս համար նրան ցիլինդր ու ֆրակ հագցնել: Չէ, պետք է այլազգի վարձել:

ԶԱՐՈՒՀԻ – (Վերցնում է սրճի գավաթն ու անձեռնոցիկը և անցնում է սեղանատուն):

ՏԵՍԻԼ 3

ՌՈԶԱԼԻԱ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ներս է մտնում հագնված համեստ, բայց ավելի լավ, քան առաջին արարվածում: Ձեռքին պահած է մի անկազմ գիրք: Չի կարդում):

ՌՈԶԱԼԻԱ – (Ծաղրելով) Իսկ և իսկ Մարգարիտտա - Ֆաուստ օպերայից, գրքույկը ձեռքումդ, համեստ, ամոթխած, պակասում է ճախարակը: Երանի գիտենայի, ինչ ես գտնում ընթերցանության մեջ: (Ձգվում է գահավորակի վրա):

ՄԱՐԳԱՐԻՏ – Որտե՞ղ էիր: (Գիրքը դնում է ձախ կողմի սեղանի վրա և նստում):

ՌՈԶԱԼԻԱ – Օհ, էլ մի հարցնի, հոգնեցի: Գլխարկս, վերջապես, ստացա: Հետո կտեսնես, ինչ հիանալի բան է: Այսօր ծախսեցի մոտ 300 ռուբլի: Հայրիկը բարկանալու է, բայց ինչ արած, բոլորը հարկավոր բաներ են:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ռոզալիա, մինչև ե՞րբ պիտի այդպես անհաշիվ շռայլես:

ՌՈԶԱԼԻԱ – Օհո, դու ինձ հանդիմանո՞ւմ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ – Եթե կամենաս - այո, քո շռայլությունն արժանի է հանդիմանության:

ՌՈԶԱԼԻԱ – (Հեգնաբար) Միթե, այ,այ,այ: Եթե նախանձում ես ինձ, ինքդ էլ կարող ես շռայլել: Ի՞նչն է քեզ խանգարում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Երևի, կա մի բան, որ խանգարում է:

ՌՈԶԱԼԻԱ – Օհո, այսօր դու բավական հետաքրքրական ես: Ապա, բարեհաճիր ասել, տեսնենք, էլի ի՞նչ է պատահել: Դեմքդ շատ խորհրդավոր է:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ռոզալիա, հասկացիր, վերջապես, ինչ է կատարվում այս տանը: Չի կարելի հանգիստ հոգով շռայլել այն փողերը, որոնց վրա ծանրանում է մի մեծ մեղադրանք: (Վեր է կենում):

ՌՈԶԱԼԻԱ – (Վեր է կենում արագությամբ) Բայց ո՞վ է այդ մեղադրանք դնողը: Ո՞վ: Քո Արտաշես Օթարյա՞նը: Մի կեղտոտ և անամոթ զրպարտի՞չ:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Մեղմ հանդիմանությամբ, բայց վրդովված) Ռոզալիա...

ՌՈԶԱԼԻԱ – Բավական է, մի համարձակվիր պաշտպանել նրան իմ մոտ: Քեզանից առաջ ես եմ ճանաչել նրան: Ես ատում եմ այդ մարդուն: Ատում եմ հոգուս բոլոր ուժով: Նա ապերախտ է, ինչպես օձ, որին մեր հայրը տաքացրել է իր ծոցում: Եվ ես զարմանում եմ, որ հայրիկը մինչև օրս նրան ցույց չի տվել մեր տան դռները:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Հառաչելով) Ով գիտե այդ այնքան էլ հեշտ չէ:

ՌՈԶԱԼԻԱ – (Կանգ առնելով և խիստ) Ռիտա, դու չափից անցնում ես: Դու պետք է շատ անպիտան աղջիկ լինես, որ հավատաս հարազատ ծնողիդ զրպարտողին:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Նույն եղանակով) Ախ, գուցե, շատ եմ փափագում չհավատալ, բայց...

ՌՈԶԱԼԻԱ – (Ընդհատելով) Բայց վախենում ես զրկվել նրա բարեհաճ ուշադրությունից, այնպես չէ՞:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ի՞նչ ես ուզում ասել: Որ սիրո՞ւմ եմ Օթարյանին: Այո, սիրում եմ և շատ եմ սիրում, թող այս հայտնի լինի քեզ և ամենքին: (Անցուդարձ է անում):

ՌՈԶԱԼԻԱ – (Ծաղրաբար, ատելությամբ ու նախանձով) Ինչ քաջն ես, իսկ և իսկ հերոսուհի: Ասենք, ես վաղուց գիտեի այդ: Բայց չէի երևակայում, թե սերդ այնքան թունդ է, որ պատրաստ ես հորդ պատիվն անգամ զոհել նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ – Միայն այն դեպքում, եթե այդ պատիվը մաքուր չէ:

ՌՈԶԱԼԻԱ – Ի՞նչ ես ուզում ասել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Այն, որ ես մի րոպե անգամ չէի տատանվի երես դարձնել Օթարյանից, եթե համոզվեի, որ նրա դատն արդար չէ: Այն, որ ես կսկսեի Աստծու պես պաշտել հայրիկին, եթե համոզվեի, որ նա անպարտ է իր ընկերոջ գերեզմանի առաջ: (Ընկճվելով, դառն ու մռայլ ձայնով): Հայրիկը մինչև օրս դեռ չի կարողացել հերքել Արտաշեսի պահանջը փաստերով: Մեր գերդաստանի գլխին կանգնած է մի սոսկալի հանցանք: Նա ճնշում է իմ հոգին արճիճի պես: Ես չգիտեմ գլուխս ամոթից ուր թաքցնեմ: (Նստում է բազկաթոռներից մեկի վրա և գլուխը դնում սեղանի վրա):

ՌՈԶԱԼԻԱ – (Տակավին ծաղրաբար) Իհարկե, բացի քեզանից ո՞վ ունի պատվի մասին հասկացողություն կամ գերդաստանական հպարտություն: Մենք ամենքս թեթևամիտներ ենք: (Լուրջ): Երկուսից մեկը, կամ դու խելագարվել ես, կամ

այդ մարդը մի հասարակ ինտրիգան չէ, այլ խարդախ դև: Ուրիշ կերպ չեմ կարող բացատրել քո այժմյան տրամադրությունը: (Թեթև լռությունից հետո, մոտենում է) Լսիր Ռիտա, ես իմ հոր հարազատ զավակն եմ, պատրաստ եմ սիրել ու պաշտպանել նրան, թեկուզ նա վերջին տեսակի ավազակ լինի: Եվ ահա իմ ասելիքը. – թող քո Օթարյանը ինչ ուզում է հնարի իմ հոր մասին, իսկ ես կաշխատեմ խայտառակությամբ դուրս վռնդել նրան մեր տնից: Հասկացա՞ր: Դու կարող ես կատաղել իմ դեմ, թշնամանալ ինձ, բայց այդ ոչինչ նշանակություն չի ունենա ինձ համար:(Հեռանում է):

ՄԱՐԳԱՐԻՏ – Ախ, թող ով ինչ ուզում է անի, ինձ համար միևնույն է: Ես կլսեմ միայն իմ խղճի ձայնին: Ես կարծում եմ, որ չի կարող լինել ոչ որդիական և ոչ մի ուրիշ սեր՝ ստի և խաբեբայության մեջ:

ԶԱՐՈՒՀԻ – (Սեղանատան դռներից) Նախաճաշը պատրաստ է:

ՌՈԶԱԼԻԱ – Գնանք: Հայրիկն իսկույն կգա: Դու պատրաստ ես քո հիմարությունները թաքցնել նրանից:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես ախորժակ չունեմ:

ՌՈԶԱԼԻԱ – (Ատելությամբ լի մի հայացք ձգելով Մարգարիտի վրա, անցնում է սեղանատուն):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Մնում է բեմի ձախ կողմում մտածմունքների մեջ):

ՏԵՍԻԼ 4

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԴՐԵԱՍ, ԲԱԳՐԱՏ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

Վերջին երեքը ներս են մտնում նախասենյակից:

ԱՆԴՐԵԱՍ – Մի հակառակիր ինձ: Ինչպես ասում եմ, այնպես էլ պետք է լինի: Կրակը յուղով չեն հանգցնիլ:

ԲԱԳՐԱՏ – Եթե միայն կրակ է: Դատը մենք կտանենք, քանի որ նա փաստեր չունի: Թող պահանջի օրենքով: Երբ քաղաքացիական դատը կվերջացնենք, մեր կողմից կսկսենք նրա դեմ քրեական դատ: Այս անհրաժեշտ է քո, իմ և մեր ամբողջ գերդաստանի պատվի համար:

ԱՆԴՐԵԱՍ – Որ վզովս թոկ գցես, նրա հետ դատի չեմ դուրս գալ:

ԲԱԳՐԱՏ – Հայր, մանուկ հասակիցս քեզնից անդադար լսել եմ, որ քո հարստությունը վաստակել ես արդար քրտինքով:

ԱՆԴՐԵԱՍ – (Գրգռվելով) Ասել եմ, էլի եմ ասում, բայց դու քիչ կրկնիր: Այդ տղան ինձ զրպարտում է, բայց ես էլի ուզում եմ նրա հետ հաշտվել:

ԲԱԳՐԱՏ – Չեմ հասկանում, բոլորովին չեմ հասկանում:

ԱՆԴՐԵԱՍ – Սաղաթել, գնա, գրասենյակից մի մարդ ուղարկիր, որ շուտով նրան կանչեն այստեղ:

ՍԱՂԱԹԵԼ – (Գնում է նախասենյակի դռնով):

ԱՆԴՐԵԱՍ – (Նոր միայն նկատում է Մարգարիտին, որ ամբողջ ժամանակ, կանգնած ձախ պատի տակ, ուշադիր դիտում է հորը): Ա, դու ակա՞նջ էիր դնում: Տեր Աստված, մի րոպե հանգստություն չունիմ: Կարծես, ամենքն երդվել են ինձ խելքից հանել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ներիր հայրիկ, ես հեռանում եմ:

ԱՆԴՐԵԱՍ – Լավ, դու էլ մի նեղանար: Ես մեղավոր չեմ, եղբայրդ է ինձ կատաղեցնում: Բայց ոչ դու էլ պակաս չես, դու էլ մորդ պես ինձ չես սիրում, դու ատում ես ինձ:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Անչափ վշտացած) Հայրիկ...

ԵՐԱՆՈՒՀԻ – }

ՌՈԶԱԼԻԱ – } Երևում են սեղանատան դռների մեջ:

ՏԵՍԻԼ 5

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԴՐԵԱՍ, ԲԱԳՐԱՏ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՎ ՌՈԶԱԼԻԱ

ԱՆԴՐԵԱՍ – Կորիր, ես քո հայրը չեմ, դու խորթ ես ինձ համար: Ես այս տանն օտար եմ, օտար, իմ մասին մտածող չկա: Ես ձեր աչքում մի համբալ եմ, ուրիշ ոչինչ...

ՌՈԶԱԼԻԱ – Գոնե իմ մասին, հայրիկ, իրավունք չունիս այդ ասելու: (Առաջ է գալիս):

ԱՆԴՐԵԱՍ – Ա, եկան, հավաքվեցին: Գնա, քեզ էլ եմ ճանաչում: Դու այն ժամանակ ես մտածում իմ մասին, երբ հարկավոր է պարտքերդ վճարել մագազիններին: Դուք ինձ կերաք, քանդեցիք (Հետզհետե ավելի ու ավելի գրգռվելով): Ես ոչ ոքի համար մարդ չեմ, ոչ ուրիշների, ոչ իմ տնեցիների: Ամենքն ինձ համարում են ոսկու տոպրակ, ուրիշ ոչինչ: Հարգում են երեսանց, իսկ հետևից

չարախոսում են: Երբ կարիք ունին, վազում են գալիս, երբ չունին - ես չկամ նրանց համար:

ԲԱԳՐԱՏ – Պետք է խոստովանել, որ այդ մասամբ ճիշտ է:

ԱՆԴՐԵԱՍ – Ճիշտ է, բաս չէ: Հո, ես հիմար չեմ, ճանաչում եմ մարդկանց հոգին: Ամենքն իրենց գլխի մասին են մտածում: Հենց մեկը դու ինքդ: Սուտ է, դու էլ ինձ չես սիրում, դու էլ ինձ փողի համար ես պատվում: Այո, այո, ես մարդ չեմ քեզ համար, այլ փողի սնդուկ: Բայց երկար խաբել չես կարող: Էլ ոչ մի կոպեկ չեմ տալու:

ԲԱԳՐԱՏ – Հայրիկ հանգստացիր:

ԱՆԴՐԵԱՍ – Այո, չեմ տալու, թող գործարանդ կիսատ մնա: Ի՞նձ ինչ: Ես իմ հորից փող ստացե՞լ եմ, որ դու ինձ պլոկում ես, ա՞: Թուք ու մուրով, զրկանքներով, քաղցած փորով եմ ես մարդ դարձել: Գնա ինքդ էլ արյուն քրտինք թափիր, այն ժամանակ կասեմ խելոք ես: Ամենքդ գնացեք, ձեր աշխատանքով ապրեք: Այստեղ մտիկ արեք, տեսեք ինչ տուն ու տեղ եմ սարքել: Ինչի՞ս է հարկավոր այս ոսկեզօծ կահկարասին: Ո՞վ եմ ես, ո՞ր խանի կամ իշխանի տղան: Մի նախկին գյադա, պանիր ու հացով ապրած լակոտ: Ինչո՞ւ եք ինձ քանդում: Դուք եք մեղավոր, որ Օթարյանը կպել է յախիցս: Այո, այո, դուք: Նա տեսնում է, որ դուք տակնուվրա եք անում իմ հարստությունը, ուզում է ինքն էլ ձեզ պես շռայլել: Դուք ինձ համար թշնամիներ եք ստեղծում...

ՄԱՐԳԱՐԻՏ – (Հանդարտ լալիս է):

ԱՆԴՐԵԱՍ – Լաց, էլի արտասուք: Հոգիս բերանս բերիք, խեղդեցիք, սպանեցիք: Հերիք է, հեռացիր, ես ատելով ատում եմ արտասուքը: Անդրեաս Էլիզբարովի մոտ ոչ լաց եղեք, ոչ ծիծաղեցեք:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Բարձր ձայնով հեկեկալով, անցնում է իր սենյակը):

ԵՐԱՆՈՒՀԻ – Ինչպես սիրտ արաիր նրան վիրավորելու: Նա Աստծու գառն է:

ԱՆԴՐԵԱՍ – Աստծու գառը, հորդ պես: Ես ատելով ատում եմ Աստծու գառներին: Տվեք ինձ սադայելին, ես նրա հետ ավելի հեշտությամբ կհաշտվեմ, քան Աստծու գառների հետ: Գնացեք, ի՞նչ եք ագռավների պես գլխիս հավաքվել, ինձ խոմ չեք թաղում, ինձ ուզում են միայն կողոպտել, տկլորել, փողոցները ձգել: Գոնե դուք խնայեցեք ինձ: Դեհ, կորեք, հայդա: (Նստում է աջ կողմի բազկաթոռներից մեկի վրա):

ԵՐԱՆՈՒՀԻ – } Անցնում են սեղանատուն

ԲԱԳՐԱՏ – }

ՌՈԶԱԼԻԱ – } (Մնում է բեմի վրա):

ՏԵՍԻԼ 6

ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՌՈԶԱԼԻԱ

ԱՆԴՐԵԱՍ – (Նստած է խորին մտածողության մեջ և տանջվում է):

ՌՈԶԱԼԻԱ – (Ուզում է մոտենալ ու խոսել, բայց չի վստահանում):

ԱՆԴՐԵԱՍ – (Հառաչում է, ձեռը զարնելով սեղանին): Ահ...

ՌՈԶԱԼԻԱ – Հայրիկ, ի՞նչն է քեզ այդպես տանջում:

ԱՆԴՐԵԱՍ – (Գլուխը բարձրացնելով, անտարբեր) Քո բանը չէ:

ՌՈԶԱԼԻԱ – Ներիր, հայրիկ, քո հոգսերը վերաբերում են և քո զավակներին:

ԱՆԴՐԵԱՍ – (Դարձյալ անտարբեր): Ես հոգս չունեմ: (Ներվային արագությամբ ոտքի կանգնելով): Բան ունի՞ս ասելու:

ՌՈԶԱԼԻԱ – Այո, հայրիկ, ունիմ, բայց չեմ համարձակվում:

ԱՆԴՐԵԱՍ – Դեհ, կարճ կապիր, ես գնում եմ:

ՌՈԶԱԼԻԱ – Գիտես ինչ, հայրիկ, այն մարդը, որ մոռացել է քո բարերարությունը և ուզում է քեզ կողոպտել, այստեղ մեր տանը զինակից ունի:

ԱՆԴՐԵԱՍ – (Հետաքրքրված) Ա՞, ի՞նչ, պարզ ասա:

ՌՈԶԱԼԻԱ – Մարգարիտը սիրահարված է Օթարյանի վրա:

ԱՆԴՐԵԱՍ – Ի՞նչ, սիրահարվա՞ծ: Ո՞վ ասաց քեզ:

ՌՈԶԱԼԻԱ – Հենց ինքը Մարգարիտը, սրանից մի կես ժամ առաջ:

ԱՆԴՐԵԱՍ – Հետո՞: Նա էլ սիրում է Մարգարիտին:

ՌՈԶԱԼԻԱ – Պետք է կարծել, թեև այն տեսակ մարդու հավատալ չի կարելի:

ԱՆԴՐԵԱՍ – (Մի քանի վայրկյան մտածում է, հանկարծ դեմքը պայծառանում է ուրախությունից): Ասում ես, ինքը, Մարգարի՞տը խոստովանեց:

ՌՈԶԱԼԻԱ – Այո, հայրիկ: Ես գիտեմ, որ նրանք ամեն օր տեսակցություն ունեն դրսերում: Հայրիկ, ես պարտք համարեցի քեզ զգուշացնել այդ մասին: Կարծում եմ, մեր գերդաստանի պատիվը պահանջում է այդ սերը խափանել հենց այժմյանից: Ճշմարիտ է, Մարգարիտը մի առանձին արժանավորություն չունի, բայց ինչ էլ լինի, քո աղջիկն է: Օթարյանը արժանի չէ քո փեսան դառնալու:

ԱՆԴՐԵԱՍ – (Շարունակ մտածելով) Իհարկե, իհարկե: Շնորհակալ եմ, որ ինձ զգուշացրիր: Գնա, իսկույն Մարգարիտին կանչիր այստեղ:

ՌՈԶԱԼԻԱ – Բայց, հայրիկ, շատ էլ չբարկանաս նրա վրա: Հիմար է, չի հասկանում:

ԱՆԴՐԵԱՍ – (Անհամբեր) Գնա, նրան կանչիր այստեղ:

ՌՈԶԱԼԻԱ – (Մեկուսի) Տեսնենք, ինչպես պիտի պաշտպանես սիրեկանիդ: (Գնում է խորքի ձախ դռներով):

ՏԵՍԻԼ 7

ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՆԴՐԵԱՍ – Մինչև Մարգարիտի գալը, մտազբաղ անցուդարձ է անում, զանազան շարժումներով իր միտքն արտահայտվելով:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դուրս է գալիս խորքի դռներից հանդարտ քայլերով):

ՌՈԶԱԼԻԱ – (Դուրս է գալիս անմիջապես քրոջ հետևից, քանի մի վայրկյան կանգ է առնում, նայում է և անցնում սեղանատուն, դռները ծածկելով):

ԱՆԴՐԵԱՍ – Առաջ եկ, լալկան աղջիկ: Հայրը որդու վրա չի՞ կարող բարկանալ, ինչ է: Հե՞, բաս ի՞նչ կանեիք դուք, երես առածներ, եթե մեր ծնողների պես ծնողներ ունենայիք: Հայրս վզակոթիս որ տալիս էր - աչքերիցս պեծեր էին թռչում; Դե լավ, բաց արա աչքունքդ, ծնողի դեմ ոխ չեն պահիլ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, ես քո դեմ ոխ չունիմ:

ԱՆԴՐԵԱՍ – Այ, օրհնյալ լինես, աղջիկս: Ես գիտեմ, որ դու բարի սիրտ ունիս, դեհ, արի հաշտվենք: (Մոտենում է ճակատը համբուրում): Բայց ես էլի քեզ վրա բարկացած եմ: Գիտես ինչ, աղջիկս, դու հորդ հետ անկեղծ չես:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Զարմացած նայում է հորը): Անկեղծ...

ԱՆԴՐԵԱՍ – Ինչո՞ւ ես զարմանում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայր, առաջին անգամն եմ ես քեզանից այդպիսի բան լսում: Դու երբեք ինչ արժանի չես համարել այդ տեսակ խոսակցության:

ԱՆԴՐԵԱՍ – Որովհետև դու ինքդ քեզ հեռու ես պահում ինձանից: Դու, երևի, մտածում ես, էհ, իմ հայրը մի տգետ և խորամանկ վաճառական է, չարժե, որ սիրտս բաց անեմ նրա առաջ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ոչ, հայրիկ, սխալվում ես, հավատացնում եմ քեզ: Ես միշտ պատրաստ եմ եղել քեզ հայտնել իմ բոլոր մտածմունքները, ամենայն անկեղծությամբ, միայն թե արժանի համարեիր ինձ լսելու: Բայց դու... դու միշտ սանձահարել ես իմ լեզուն քո մռայլ բնավորությամբ:

ԱՆԴՐԵԱՍ – (Ուրախ ձևանալով): Այո՞: Ապրես զավակս: Դե, որ այդպես է, ասա ինձ, ինչո՞ւ այս քանի օրերս տխուր ես:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Շփոթվելով) Չգիտեմ... ես... տխուր չեմ:

ԱՆԴՐԵԱՍ – Այ, տեսա՞ր: Դու կեղծել չես սիրում, բայց հիմա կեղծեցիր: Ուզո՞ւմ ես, որ քո տեղ ես պատասխանեմ: Դու տխուր ես, որովհետև վերջերս քեզ հավատացրել են, թե քո հայրն ազնիվ մարդ չէ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ...

ԱՆԴՐԵԱՍ – Այո, սիրելիս, դու ինձանից թաքցնել չես կարող: Ես մարդու մի շարժումից կարող եմ իմանալ. թե նա ինչ է մտածում իմ մասին: Հապա, պատմիր, տեսնեմ, ինչեր է ասել քեզ իմ մասին քո սիրած երիտասարդը...

ՄԱՐԳԱՐԻՏ – (Բոլորովին շփոթվում է ու կարմրում):

ԱՆԴՐԵԱՍ – Լավ, մի ամաչիր: Բոլորը հայտնի է ինձ: Մի վախենար, չեմ բարկանում: Միայն աղջիկս, նա դեռ երեխա է, չի հասկանում իր արածը: Նա իմ բարերարությունները մոռանում է: Էհ, տերը նրա հետ, երևի մի օր խելքի կգա, կտեսնի, որ սխալված է:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ուրախանալով և, միևնույն ժամանակ, դեռ կասկածելով): Այո՞, սխալվա՞ծ է քո մասին:

ԱՆԴՐԵԱՍ – Իհարկե, բաս ի՞նչ էիր կարծում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, ինչու թաքցնեմ, ես երբեք չեմ կասկածել ոչ քո անցյալի և ոչ ներկայի ազնվության մասին: Բայց նա ինձ համոզում է, որ...

ԱՆԴՐԵԱՍ – Որ ես կողոպտել եմ նրա հորը, այնպես չէ՞: Բայց ինչո՞վ է համոզում, խոսքերո՞վ, թե փաստերով:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, ոչ քեզանից կարող եմ փաստ պահանջել, ոչ նրանից:

ԱՆԴՐԵԱՍ – Բայց առանց փաստերի կարող ես ծնողիդ դատապարտել, հա՞: (Կեղծ վշտանալով) Ամոթ քեզ, Մարգարիտ, ամոթ: Դու ինձ ապտակ ես տալիս...

ՄԱՐԳԱՐԻՏ – (Վշտահար և ամոթահար) Հայր...

ԱՆԴՐԵԱՍ – (Տակավին վշտացած ձևանալով) Ահ, թող ինձ, ես ինչ հայր եմ, երբ հարազատ աղջիկս, ուրիշների դատարկ խոսքերով, ինձ համարում է գող, ավազակ: Թող ինձ, գնա նրա հետևից: Նա է քեզ համար թանկ, իսկ ես ո՞վ եմ, ի՞նչ եմ: Ոչինչ, ցեխի կտոր:

ՄԱՐԳԱՐԻՏ – Դու ունիս իրավունք ինձ նախատելու, հայր, ես շտապել եմ եզրակացություն անելու: Ներիր ինձ, աղաչում եմ:

ԱՆԴՐԵԱՍ – Ներումն խնդրելուց ի՞նչ օգուտ, դու պետք է աշխատես մեղքդ քավել, սխալդ ուղղել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Բայց ինչպե՞ս հայրիկ, ի՞նչ միջոցով, սովորեցրու, ես կքավեմ իմ մեղքերը:

ԱՆԴՐԵԱՍ – Այ ինչպես: Լսիր: Նա ասում է, թե իր ձեռքում ունի ինչ-որ գրավոր ապացույցներ իմ դեմ: Դու... (Նայելով շուրջը): Բայց այստեղ անհարմար է ասել: Կարծեմ գալիս են: Գնանք իմ սենյակը, այնտեղ կբացատրեմ ինչ որ հարկավոր է: Գնանք: (Գնում են աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 8

ՍՈՒՐԵՆ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

ՍՈՒՐԵՆ – Այո, քեռի, երևակայել չես կարող ինչքան ծիծաղելի էր: Աբուլովտ, քաղաքի առաջին քեֆ անողն և ամենից շատ ծախսողը, հանկարծ մնում է թատրոնի դռների մոտ քիթը քաշ: Իսկ քո քրոջ որդին բռնում է գեղեցկուհի Աղլովայի թևից և կառք նստեցնում:

ՍԱՂԱԹԵԼ – Ամոթ չլինի հարցնել - այդ ի՞նչ պարծենալու բան է:

ՍՈՒՐԵՆ – (Ոգևորված շարունակելով) Ամենքի ուշադրությունը մեզ վրա է, բոլորը նայում են նախանձով: Աբուլովի աչքերից կրակ է թափվում: Կրակոտ Ալի-

Բաբան կառքը թոցնում է, մեզ կայծակի արագությամբ բերում է Գրանդ-հոթել: Ծառաները ձեռքի ոտքի են ընկել: Սեղանը պատրաստ է: Հյուրերը սպասում են...

ՍԱՂԱԹԵԼ –Ամոթ չլինի հարցնել – ի՞նչ հյուրեր:

ՍՈՒՐԵՆ – Ինձ նման դարդիմանները: Մեզ ծափահարում են: Կառքից ծառաները բերում են թատրոնում ստացված փունջերը – կեսն իմ նվիրածն է: Առլովան հիացած է նվերներից: Երբեք այդպիսի բենեֆիս չի ունեցել: Հետո ինչ քեֆ, ինչ քեֆ: Շամպանիան ջրի պես է հոսում: Խմում են Առլովայի կենացը, հետո իմը: Մեկ, երկու, երեք, հանկարծ ես սեղանի տակ եմ: Կծում եմ Առլովայի ոտը: Նա ծիծաղելով ու ծվվալով, նայում է ներքև: Ոտքի եմ կանգնում գեղեցկուհու կոշիկը ձեռքիս լցնում եմ շամպանիայով և խմում եմ նրա կենացը: Ոգևորությունն անասելի է: Առլովան սքանչացած է, ասում է, առաջին անգամն եմ տեսնում ձեզ նման երկրպագու գեղարվեստի: Այ շարմանտ մերվեյլ... Կին չէ, այլ դիցուհի... (Ձեռը զարկելով Սաղաթելի ուսին) Այժմ, քեռի, նրա սիրտն իմն է ամբողջովին: (Ձեռքը զարկելով Սաղաթելի փորին): Կկամենա՞ս, ծանոթացնեմ, ասա, առաքինի Բաղդասար...

ՍԱՂԱԹԵԼ – Գնա բանիդ: Դու ինձ այն ասա, ի՞նչ նստեց այդ քեֆը:

ՍՈՒՐԵՆ – Հավանաբար, ոչինչ, դատարկ բան – վեց հարյուր ռուբլի:

ՍԱՂԱԹԵԼ – (Զարմանալուց հետ թոչելով) Փահ, քո տունը չքանդվի, օղուլ...

ՍՈՒՐԵՆ – Կծեց, հա՞:

ՍԱՂԱԹԵԼ – Վեց հարյուր մանեթ, մի գիշերում: Դե լավ, ամոթ չլինի հարցնելը - ե՞րբ ես վեքսելներս այնա անելու:

ՍՈՒՐԵՆ – Երբ որ պայմանավորված ժամանակը կգա, այնա կանեմ:

ՍԱՂԱԹԵԼ – Ես պետք է սպասեմ քո հոր մահվա՞ն:

ՍՈՒՐԵՆ – Այո, ի՞նչ արած:

ՍԱՂԱԹԵԼ – Բայց նա ինձանից առողջ է, կարող է ինձ նման տասին թաղել:

ՍՈՒՐԵՆ – Ես ինչ անեմ, դու ինքդ ես ինձ սովորեցրել: Տալիս ես 300, ստանում ես երկու հազարի վեքսել, որ հորս մահից հետո վճարեմ, (Լռություն): Ախ, քեռի, գլուխս սկսեց ցավել: Տրամադրությունս փչացավ: Ամեն անգամ այդ տեսակ մեծ քեֆից հետո կյանքն ինձ թվում է հիմար, ձանձրալի բան: (Նկատելով Երանուհուն, Ռոզալիային և Բագրատին) Ահա գալիս է ընտանեկան իդիլիան:

ՏԵՍԻԼ 9

ՍՈՒՐԵՆ, ՍԱՂԱԹԵԼ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՌՈԶԱԼԻԱ ԵՎ ԲԱԳՐԱՏ

Դուրս են գալիս սեղանատնից:

ԵՐԱՆՈՒՀԻ –Սաղաթել, Զարուհուն հրամայիր, որ քեզ նախաճաշ տա:

ՍԱՂԱԹԵԼ – (Անմիջապես անցնում է սեղանատուն):

ԵՐԱՆՈՒՀԻ – (Սուրենին): Իսկ քեզ ասելն ավելորդ է, դու, երևի, կուշտ ես:

ՍՈՒՐԵՆ – Մախոխ լիներ, ուրախությամբ մի ասան կուտեի:

ԵՐԱՆՈՒՀԻ – Որտեղ էիր ամբողջ գիշեր:

ՍՈՒՐԵՆ – Աստղագիտությամբ էի զբաղված, մամա: Այժմ աստղերն երկնքից իջել են օպերետային թատրոն:

ԲԱԳՐԱՏ – Ամաչելո՞ւ ես մի օր, թե՞ չէ: Ի՞նչ իրավունքով ես Դիլբարյաններից ստացել բնակարանի վարձը և ծախսել:

ՍՈՒՐԵՆ – Հարգելի ինժեներ-տեխնոլոգ, կարծեմ, ես նույնպես իմ հոր հարազատ որդին եմ, ինչպես դու:

ԲԱԳՐԱՏ – Դու ապականեցիր մեր ընտանիքի անունը:

ՍՈՒՐԵՆ – Դեռ հարց է, ե՞ս, թե՞ դու, պարոն Գեշեֆտմախեր: Ես կեղտը փչացնում եմ, իսկ դու պաշտում ես: Էհ, բերանս բաց մի անեք, թե չէ - լեզուս չար է:

ՌՈԶԱԼԻԱ – Գիտեմ, ինչ է քո չար լեզուն: Մայրիկ, երեկ նա ինձ անվանեց աղվեսի պոչ:

ՍՈՒՐԵՆ – Իսկ այսօր կանվանեմ մարքիզուհի Դալլաքյան, ի՞նչ էիր այսօր ուռել ու փքվել կարեթում: Ուղղակի ծիծաղելի էր: Այն կարտոֆիլի տոպրակ Վարդանին էլ կարմիր չերքեզի է հագցրել ու առաջքը նստացրել: Հերիք չէ, որ անունդ Գյուլում է, փոխել ես Ռոզալիայի, հիմա էլ իշխանուհու շիկ ես բանեցնում: Հե, դալլաք Էլիզբարի թոռն: Թողեք, Աստված սիրեք, ամենքդ ինձ համար ծիծաղելի եք, բացի խղճալի մայրիկից:

ՄԱՐԳԱՐԻՏ – Դուրս է գալիս հոր սենյակից:

ՍՈՒՐԵՆ – Եթե ձեր մեջ կա մեկը, որ կարող է ինձ նախատել, ահա սա է: (Ցույց է տալիս Մարգարիտին):

ՏԵՍԻԼ 10

ՍՈՒՐԵՆ, ՍԱՂԱԹԵԼ, ԵՐԱՆՈՒՀԻ, ՌՈԶԱԼԻԱ, ԲԱԳՐԱՏ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ

ՌՈԶԱԼԻԱ – Ինչ ասել կուզի, երևելի ռեկոմենդասիոն է:

ՍՈՒՐԵՆ – (Կծու) Համենայն դեպս, արժե Օթարյանի համակրանքից զրկվելուն:

ՌՈԶԱԼԻԱ – Մայրիկ զսպիր նրան: Նա ինձ վիրավորում է: (Սուրենին): Սուտ է, նա ինքն է զրկվել իմ համակրանքից:

ՍՈՒՐԵՆ – Այո, այն օրից, երբ զգացել ես, որ դու չես նրա հավանելին: Իսկ առա՞ջ, երբ ուսանող է՞ր: Քիչ էր մնում նրա անունով մոմ վառեիր: Այս այնքան ճիշտ է, որքան այն, որ այս րոպեիս իմ գրպաններում մեծ օդափոխանակություն կա: (Դադար) Որտե՞ղ է Հայրիկը:

ԲԱԳՐԱՏ – Քո բանը չէ:

ՍՈՒՐԵՆ – Հե, թաքցրեք ինձանից, բայց ես ամեն բան գիտեմ, գայլը թակարդ է ընկել, իր թաթերն է կրծոտում:

ԲԱԳՐԱՏ – Կարծեմ, դու սկսում ես չափից անցնել:

ՌՈԶԱԼԻԱ – Նա հարբած է, չարժե հետը խոսել:

ԵՐԱՆՈՒՀԻ – Գժվել է:

ՍՈՒՐԵՆ – Էհ՞, ի՞նչ եք ամեն կողմից ապշած մտիկ անում: Ամբողջ քաղաքն է խոսում: Պետք է բամբասանքներին վերջ տալ: Երկուսից մեկ – կամ Օթարյանը ճշմարիտ է ասում, կամ զրպարտում է: Եթե զրպարտում է, պետք է պատժել: (Բագրատին) Ա՞ա, վախենու՞մ ես, դողո՞մ ես, դատարանո՞վ ես սպառնում:

ԲԱԳՐԱՏ – (Վիրավորված և վրդովված) Վախկոտը նա է, որ մի կնոջ պատճառով ապտակ է ստանում և կուլ տալիս:

ՍՈՒՐԵՆ – Ձայնդ կտրիր, շուն: (Հարձակվում է վրեն):

ԵՐԱՆՈՒՀԻ – (Ընկնում է որդիների մեջ): Ամա՜ն, Տեր Աստված:

ՄԱՐԳԱՐԻՏ – Աստված իմ, և սա ընտանիք է...

ԱՆԴՐԵԱՍ – (Երևում է իր սենյակի դռների մեջ՝ առանց պիջակի, ժիլետով): Այդ ի՞նչ աղմուկ է: (Նկատելով Սուրենին): Ա, այդ դո՞ւ ես անառակ զավակ: Ես քեզ կխեղդեմ շան պես: (Հարձակվում է վրեն):

ՍԱՂԱԹԵԼ – (Որ դուրս է վազել Անդրեասի ձայնին սեղանատնից, անձեռոցիկը կրծքին փաթաթած): Հանգստացիր, Անդրեաս... (Բռնում է նրա թևից, հետ է քաշում):

ԱՆԴՐԵԱՍ – Կորիր... ես քեզ ասել եմ, որ աչքիս չերևաս...

ՄԱՐԳԱՐԻՏ – (Բռնելով Սուրենի թևից) Ամոթ է, խելքի եկ: (Տանում է նրան ձախ կողմի դռներով և իսկույն մենակ վերադառնում):

ԱՆԴՐԵԱՍ – Ահա իմ կյանքը, պառկեցի մի քիչ հանգստանալու, չթողին: (Թույլ է տալիս, որ Սաղաթելն իրան տանի իր սենյակը): Անիծվեք դուք...

ՌՈԶԱԼԻԱ – (Մարգարիտին) Օձ, այդ դու ես նրան սովորեցրել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ամաչիր ասածիցդ, Ռոզալիա:

ԵՐԱՆՈՒՀԻ – Հիմա էլ դուք: Այս ի՞նչ տուն է, Տեր Աստված:

ՌՈԶԱԼԻԱ – Սպասիր, մի օր ես քեզ հետ հաշվի կնստեմ: (Ուզում է գնալ իր սենյակը, բայց Օթարյանին տեսնելով, կանգ է առնում):

ՏԵՍԻԼ 11

ԵՐԱՆՈՒՀԻ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՕԹԱՐՅԱՆ ԵՎ ՌՈԶԱԼԻԱ

ՕԹԱՐՅԱՆ – (Ներս է մտնում նախասենյակի դռնից ուրախ դեմքով): Բարով ձեզ, մայրիկ: (Ձեռքը համբուրում է) Օրիորդ Ռոզալիա, բարով: (Ուզում է ձեռք տալ):

ՌՈԶԱԼԻԱ – (Արհամարանքով, բայց վրդովված): Մենք ծանոթ չենք, պարոն:

ՕԹԱՐՅԱՆ – (Ցնցվելով) Օրիորդ, այդ ի՞նչ է նշանակում:

ՌՈԶԱԼԻԱ –(Կծու ծիծաղով): Սիրահարներ: (Անցնում է իր սենյակը):

ՏԵՍԻԼ 12

ԵՐԱՆՈՒՀԻ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՕԹԱՐՅԱՆ

ՕԹԱՐՅԱՆ – (Ապշած նայելով Ռոզալիայի հետևից, մոտենում է և մեքենայաբար սեղմում Մարգարիտի ձեռքը): Չեմ իմացել ինչո՞վ եմ ես արժանացել նրա ատելությանը:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Որ նստել է աջ կողմի բազկաթոռներից մեկի վրա): Ոչինչ, որդի, մի նեղանար: Այստեղ մի փոքրիկ ընտանեկան խռովություն պատահեց: Ռոզալիան վշտացած է:

ՕԹԱՐՅԱՆ – Եթե ես որևէ բանով մեղավոր եմ նրա առջև, պատրաստ եմ ներումն խնդրել:

ԵՐԱՆՈՒՀԻ – Էհ, ուշադրություն մի դարձրու, երեխա է, չի հասկանում: Նստիր, ինչպե՞ս է մայրդ:

ՕԹԱՐՅԱՆ – (Զսպելով իրեն) Շնորհակալ եմ, մայրիկ, դուք շատ բարի եք դեպի մեզ:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ես քեզ սիրում եմ հարազատ որդուս պես: Ուրախ եմ, որ մեծացել ես և օրինավոր մարդ դարձել: Լսել եմ, որ քո և իմ մարդու մեջ ինչ-որ վեճ է բացվել: Այդ ինձ շատ է ցավեցնում, որդի, շատ...

ՕԹԱՐՅԱՆ – Մայրիկ, ինչ էլ որ պատահի, իմ սերն ու հարգանքը դեպի ձեզ չի պակասիլ: Դուք բարձր եք բոլոր վեճերից:

ԵՐԱՆՈՒՀԻ – Էհ, օրհնյալ լինես: Իմ ցանկությունն էլ այն է, որ բարեկամ մարդիկ հաշտ ապրեն, փողի համար չմոռանան Աստծուն:

ԶԱՐՈՒՀԻ – (Գալիս է օրիորդների սենյակից՝ սեղանատուն անցնելու): Տիրուհի, օրիորդը ձեզ խնդրում է: (Անցնում է սեղանատուն և իսկույն բեմով վերադառնում է օրիորդների սենյակը՝ ձեռքին մի գրաֆին ջուր և դատարկ բաժակ):

ԵՐԱՆՈՒՀԻ – Էհ, էլի երևի հիստերիկան սկսվեց: (Շտապով գնում է օրիորդների սենյակը):

ՏԵՍԻԼ 13

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ՕԹԱՐՅԱՆ

ՕԹԱՐՅԱՆ – (Անհամբեր մոտենալով Մարգարիտին) Ի՞նչ է պատահել այստեղ, ասա:

ՄԱՐԳԱՐԻՏ – Սովորական խռովություն: Սուրենն ընդհարվեց Ռոզալիայի և Բագրատի հետ ու միմյանց վիրավորեցին:

ՕԹԱՐՅԱՆ – Բայց ե՞ս ինչով եմ մեղավոր, որ հայրդ ինձ անպատվեց:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ներողամիտ եղիր, Ռոզալիան չգիտե իրան զսպել: Ես համոզված եմ, որ հետո ինքը կզղջա: (Զարուհուն, որ այդ միջոցին, օրիորդների սենյակից դուրս գալով, գրաֆինն ու բաժակը ձեռքին անցնում է սեղանատուն): Ինչպե՞ս է:

ԶԱՐՈՒՀԻ – Ոչինչ, մի քիչ լաց եղավ, հանդարտվեց (Գնում է սեղանատուն):

ՄԱՐԳԱՐԻՏ – Թողենք այդ: Ավելի կարևոր գործ կա: Հայրս ուղարկել է քեզ կանչելու:

ՕԹԱՐՅԱՆ – Այո: Ո՞ւր է նա:

ՄԱՐԳԱՐԻՏ – Իր սենյակումն է, հանգստանում է: Նստիր: Եթե կամենաս, իսկապես ինձ ես հարկավոր: Նստիր: (Նստում է աջ կողմի բազկաթոռի վրա): Դու ինձ երկու կրակի մեջ ես գցել: Ես հավատում եմ քեզ, բայց ուզում եմ հորս էլ հավատալ: Դուրս բեր ինձ այս անտանելի դրությունից: Երկուսից մեկը – կամ դու մոլորված ես, կամ հայրս իսկապես մի հանցավոր է:

ՕԹԱՐՅԱՆ – Լսիր, Մարգարիտ: Ես քանիցս քեզ ասել եմ, որ այդ դատն ինձ համար բարոյական մեծ նշանակություն ունի: Հավատա, փողն արժեք չունի իմ աչքում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ախ, միթե ես քեզ նոր եմ ճանաչում: Բայց, հասկացիր, քո և իմ հոր փոխադարձ թշնամությունը կարող է ինձ կործանել, ահա ինչից ն եմ վախենում:

ՕԹԱՐՅԱՆ – Սիրելի, անգին Մարգարիտ, մի պղտորիր հոգիդ մռայլ մտքերով: Ես գիտեմ, որ դու պաշտում ես հորդ, բայց ես այնքան նրա դեմ չեմ զինված, որքան եղբորդ դեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Բագրատը բարեսիրտ չէ, ես գիտեմ այդ:

ՕԹԱՐՅԱՆ – Նա ինձ արհամարհել է ընկերական շրջաններում: Նա ինձ ստորացրել է տեղի և անտեղի: Նա ինձ մի քանի անգամ անվանել է ձրիակեր: Ես ուզում եմ ազատվել մուրացկանի վիրավորական դրությունից: Ուզում եմ արժանանալ քո սիրուն: Մի՞թե չես հասկանում իմ պահանջի իսկական նպատակը:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում: Բայց ե՞ս ինչ անեմ: Դու գիտես, որ ես քեզ սիրում եմ անսահման, բայց չէ՞ որ սիրում եմ և հորս: Այսօր նա ինձ այնպիսի խոսքեր ասաց, որ ամոթից պատրաստ էի գետինը մտնել: Չեմ կարծում, որ նա այդ խոսքերն ասեր, եթե իսկապես իրան մեղավոր զգար: Նա փաստեր է պահանջում և կամենում է, որ ես ստուգեմ այդ փաստերը:

ՕԹԱՐՅԱՆ – Եվ դու ուզում ես ստուգե՞լ: Հասկանում եմ: Քո մեջ կռվում են երկու հավասար զգացումներ – հավատը դեպի հայրդ և հավատը դեպի ինձ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ահա հենց այդ է ճիշտը, ինչ լավ զգացել ես իմ դրությունը:

ՕԹԱՐՅԱՆ – Շատ լավ, ես քեզ դուրս կբերեմ այդ երկդիմի դրությունից:

ՄԱՐԳԱՐԻՏ – Այո, այո դուրս բեր:

ՕԹԱՐՅԱՆ – Կներկայացնեմ քեզ իմ բոլոր ապացույցները:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես հենց այդ մասին էի ուզում քեզ խնդրել:

ՕԹԱՐՅԱՆ – Թող այդպես լինի: Ինձ համար քեզանից ավելի մեծ դատավոր չի կարող լինել: Բավական է, որ դու, միայն դու, ասես եղբորդ, թե ես ձրիակեր չեմ եղել, և ես պատրաստ եմ հրաժարվել իմ ժառանգությունից: Ես կարող էի դատարան դիմել, բայց այդ չեմ անում միայն քո պատճառով: Ուրեմն դու եղիր մեր դատավորը:

ՄԱՐԳԱՐԻՏ – Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ: Եվ հավատա, ես կլինեմ արդար դատավոր:

ՕԹԱՐՅԱՆ – (Թեթև ցնցումով): Ահ, հենց այդ է, որ ինձ սարսափեցնում է:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ինչո՞ւ...

ՕԹԱՐՅԱՆ – Մարգարիտ, տուր ինձ խոսք, որ երբ ճշմարտությունը կպարզվի քեզ համար – չես ընկճվիլ նրա դառնությունից:

ՄԱՐԳԱՐԻՏ – Մի առաջարկիր ինձ ոչ մի պայման: Դու ինքդ ես ինձ սովորեցրել ճշմարտությունը ամեն բանից գերադասել: Բեր այդ թղթերը, ես ուզում եմ վերջին կասկածը հեռացնել իմ սրտից: Եվ չեմ թաքցնում, որ ում կողմ ևս լինի արդարությունը – ինձ է կործանելու, որովհետև անդունդը ուր որ բացվի – իմ և հորս մեջ, թե իմ և քո մեջ - ես եմ գլորվելու այնտեղ: Բեր այդ թղթերը, ես պահանջում եմ սիրող կնոջ իրավունքով:

ՕԹԱՐՅԱՆ – (Մինչ Մարգարիտն արտասանում է իր խոսքերը, Օթարյանը տանջվում է և կռվում իր հետ: Երբ Մարգարիտը վերջացնում է, լռություն): Շատ լավ, ես կբերեմ: (Վեր է կենում):

ՄԱՐԳԱՐԻՏ – Հենց այսօր:

ՕԹԱՐՅԱՆ – Մի քանի րոպեից հետո ես այստեղ կլինեմ: (Գնում է նախասենյակի դռներով):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ուղեկցում է նրան մինչև դռները, ապա գալիս է բեմի կենտրոնը):

ՏԵՍԻԼ 14

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ – (Ներս է մտնում ձախ դռներից): Չկարողացա քնել: Հանգիստ չեմ: Մարդու հոգեկան տրամադրությունը զարմանալի կապ ունի գրպանի դրության հետ: Երբ այս անիծվածը դատարկ է, ինչ ուզում եք ասեք՝ քնել չեմ կարողանում; Այո սիրելի, Մարգարիտ, այս մի նոր հոգեբանական գյուտ է: Հետևաբար, չե՞ս կարող, արդյոք, ինձ հաշտեցնել նրա բթամիտ Մորփեոսի հետ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես փող չունիմ:

ՍՈՒՐԵՆ – Դու կարծեմ, հայրիկից ամսական 300 ռուբլի ես ստանում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես վաղուց եմ դադարել հայրիկից փող վերցնել:

ՍՈՒՐԵՆ – Ահա թե ինչ: Ատո՞ւմ ես փողը, փիլիսոփա ես:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ինչիս է հարկավոր փողը, երբ տանն ամեն բան պատրաստ կա:

ՍՈՒՐԵՆ – Այդ էլ ճիշտ է: Բայց ինձ հարկավոր է, ախ, շատ հարկավոր: Առանց փողի ես համարյա առանց ոտների եմ: Ես էլ եմ ատում փողը և միշտ աշխատում եմ նրանից բաժանվել: Երբ գրպանս մի քանի գրոշներ են մտնում, մեկ էլ տեսար մոծակների պես կծոտեցին ինձ: Էհ, ես էլ շտապում եմ նրանց բաց թողնել: Բայց, այնուամենայնիվ, առանց փողի տխուր է: Ախ, Մարգարիտ, կյանքը շատ տխմար բան է: (Քիչ լռում է). Տխուր է, շատ տխուր: Ես ուղղակի ձանձրացել եմ կյանքից:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Շրջվելով, թախծալի հանդիմանությամբ) Քսանուերեք տարեկան հասակում:

ՍՈՒՐԵՆ – Քի՞չ է: Մեր ժամանակներում մարդիկ շատ են տեսնում, շատ են զգում և շուտ ձանձրանում: Ազնիվ խոսք, հիմա ես երբեմն ինքս ինձանից վախենում եմ: (Հանում է գրպանից ռևոլվերը): Այ, տես, մի հարված, և Ռուբիկոնն անցա:

ՄԱՐԳԱՐԻՏ – Թող, հիմարություններ մի արա, կարող է տրաքվել:

ՍՈՒՐԵՆ – Ոչ, այս հեշտ տրաքողներից չէ: (Ցույց է տալիս) Այ, այսպես է տրաքում, պետք է այս հետ քաշել, մատով սեղմել, և պատրաստ է:

ՄԱՐԳԱՐԻՏ – Տուր ինձ: Մի պահիր մոտդ, վտանգավոր է:

ՍՈՒՐԵՆ – Ես հենց ինքս ուզում էի դեն գցել: (Տալիս է) Վերցրու, հրաժարիմք ի սատանայե: (Լռություն): Ուրեմն չունի՞ս:

ՄԱՐԳԱՐԻՏ – Չունիմ: (Ռևոլվերը նայում է քիչ և դնում սեղանի վրա):

ՍՈՒՐԵՆ – (Լռություն): Եվ ոչ գոնե հիսուն ռուբլի՞:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Գլխով բացասական նշան է անում):

ՍՈՒՐԵՆ – Ցավալի է, շատ ցավալի: Կնշանակի՝ այսօր Աղովային չպիտի տեսնեմ: Այդ անկարելի է, ամոթ է, կասի՝ հայի տղան ծախսից փախավ և էլի կմոտենա Աբուլովին: (Նստում է ձախ կողմի բազկաթոռներից մեկի վրա, մտածում: Լռություն, հանկարծ ձեռքը զարկում է ճակատին): Էվրիկա, Էդիսոն եմ, Էդիսոն: Ո՞րտեղ է Ռոզալիան:

ՄԱՐԳԱՐԻՏ – Իր սենյակում:

ՍՈՒՐԵՆ – Նա փող կունենա (Դիմում է դեպի խորքի դուռը):

ՄԱՐԳԱՐԻՏ – Այդքան վիրավորելուց հետո ուզում ես դիմել նրա՞ն:

ՍՈՒՐԵՆ – (Կանգ է առնում): Ա, այդ դատարկ բան է: Նա գիտե որ իմ սիրտը բարի է, լեզուս է միայն չար: Կհաշտվենք, դժվար չէ: Մի քիչ կշոյեմ, կգովեմ գեղեցկությունը իսկույն կկակղի:

(Երգելով անցնում է օրիորդների սենյակը)

ՏԵՍԻԼ 15

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ՕԹԱՐՅԱՆ, հետո ԱՆԴՐԵԱՍ

ՕԹԱՐՅԱՆ – (Ներս է մտնում նախասենյակից, այս անգամ վերարկուով) Ահա, սիրելիս, բոլորը: (Տալիս է մի ծրար): Այստեղ է իմ պատիվը, ինքնասիրությունը և ամբողջ կարողությունը:

ՄԱՐԳԱՐԻՏ – Շնորհակալ եմ, դու մեծ հավատ ես ընծայում ինձ:

ՕԹԱՐՅԱՆ – Այդ տեսակ հավատը քո գործնական եղբայրն անշուշտ կհամարի հիմարություն: Սակայն այդ ինձ համար նշանակություն չունի: Ես սիրում

եմ քեզ, ուրեմն և պետք է հավատամ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Որքան բարի ես դու և վեհանձն, Արտաշես:

ՕԹԱՐՅԱՆ – Միայն քո սիրո համար: (Համբուրում է):

ՄԱՐԳԱՐԻՏ – Վաղը կամ մյուս օրը դու բոլորը հետ կստանաս, թող իմ խոսքը քեզ համար գրավական լինի:

ՕԹԱՐՅԱՆ – Բավական է այդքան: Ցտեսություն:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ցտեսություն: (Ուղեկցում է նրան մինչև նախասենյակի դուռը):

ԱՆԴՐԵԱՍ – (Երևում է իր սենյակի դռների մեջ):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Վերադառնում է բեմի կենտրոնը և ուզում է գնալ իր սենյակը):

ԱՆԴՐԵԱՍ – (Իբր թե Օթարյանին չի նկատել) Այն ո՞վ էր:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ահա հայրիկ, ամեն ինչ այստեղ է: Այժմ ես կիմանամ ով է ձեզնից արդարը և մեղավորը:

ԱՆԴՐԵԱՍ – Ապրիս զավակս: Քննիր և տես: (Համբուրում է ճակատը): (Գնում են յուրաքանչյուրը իր սենյակը):

Վարագույր

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Նույն տեսարանը: Երեկո է: Վարագույրը բարձրանալիս բեմում տիրում է կիսախավար: Բոլոր դռները ծածկված են, միայն նախասենյակի դռների մի թևը բաց է: Այնտեղ լուսո մի շերտ, թեք գծով անցնելով բեմով, ընկել է դաշնամուրի վրա, որի քով Մարգարիտը նստած նվագում է ինչ-որ թախծալի եղանակ: Նրա ամբողջ մարմինը մթնումն է, միայն գլուխն է երևում լուսո շերտի մեջ:

Միաժամանակ բեմի վրա, բացի Մարգարիտից, ոչ ոք չկա: Հեռու լսվում է զանգակի հնչյուն: Սեղանատան դռներից դուրս է գալիս Զարուհին և անցնում է օրիորդների սենյակները:

ՏԵՍԻԼ 1

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ԲԱԳՐԱՏ

ԲԱԳՐԱՏ – (Դուրս է գալիս ձախ կողմի դռներից ֆրակով և կրծքին տեխնոլոգիական ճեմարանի նշան, փողկապը կապելով): Միշտ միևնույն տխուր եղանակը օրվա միևնույն միջոցին:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Նվագելով) Ասում են, ժամերն իրանց տրամադրությունն ունին: Երեկոները ես տխրում եմ ու հուզվում և միշտ այս եղանակը հիշում:

ԲԱԳՐԱՏ – Եվ նվագում ես պոետիկական մթության մեջ, որպես իդեալական սիրահար: Բայց ինձ ներիր, ես ատում եմ խավարը: (Շուռ է տալիս սեղանատան դռների մոտ էլեկտրական թելի կոճակը): Առաստաղից քաշ արած ջահը տարածում է պայծառ լույս:

ՄԱՐԳԱՐԻՏ – Բավական է: (Դադարում է նվագել և դաշնամուրի կափարիչը ցած գցում: Նկատում է Բագրատի պատրաստությունը): Այդ ո՞ւր ես պատրաստվում:

ԲԱԳՐԱՏ – (Կանգնելով հայելու առջև, որ փողկապն ուղղի): Տեխնոլոգիաների երեկույթ: Գնա, հագնվիր, քեզ էլ տանեմ: Ռոզալիան պատրաստվում է: Դու այնտեղ կտեսնեն տեղական ինտելիգենցիայի ընտիր մասը:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ինչո՞ւ ընտիր:

ԲԱԳՐԱՏ – Երեկույթում միայն ինժեներներ են լինելու: Դու այնտեղ չես տեսնիլ ոչ պորտֆելի և ոչ ռուբլու հերոսներին, այսինքն՝ ոչ իրավաբաններին և ոչ բժիշկներին:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ինչպես երևում է, շատ մեծ կարծիք ունիս քո մասնագիտության մասին:

ԲԱԳՐԱՏ – Եռանդի, խելքի և ժամանակիս իսկական ներկայացուցիչներն ինժեներներն են: Կգա՞ս, թե չէ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես տրամադրություն չունիմ երեկույթ գնալու:

ԲԱԳՐԱՏ – Չսիրեցի սկզբից ևեթ այդ խոսքը – տրամադրություն: Մարդուս իրանիցն է կախված այսպես կամ այնպես տրամադրել իրան: Ահ, այս անիծվածը չի կապվում:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Մոտենում է, օգնում փողկապը կապելու) Քեզ համար հեշտ է այդ ասել: Դու հաշտվում ես կյանքի բոլոր հանգամանքների հետ:

ԲԱԳՐԱՏ – Եթե, իհարկե, հանգամանքներն արժանի չեն դիմադրության: Հակառակ դեպքում գիտեմ առողջ դատողությամբ կռվել նրանց դեմ: (Մարգարիտն

ուղղել է Բագրատի փողկապը): Շնորհակալ եմ: (Նայելով եղունգներին): Գիտես, սիրելիս, մեր ժամանակի միակ գերիշխանը բանականությունն է: Այս տեսակետից ես չեմ կարող արդարացնել վերջին ժամանակվա քո տխրությունը, որ արդեն սկսել է բողոքի ձև ստանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Կկամենայի ես էլ ուրախ լինել քրոջս պես, թոչկոտել, ինչպես անհոգ թոչուն: Կկամենայի ոչնչի մասին չմտածել, բացի իմ անձնական զվարճություններից: Բայց, ինչ արած, չեմ կարող: (Հառաչելով, արմունկները հենում է դաշնամուրին):

ԲԱԳՐԱՏ – (Հեգնաբար): Սիրահարված ես, տանջվում ես մի անզուգական երիտասարդի, մի աննման իդեալիստի համար: (Լուրջ): Բավական է, Մարգարիտ: Ես չունիմ իրավունք քեզ հանդիմանելու, բայց այլևս լռել չեմ կարող: Բավական է: Թող երեխայությունդ: Դու չափահաս օրիորդ ես, պետք է հասկանաս, որ չունիս իրավունք սիրելու քո հարազատ ծնողի զրպարտչին:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Գլուխը բարձրացնելով) Իսկ եթե նա զրպարտիչ չէ, այն ժամանա՞կ:

ԲԱԳՐԱՏ – Դու համոզվա՞ծ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դրականապես և եռանդով) Ավելի քան համոզված եմ:

ԲԱԳՐԱՏ – Քույր, ինձ թվում է, որ քո ուղեղը սկսում է խանգարվել: Տխմար սիրո զգացումը հարբեցրել է քեզ: Եթե այդպես շարունակես, ես քեզ էլ կատեմ, ինչպես ատում եմ նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ինձ համար այսուհետև միևնույն է: Ես ունիմ իմ ձեռքում փաստեր, որոնք քարերին անգամ կարող են համոզել, թե մեր հայրը կողոպտել է մի որբ ընտանիք, և կողոպտել է ամենայն անգթությամբ:

ԲԱԳՐԱՏ – Շփոթված և միևնույն ժամանակ վրդովված: Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկի ցանկությամբ ես Օթարյանից պահանջեցի նրա դոկումենտները: Նա տվեց, Բագրատ, բոլորը, ինչ որ ասում է նա ճշմարտություն է: Ահ, այս միտքը կարող է ինձ խելքից հանել: (Ընկճված անցուդարձ է անում: Լռություն):

ԲԱԳՐԱՏ – (Շփոթված, չգիտե ինչ անե): Դու ինձ բոլորովին շփոթեցրիր: Որտե՞ղ են այժմ այդ գրավոր ապացույցները:

ՄԱՐԳԱՐԻՏ – Այնտեղ, իմ սենյակում, գրասեղանիս մեջ:

ԲԱԳՐԱՏ – Խոսե՞լ ես հայրիկի հետ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Այո:

ԲԱԳՐԱՏ – Ի՞նչ է ասում նա այդ փաստաթղթերի դեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ի՞նչ կարող է ասել մի հանցավոր, որին ներկայացնում են իր հանցանքի լուսանկարը: Նա շփոթվեց, կարմրեց, կապվեց, բայց հերքել, իհարկե չկարողացավ: Գնա պարահանդես, առավոտը, եթե կամենաս, կարող ես բոլորը կարդալ:

ԲԱԳՐԱՏ – Ա, ինչ պարահանդես: Ես ամեն ինչ մոռացա: Ուրեմն ճի՞շտ է, որ մեզ սպառնում է սնանկություն:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ախ, քեզ սնանկությունն է անհանգստացնում, իսկ ինձ տանջում է անպատվությունը: Այժմ ամեն ինչ կախված է Օթարյանի կամքից:

ԲԱԳՐԱՏ – Նա կկամենա թե անպատվել և թե սնանկացնել մեզ: Նա սոսկալի ոխ ունի իմ դեմ: Ցույց տուր ինձ: Ես ուզում եմ իմ աչքով տեսնել այդ թղթերը և անձամբ հավաստիանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Խորհրդավոր և եռանդով): Բայց զգույշ, նրանց ապահովությունը պատվովս եմ երաշխավորել:

ԲԱԳՐԱՏ – (Վիրավորված): Ես ավազակ չեմ, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Գնանք: Տես և համոզվիր, թե ումի փողերով ես ուզում մեծ-մեծ ձեռնարկությունները սկսել: Գնում են խորքի ձախ դռներով, այն է՝ օրիորդների սենյակները:

ՏԵՍԻԼ 2

ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

Գալիս են նախասենյակից

ԱՆԴՐԵԱՍ – Նա աղջիկ չէ ինձ համար, դատավոր է: Ամբողջ գիշեր աչքերս չեմ փակել, ամբողջ օրը տանջվել եմ: Ես կարծում էի, որ այդ թղթերը կորած են: Էհ, ասում էի, կնիկ է, խելքը բան չի կտրիլ: Քի՞չ է պատահել, որ կանայք իրանց մարդուց մնացած հարկավոր թղթերն այրել են: Բայց այդ մեկը հիմարներից չի եղել, պահել է, որ այսօր որդին գլխիս փորձանք բերի: Նա չի խնդրում, Սաղաթել, այլ, հոգեհանի պես պահանջում է, որ վիզս ծռեմ այդ լակոտի առջև, մեղա գամ և տամ նրան կարողությանս կեսը:

ՍԱՂԱԹԵԼ – Դու ինքդ աչքովդ տեսա՞ր այդ թղթերը:

ԱՆԴՐԵԱՍ– Տեսա, բաս չէ՞: Նա ցույց տվեց մոր մոտ: Կանգնեց հեռվում, մեկ-մեկ կարդաց, հիշեցրեց բոլորը և հետո իսկույն փակեց իր գրասեղանի մեջ:

ՍԱՂԱԹԵԼ – Իհարկե, մայրն էլ պակասը լրացրեց, պատմելով աղջկան իր գիտեցածը:

ԱՆԴՐԵԱՍ – Օ, քույրդ Աստծու պատիժն է իմ գլխին: Ինձ պաշտպանելու տեղ, ավելի խայտառակեց աղջկա մոտ: Ես կատաղեցի, հարձակվեցի վրեն, որ տեղնուտեղը խեղդեմ նրան: Բարեբախտաբար, Մարգարիտը ժամանակին մեջ ընկավ, չթողեց: Նա փաթաթվեց մոր վզին: Պետք է տեսնեիր, ինչպես էր լաց լինում: Դիակիս վրա էլ նա այնքան արտասուք չի թափիլ: Եվ հետո, երբ ուշքի եկավ, ինչ խոսքեր, Տեր Աստված, ինչ լեզու: Հայրիկ, ասում է, մոլորվել կարելի է, բայց պետք է գոջալ, չգոջալն ավելի անազնվություն է: Ումի՞ց է սովորել այդ բաները:

ՍԱՂԱԹԵԼ – Ո՞ւմից: Իհարկե, հենց այդ լակոտից: Դե Աստված գիտե էլի ինչեր սովորացրած կլինի:

ԱՆԴՐԵԱՍ – Փորձեցի ինձ արդարացնել: Ասացի, ընկերս մեռնելիս տափերը գին չունեին, եկամուտ չէին բերում, ի՞նչ կարող էի տալ որբերին: Ասացի, հետո են թանկացել, իհարկե, իմ բախտից, որովհետև եթե մեռելը բախտ ունենար – չէր մեռնիլ: Բայց ես խոմ իմ ընկերոջ որբերին չեմ մոռացել: Ես օգնել եմ, հիմա էլ ուզում եմ օգնել, միշտ կօգնեմ, ձեռք վերցրու: Ոչ, ասում է, դու պարտավոր ես տալ նրանց բոլորը, ինչ որ հասնում է օրենքով: Լսո՞ւմ ես, Սաղաթել, բոլորը տալ: Կարծում է այդ կարելի բան է, կարծում է, որ դա փող չէ, թեկուզ գողացած փող: Բայց փողը դեռ մի կողմ, իսկ պատի՞վս: Ի՞նչ կմտածեն մարդիկ: (Անցուդարձ է անում):

ՍԱՂԱԹԵԼ – Ինչ պիտի մտածեն: Կասեն, որ Էլիզբարովը գող էր և այժմ, դատաստանից վախենալով, գողացածը հետ է տալիս: Արի ու այն ժամանակ երևացիր հասարակության մեջ: Աչքերդ թքով կհանեն: Իսկ ե՞ս... ես քեզ կհամարեմ հիմարի մեկը...

ԱՆԴՐԵԱՍ – Մնում էր մի բան, այն էլ փորձեցի: Ասացի, աղջի, սիրում ես այդ երիտասարդին, նա էլ քեզ է սիրում: Էլ դրանից լավ բան: Ես ձեզ պսակեմ: Լավ օժիտ կտամ, տուն ու տեղ կսարքեմ: Տուր ինձ թղթերը:

ՍԱՂԱԹԵԼ – Հը՞, դրա՞ն ինչ ասաց:

ԱՆԴՐԵԱՍ – Ոչ, հայրիկ, ասում է, ես քեզանից փողի օժիտ չեմ ուզում, այլ պատվի օժիտ: Քանի որ դու ընկերոջդ գերեզնամի առջև մեղավոր ես, ես չեմ

կարող նրա որդու հետ բախտավորվել: Նա ամեն րոպե իրավունք կունենա երեսիս ասելու. «Հայրդ կողոպտել է հորս»: Այդ նախատինքն ես տանել չեմ կարող իմ ամուսնուց:

ՍԱՂԱԹԵԼ – Լեզվին նայիր, լեզվին: Փիլիսոփայի պես է խոսում:

ԱՆԴՐԵԱՍ – Ախ, Մարգարիտն իր պապի ժառանգն է, քո հոր կտորը: Երեկ, երբ նա խոսում էր, ինձ թվում էր, որ նրա հետևում, պատի տակ, կանգնած է տեր-Սիմոնը՝ Ավետարանի խոսքերը բերանում:

ՍԱՂԱԹԵԼ – Բայց ախար, հայրս հոգևորական էր, պարտավոր էր ճշմարտություն քարոզել, իսկ մենք աշխարհականներ ենք, մեր բանն ուրիշ է: Ինչո՞ւ չեն հասկանում այդ կանայք:

ԱՆԴՐԵԱՍ – Հիմա ճանապարհ ցույց տուր ինձ, Սաղաթել: Ի՞նչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ այդ լակոտից:

ՍԱՂԱԹԵԼ – Ինչ պիտի անես: Ինքդ վաղուց ես գտել ճանապարհը: Արա այն, ինչ որ վճռել ես անելու:

ԱՆԴՐԵԱՍ – Այո, պետք է անպատճառ անել, ուրիշ ելք չկա: Ես հենց դրա համար աշխատեցի, որ այդ թղթերը Մարգարիտի ձեռքն անցնին:

ՍԱՂԱԹԵԼ – Բայց պետք է անել շուտով, հենց այս գիշեր, վաղն ուշ կլինի:

ԱՆԴՐԵԱՍ – Սուս, ոտների ձայն եմ լսում: Գալիս են: Գնանք իմ սենյակը, այնտեղ կմտածենք ինչպես գլուխ բերենք այդ բանը: (Գնում են աջ կողմի առաջին դռներով):

ՏԵՍԻԼ 3

ՄԱՐԳԱՐԻՏ, ԲԱԳՐԱՏ ԵՎ ՌՈԶԱԼԻԱ

Դուրս են գալիս միաժամանակ օրիորդների սենյակից:

ԲԱԳՐԱՏ – (Հուզվում է) Բոլոր կասկածներս փարատվեցին, վտանգն անխուսափելի է:

ՌՈԶԱԼԻԱ – (Հագնվել է պարահանդեսի համար: Ձեռնոցներն է հագնում): Ես էլ ասում եմ քույրս երեկ ինչ թղթեր էր քրքրում և ինձ տեսնելիս թաքցնում: Ինչ ասել կուզիս երևելի սիրահարական նամակներ են – պայմանագրեր, առևտրական թղթեր, ֆի: (Մոտենում է հայելուն և դիտում իրան):

ԲԱԳՐԱՏ – (Մտազբաղ, ձեռքերը մեջքին դրած, անցել է բեմի աջ կողմը): Ասա, ինձ, Մարգարիտ, կարո՞ղ ես այդ թղթերը մի քանի օր պահել մոտդ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ոչ:

ԲԱԳՐԱՏ – Ինչո՞ւ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես խոսք եմ տվել վաղը վերադարձնել նրան:

ԲԱԳՐԱՏ – Ես կարծում եմ, նախքան վերադարձնելը, հարկավոր է մի լավ մտածել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ի՞նչ ես ուզում ինձանից, պարզ ասա:

ԲԱԳՐԱՏ – (Տատանվելով) Ինձ թվում է, որ խելացի բան չէ մի այսպիսի զենք վերադարձնել մեր հակառակորդին:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ի՞նչ, ուրեմն, դու պահանջում ես, որ ես...

ԲԱԳՐԱՏ – (Սառը) Որ դու այդ թղթերը չտաս Օթարյանին:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Վրդովվելով) Ուրեմն դո՞ւ... Ամաչիր կրծքիդ նշանից, Բագրատ:

ԲԱԳՐԱՏ – (Գրգռվելով) Էհ, թող այդ դատարկ ֆրազները, ի սեր Աստծո: Ես գիտեմ, որ այդ պարոնը քո գլուխը մտցրել է մի քանի վայրիվերո մտքեր: Բայց մենք ասպետների դարում չենք ապրում:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դառն հեգնությամբ) Կարծես, մեծ ասպետություն է տարրական ազնվություն, հասարակ մարդկային խիղճ ունենալը:

ԲԱԳՐԱՏ – Խղճի և ազնվության մասին ամեն մարդ իր գաղափարն ունի: Էականն այն է, որ եթե այդ թղթերն անցնեն Օթարյանի ձեռքը, ես կզրկվեմ իմ գործարանից: Իսկ այդ կնշանակե՝ ծովը նետել իմ բոլոր ծրագրերը: Դու շատ լավ գիտես, որ ես այդ գործարանով հիմք եմ դնում իմ ապագա ուժին, ազդեցությանը և բախտավորությանը: Ես ուզում եմ լինել հզոր ֆինանսական սյուն, մեկն այն հսկաներից, որոնց ձեռքումն է մեր ժամանակի ամենամեծ ուժը – կապիտալը:

ՌՈԶԱԼԻԱ – Մի մարդ, որ կարող է հազարավոր անգործների համար աշխատանքի դուռը բաց անել և խեղճ ընտանիքներ կերակրել: Ես քեզ հասկանում եմ, Բագրատ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Եվ այդ բոլորը ուրիշի փողերո՞վ:

ԲԱԳՐԱՏ – Զավակները պատասխանատու չեն իրենց հայրերի փոխարեն: Մեր ծնողների անցյալը մեզ համար մեռած պատմություն է:

ՄԱՐԳԱՐԻՏ – Որը սակայն այսօր հարություն է առել և արատավորում է մեր ամբողջ գերդաստանը:

ԲԱԳՐԱՏ – Պետք է, ուրեմն, խեղդել այն և նորից հանձնել գերեզմանին:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Խորին դառնությամբ) Բագրատ:

ԲԱԳՐԱՏ – Ահ, ո՞ւմ հայրը չի գրկել մեկին կամ մյուսին, այս կամ այն կերպ: Վերջապես, հենց նորերից ո՞ր մեկը չի գրկում կամ հարստահարում: Տարբերությունն այն է, որ հները գրկում էին հին ձևով, նորերը գրկում են նոր ձևով: Մարգարիտ, ներկա դեպքում պետք է լինել ավելի խելացի, քան զգայուն:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Խորին սրտմտությամբ) Այսինքն՝ ավելի շահամոլ, քան ազնի՞վ: Թույլ տալ ծնողին կողոպտել մի որբ ընտանիք և փողոցնե՞րը գցել: Մասնակից լինել նրա ծանր հանցանքի՞ն, շարունակել նրա սկսա՞ծը: Եվ ինչո՞ւ: Որպեսզի ապրենք այս փառահեղ պալատո՞ւմ, ոսկեզօծ կահ-կարասու մե՞ջ, զուգվինք - զարդարվինք, բալեր ու պարահանդեսնե՞ր այցելենք: Ոչ, ոչ, ես չեմ կարող և չեմ ուզում անել այդ: (Անցնում է դեպի ձախ):

ՌՈԶԱԼԻԱ – (Ատելությամբ և գրգռված): Տա-տա, տա-տա, ինչ քաջն ես եղել: Ես չգիտեի, դու կատարյալ հերոսուհի ես:

ԲԱԳՐԱՏ – (Զգալով, որ շատ հափշտակվեց): Մարգարիտ, ես հարգում եմ քո գաղափարները, բայց մի հափշտակվիր: Մտածիր, ինչ մթնոլորտում ենք ապրում: Մեր հասարակության մեջ քո արածը ոչ ոքին չի հիացնիլ, ընդհակառակը, շատերը քեզ կհամարեն հիմար:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես հասարակության համար չեմ անում, այլ իմ խղճի համար:

ՌՈԶԱԼԻԱ – (Կատաղի): Զզվում եմ այդ տեսակ ֆրազյորներից (Բագրատին): Զուր ես աշխատում նրան բան հասկացնել: Նրա վրա միայն ուժը կարող է ազդել: Խլիր նրա ձեռքից այդ թղթերը, պրծավ գնաց:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Երևում է սեղանատան դռների մեջ):

ԲԱԳՐԱՏ – (Նույն մեղմ տոնով): Գոնե վաղը մի հանձնիր: Սպասիր մի քանի օր, միասին կխորհրդակցենք: Դու խելոք ես, չես կամենալ մեզ մեր թշնամու ձեռքը գցել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ահա մեր մայրը, թողեք տեսնենք, նա ինչ է ասում:

ՏԵՍԻԼ 4

ՄԱՐԳԱՐԻՏ, ԲԱԳՐԱՏ, ՌՈԶԱԼԻԱ, ԵՐԱՆՈՒՀԻ, հետո ԶԱՐՈՒՀԻ

ԵՐԱՆՈՒՀԻ – (Առաջ է գալիս, ձեռքերը ծոցը դրած, տխուր): Այսքան տարի այդ մարդու արարքները թաքցրի երեխաներից, Աստծուն է հայտնի ինչ տանջանքներով: Գիշեր-ցերեկ մտածել եմ այդ բանի մասին: Ժամանակ-ժամանակ բերան եմ բաց արել, խոսքս կտրել է գոռոցով: Լռել եմ ու կրակս ներսումս պահել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Լսո՞ւմ եք:

ԲԱԳՐԱՏ – Մայրիկ, դու շատ ես լարված հայրիկի դեմ:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Սրտմտությամբ) Սուս, դու ոչինչ չգիտես: Հայրդ իր հոգին ծախել է սադայելին: Երեկ գիշեր երազումս տեսա հանգուցյալին: Կանգնած էր մեր դռների մոտ, վիզը ծուռ, ձեռքը ծոցը դրած, դեղնած, մաշված: Նա ասում էր. «Երանուհի, դու խոմ գիտես, որ մենք եղբայրներ ենք եղել, միասին ենք աշխատել այդ հարստությունը, ինչո՞ւ ես թողնում, որ նա երեխաներիս զրկի մի կտոր հացից»: Ախ, շատ եմ ուզեցել չթողնել, բայց ո՞վ է ինձ լսել: Բագրատ, ինը տարի է այդ մարդը գերեզմանից անիծում է մեզ:

ԲԱԳՐԱՏ – (Գրգռված): Մեռելների անեծքի վրա երկու արշին հող է ծանրանում:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ախ մի խոսիր եղբորս պես, մեղք է: Մենք ամենքս պարտական ենք ահեղ դատաստանի առաջ: Ես էլ եմ պատասխանատու, որ չեմ կարողացել հորդ հեռացնել չար ճանապարհից: Ես դողում եմ սարսափից:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Հազիվ կարողանալով հուզմունքը զսպել): Ոչինչ, մայրիկ: Հանգստացիր: Հայրիկը բարի է, խելոք է, նա իր սխալը կուղղի:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Ձեռքով հուսահատական շարժում է անում): Էհ, որ մեկը...

ԶԱՐՈՒՀԻ – (Ներս է մտնում սեղանատնից): Կլուբից ձեզ տելեֆոնով խնդրում են:

ԲԱԳՐԱՏ – Ահ, այդ երեկույթն էր: Ես մոռացա, որ կարգադրիչ եմ:

ՌՈԶԱԼԻԱ – Դե, գնանք, շատ ուշացանք:

ԲԱԳՐԱՏ – (Մոտենում է Մարգարիտին): Հույս ունեմ, որ մինչև առավոտ միտքդ կփոխես:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Զափազանց ազդվել է մոր խոսքերից, զգացված փաթաթվում է նրա պարանոցին): Մայրիկ, ինչ լավ սիրտ ունես:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Շոյելով նրա գլուխը): Արի, աղջիկս, դու ես իմ միակ մխիթարությունը: Դրանք ուրիշ հոգի ունեն, օտար են ինձ համար: (Համբուրում է):

ԲԱԳՐԱՏ – Ատելով ատում եմ այդ տեսակ սենտիմենտալ տեսարանները: (Դուրս է գալիս նախասենյակի դռներով):

ՌՈԶԱԼԻԱ – Պսիխոպատկա (Հետևում է եղբորը):

ԶԱՐՈՒՀԻ – (Ռոզալիային ուղեկցում է նախասենյակ):

ՏԵՍԻԼ 5

ՄԱՐԳԱՐԻՏ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՎ ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ – (Դուրս է գալիս ձախ կողմի դռներից): Գնա՞ց, վերջապես, եռանդուն կոմերսանտը, ճարպիկ սպեկուլյանտը, աստառը շուռ տված ամերիկացին: Կեցցես, Մարգարիտ: Ես այնտեղից բոլորը լսում էի: Մամա, այս անգամ անառակ որդիդ քեզ հետ համաձայն է: Տուր ձեռքդ համբուրեմ: Այսօր ես տեսնվեցի Օթարյանի հետ: (Մարգարիտին): Թույլ կտա՞ս խոսել մայրիկի ներկայությամբ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես մայրիկից գաղտնիք չունեմ:

ՍՈՒՐԵՆ – Պետք է խոստովանեմ, որ ջենտլմեն տղա է: Ես լավ չէի ճանաչում նրան: Այսօր շատ հավանեցի: Նա ասում է. «Ես աղքատ եմ, աղքատ էլ կմնամ, միայն թե Մարգարիտը չդադարի ինձ սիրել»: Լսո՞ւմ ես. պետք է մեծ սիրտ ունենալ, որպեսզի սիրո համար հրաժարվել ահագին ժառանգությունից: (Զարուհուն, որ վերադարձել է սենյակից և ականջ է դնում): Կորիր, ի՞նչ ես ականջ դնում:

ԶԱՐՈՒՀԻ – (Գնում է սեղանատուն):

ՄԱՐԳԱՐԻՏ – Իսկ դո՞ւ ինչ ասացիր նրան:

ՍՈՒՐԵՆ – Ե՞ս: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող էր ասել ինձ նման մի գիժ: Ես նրան ասացի. «Արտաշես, իմ քույրը հպարտ աղջիկ է: Նա քեզանից զոհաբերություն չի ընդունիլ: Դու վեհանձնությամբ նրանից գերազանցել չես կարող»:

ՄԱՐԳԱՐԻՏ – Շնորհակալ եմ:

ՍՈՒՐԵՆ – Սրանով էլ վերջացավ մեր բանակցությունը: Այժմ լսեցեք իմ կարծիքը, ես էլ ընտանիքի անդամ եմ: Եթե ապացուցված է, որ մեր հայրը զրկել է Օթարյանին, ամենքս պարտավոր ենք պահանջել, որ նա զրկվածներին բավարարություն տա:

ՄԱՐԳԱՐԻՏ – Մայրիկ լսո՞ւմ ես ինչ է ասում:

ՍՈՒՐԵՆ – Էհ, ինչ ես մայրիկին խոսեցնում իմ մասին: Նա ինձ վրա խաչ է դրել: Ես շաղատան եմ, փչացած: Բայց թող հայտնի լինի ձեզ, որ շուտով կհրաժարվեմ իմ բաժին ժառանգությունից, քան կհամաձայնվեմ, որ մարդիկ երեսիս ասեն. «Դու կողոպտիչի որդի ես»: Այս մեկն արդեն վճռված է և ստորագրված: (Սիգար է վառում):

ԵՐԱՆՈՒՀԻ – Խելքս քեզանից բան չի կտրում: Համ այդ ես ասում, համ էլ ինքդ կողոպտում ես հորդ:

ՍՈՒՐԵՆ – Աա, դու մուրհակների մասի՞ն ես ակնարկում: Մամա, Աստված վկա, ես չեմ հնարել այդ բանը, այլ քեռիս, քո պատվարժան եղբայրը: Նա, օ, նա Շեյլոկի խնամին է: Նա ինձ պարտք է տալիս միայն այն պայմանով, որ մեկին հինգ-տասը ստանա հորս մահից հետո: Բայց ազահությունը երբեմն մարդուն հիմարացնում է: Այժմ նա իմ պատվարժան քեռին վախենում է, որ հայրիկից շուտ կճանապարհվի ի վերին Երուսաղեմ: Մամա, մի նեղանար, եղբայրդ մարդ չէ, այ գայլի ախորժակից և աղվեսի խորամանկությունից կազմված վինեգրետ: Իսկ ես թեև անառակ եմ, բայց ջենտլմեն եմ: Երևի Բագրատն ինձ վախկոտ անվանեց: Իբրև թե ապտակ եմ կուլ տվել: Ուզո՞ւմ ես իմանալ, ինչո՞ւ եմ կուլ տվել:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ես չեմ ուզում լսել այդ բաները, չեմ ուզում:

ՍՈՒՐԵՆ – Ոչ, այս մեկը լսիր: Ես ապտակը ստացել եմ մի շատ պատվարժան կնոջ պատճառով: Եթե կուլ չտայի պիտի կռվեի, եթե կռվեի, այդ կինը պիտի խայտառակվեր: Լսիր, ինչպես պատահեց:

ԵՐԱՆՈՒՀԻ – (Ականջները փակելով): Չեմ ուզում լսել, չեմ ուզում:

ՍՈՒՐԵՆ – Դե լավ, թող մնա: Լսեցի՞ր: Մարգարիտ, հայրիկը պարտավոր է իր անունն ազատել խայտառակությունից: (Ժամացույցին նայելով): Օ, տասնկեսն է, ես շոգիացա...

ԵՐԱՆՈՒՀԻ –Էլի ո՞ւր ես գնում կեսգիշերին, անառակ...

ՍՈՒՐԵՆ – Աստղերն ուսումնասիրելու: Առլովան ինձ սպասում է: (Գնում է նախասենյակի դռներով, երգելով):

ՄԱՐԳԱՐԻՏ – Տեսա՞ր, մայրիկ, շառլատան որդիդ ավելի ազնիվ է դատում, քան խելոքը:

ԶԱՐՈՒՀԻ – (Սեղանատան դռներից): Խոհարարը հարցնում է ընթրելո՞ւ եք:

ԵՐԱՆՈՒՀԻ – Ես չեմ ուզում: Ահ, էլի գլխացավս բռնում է:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես էլ չեմ ընթրելու: (Զարուհին գնում է): Մայրիկ գնա, պառկիր, քո ներվերը բոլորովին քայքայվել են: Ես էլ ամբողջ գիշեր չեմ քնել, գլուխս պտտվում է անքնությունից: (Համբուրվում է մոր հետ և անցնում իր սենյակ):

ԵՐԱՆՈՒՀԻ – (Նայելով նրա ետևից թախծալի): Երանի դու ինձանից բախտավոր լինես: Ահ... (Անցնում է սեղանատուն):

ՏԵՍԻԼ 6

ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

Դուրս են գալիս աջ կողմի առաջին դռներից, երբ Երանուհին արդեն բոլորովին հեռացել է:

ԱՆԴՐԵԱՍ – Փառք Աստծո, վերջապես ցրվեցին: Այո, գիշերն ավելի լավ է, քան ցերեկը: Մթությունը մեղքի ընկերն է:

ՍԱՂԱԹԵԼ – (Տերողորմյայի տատիկները մեկ-մեկ գցելով): Խեր, շառ, Աստված: Խեր, շառ, Աստված: Խեր: Ինչքան գցում եմ խեր է գալիս:

ԱՆԴՐԵԱՍ – Բայց սիրտս ասում է, որ լավ բան չենք մտածել անելու:

ՍԱՂԱԹԵԼ – Ավելի վատ կլինի եթե չանես: Բացատրել ես, խնդրել ես, աղաչել ես, չի եղել, ճարդ ինչ: Խոմ չես կարող պատիվդ թողնել թշնամուդ ձեռքում:

ԱՆԴՐԵԱՍ – Զանգակ տուր, տեսնենք ինչ են անում:

ՍԱՂԱԹԵԼ – Ձայն-ձուն չի լսվում: (Մատը սեղմում է էլեկտրական զանգակի կոճակին՝ որ գտնվում է աջ պատի առաջին դռների մոտ: Բեմի հետևից լսվում է զանգակի թույլ հնչյունը):

ԱՆԴՐԵԱՍ – Քեզ համար ինչ, դու քո բանը դրստեցիր: Լավ կուրտաժ է իմ մեղքն ինձ ծախելու համար – հինգ հարյուր սաժեն տափ:

ՍԱՂԱԹԵԼ – Ես քեզ խնդրեցի՞, որ ինձ այս գործին խառնես:

ԱՆԴՐԵԱՍ – Դե լավ: (Զարուհուն, որ ներս է մտել սեղանատնից): Ո՞վ կա սեղանատանը:

ԶԱՐՈՒՀԻ – Ոչ ոք:

ԱՆԴՐԵԱՍ – (Կեղծ բարկանալով): Բա ինչո՞ւ ես ճրագները վառել: (Զարուհին ուզում է գնալ): Խանումդ ի՞նչ է անում:

ԶԱՐՈՒՀԻ – Հենց հիմա պառկեց: Էլի գլխացավը բռնել է:

ԱՆԴՐԵԱՍ – Պրծանք, այդ էր պակաս: Կանչիր այստեղ Մարգարիտին:

ԶԱՐՈՒՀԻ – Նա քնած է:

ԱՆԴՐԵԱՍ – Քնա՞ծ: Այդպես շո՞ւտ: Լավ գնա: Մենք կլուբ ենք գնում, ասա խանումիդ: Դու էլ կարող ես հանգստանալ: Ես ինքս դռները կփակեմ: Հարկավոր չես: Հանգցրու սեղանատան ճրագները, դուք տնտեսություն ասած բանը չգիտեք: Կարծես ես փող եմ կտրում կամ մարդ կողոպտում, որ ամեն ինչ շռայում եք; Գնա:

ԶԱՐՈՒՀԻ – Գնում է սեղանատուն: Փոքր անցած, այստեղ տիրում է մթություն:

ՍԱՂԱԹԵԼ – Մեկը հիվանդ է, մյուսը քնած, Աստված ինքն է օգնում քեզ:

ԱՆԴՐԵԱՍ – Ահ մի հիշիր այս րոպեին Աստծու անունը: Նա ավելի կբարկանա մեզ վրա: Լավ էր, չէ՞, որ ասացի, թե կլուբ ենք գնում: Տես ով կա նախասենյակում: (Սաղաթելը նայում է դեպի նախասենյակ): Դռները կողպիր. (Հուշիկ նայելով մոտենում է Մարգարիտի սենյակի դռներին և ականջ դնում: Նայում է իր գրպանի ժամացույցին և վերադառնում բեմի կենտրոնը):

ՍԱՂԱԹԵԼ – (Նախասենյակը նայելուց հետո դռները ծածկում է) Այնտեղ որ ոք չկա: Ավելի հարմար ժամանակ չէիր կարող ընտրել: (Տերողորմյան դնում է գրպանը): Ինչի՞ մասին է մտածում:

ԱՆԴՐԵԱՍ – Երբ սատանան մարդու գլխի մեջ մի չար միտք է մտցնում, սրտի մեջ էլ մի ահ է գցում: Ծածկիր սեղանատան դռները: (Սաղաթելը ծածկում է): Կարծես, այնտեղից աչքեր են նայում մեզ: Մոտս կաց: (Նստում է բազկաթոռներից մեկի վրա):

ՍԱՂԱԹԵԼ – (Գալով բեմի առաջ) Էհ, շատ բաներ ես արել, արա այդ մեկն էլ:

ԱՆԴՐԵԱՍ – (Կիսաձայն) Արել: Ես մենակ չեմ արել, դու էլ միշտ հետս ես եղել: Էհ, էլի հորդ կերպարանքն եկավ, կանգնեց աչքիս առաջ: Նա ասում էր. «Չարը չարության ճանապարհում կկորչի»:

ՍԱՂԱԹԵԼ – Էհ, դու էլ ժամանակ գտար հորս հիշելու:

ԱՆԴՐԵԱՍ – Հիսունվեց տարեկան մարդ եմ, Սաղաթել, գլխովս հազար ու մի փորձանք է անցել: Երդում եմ կոտրել, միամիտներ եմ խաբել, խեղճեր եմ գռփել ու կողոպտել, երեք անգամ կաշառքով ազատվել եմ դատաստանից, բայց երբեք այս դրության մեջ չեմ եղել: Ինչի՞ցն է այս, Սաղաթել: Այ, տես, սառը քրտինքը պատեց մարմինս:

ՍԱՂԱԹԵԼ – Վաղն այս ժամանակ կհաշվես ու կտեսնես, որ մոտ յոթ հարյուր հազար ռուբլու կալվածք է մնացել ձեռքումդ:

ԱՆԴՐԵԱՍ – Ագահություն, աչքածակություն, ուրիշ ոչինչ:

ՍԱՂԱԹԵԼ – Էհե, դու սկսում ես դատողություններ անել: Շտապիր գիշերն անցնում է:

ԱՆԴՐԵԱՍ – Չկարծես, թե միայն փողի համար եմ անում Սաղաթել: Ոչ, այլ այդ լակոտին խրատելու համար: (Վեր է կենում):

ՍԱՂԱԹԵԼ – Իհարկե: Այստեղ պատվի խնդիր կա, փողն ինչ...

ԱՆԴՐԵԱՍ – (Ատամները կրճտելով): Գոռոզ, ամբարտավան: Ուզում է ինձ խեղդել, ինձ, որ կարող եմ հարյուրին խեղդել այս ճանկերովս: Աա, եթե ձեռքս ընկնեին այդ թղթերը, ցույց կտամ քեզ, թե ով եմ ես... Սուս, այդ ի՞նչ ձայն է:

ՍԱՂԱԹԵԼ – Ես ոչինչ չեմ լսում:

ԱՆԴՐԵԱՍ – Դեհ, Անդրեաս, մի թուլանար ամոթ է: Այս մեկն էլ: Ինչ որ լինելու է այն պիտի լինի: (Զգույշ քայլերով անցնում է, Մարգարիտի սենյակը):

ՍԱՂԱԹԵԼ – Գայլը մտավ գառների փարախը – կասեր հայրս: (Մոտենում է սեղանատան դռներին և լույսը հանգցնում: Բեմում տիրում է խավար): Այսպես լավ է, ինձ չեն տեսնի: (Լռություն: Սեղանատնից լսվում է ժամացույցի տասնմեկ զարկը): Հիմա եղ էլ եմ վախենում: Երկարատև լռություն:

ԱՆԴՐԵԱՍ – (Երևում է դռների մեջ, չափազանց այլայլված է, դողում է, բայց ուրախ է: Ձեռում ամուր բռնած է թղթերի մի ծրար: Լռություն: Հետո շշնջյունով): Սաղաթել:

ՍԱՂԱԹԵԼ – Այստեղ եմ: (Սենյակը նորից լուսավորում է):

ԱՆԴՐԵԱՍ – (Առաջ է գալիս): Ահա նրա հոգին: Ահա ինձ քնից ու հանգստությունից զրկողը: Հարստությունս, անունս, պատիվս, յոթ հարյուր հազարի

փրկությունը:

ԱՂԱԹԵԼ – Դե, գնանք, հեռանանք այստեղից:

ԱՆԴՐԵԱՍ – Թող դեռ տեսնեմ, նրանք են թե չէ: (Ծրարը գննում է): Իսկ և իսկ: Ինչպես լավ հաջողվեց: Նա քնած էր երեխայի պես, գիրքը կրծքի վրա բռնած: Բանալիները բարձի տակ էին: Վերցրի ու... ձայն չե՞ս լսում: (Ծրարը շտապով դնում է գրպանը):

ՍԱՂԱԹԵԼ – (Անհանգիստ): Լսում եմ: Հեռանանք:

Փողոցից լսվում է ոստիկանական շվոցի ձայն:

ԱՆԴՐԵԱՍ – Աա, ոստիկանները գող են բռնում: Երևի, խեղճերից մեկը քաղցածությունից ստիպված, գողացել է մի փալասի կտոր: Սուս հեռանանք:

ՍԱՂԱԹԵԼ – (Մոտենում է աջ կողմի առաջին դռներին, մի վայրկյան կանգ է առնում և անհետանում):

ԱՆԴՐԵԱՍ – Հետևում է նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դուրս է գալիս գիշերային սպիտակ հագուստով, նայում է աջ ու ձախ այլայլված նկատում է հորը, որ այդ պահին արդեն դռների մոտ է: Ուժգին ցնցվում է ու ճչում թույլ): Հայրիկ: (Մի քանի քայլ առաջ է վազում և բարձր ճչում): Հայրիկ:

ԱՆԴՐԵԱՍ – Դռների միջից սարսափահար հետ է նայում և անհետանում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հեկեկալով ընկնում է հատակի վրա:

Վարագույրն իջնում է հանդարտ:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Առաջին արարվածի բեմը: Վաղ երեկո է: Գրասեղանների վրա վառվում են էլեկտրական ճրագներ: Գրասենյակի դռները բաց են: Այնտեղ ոչ ոք չկա: Վարագույրը բարձրանալիս՝ ձախ կողմի գրասեղանի քով նստած է Բագրատը և դիտում է իր գործարանի հաշիվները: Սեղանի մոտ կանգնած է Կարինյանը և բացատրություններ է տալիս: Դեպի աջ, Անդրեասի գրասեղանի քով նստած է Սաղաթելը, ոտը ոտի վրա դրած և հանդարտ տերողորմյա է գցում:

ՏԵՍԻԼ 1

ԲԱԳՐԱՏ, ՍԱՂԱԹԵԼ ԵՎ ԿԱՐԻՆՅԱՆ

ԲԱԳՐԱՏ – Խողովակների համար պարտ եմ մոտ ութ հազար ռուբլի: Մեքենաների համար վճարված է քսան և յոթ հազար երկու հարյուր: Ընդհանուր գումարն է ծախսերի՝ երեք հարյուր տասներկու հազար... (Մեկուսի):

Եվ այս բոլորը կարող է ձեռքիցս դուրս գալ: Ահ: (Վեր է կենում) Թաքցրու այս հաշիվը առայժմ հայրիկից; Հին վաճառականները սարսափում են համարձակ ձեռնարկություններից: Նրանց համար այսօրվա կոպեկը վաղվա ռուբլուց թանկ է:

ՍԱՂԱԹԵԼ – Ինձ համար էլ այդպես է, քիչ լինի, նաղդ լինի: (Տերողորմյան տրորում է ձեռքերի մեջ և հոտ քաշում):

ԲԱԳՐԱՏ – Խանութպանի սկզբունք: (Կարինյանին) Դուք ազատ եք, կարող եք գնալ:

ԿԱՐԻՆՅԱՆ – (Սեղանի վրայից վերցրել է հաշվետետրը) Ես ուզում էի ձեզ հիշեցնել...

ԲԱԳՐԱՏ – Ձեր ռոճիկի մասի՞ն: Գիտեմ: Լավ, լավ կմտածեմ:

ԿԱՐԻՆՅԱՆ – Վեց ամիս է միևնույնն եք ասում: Հարյուր ռուբլի ամսականը իմ տաժանակիր աշխատանքի համար շատ չնչին վարձ է:

ԲԱԳՐԱՏ – Բավական մեծ վարձ է, եթե համեմատենք ձեր չնչին կրթության հետ: Մեր ժամանակում գնահատվում է միայն տաղանդը և գիտությունը:

ԿԱՐԻՆՅԱՆ – Իսկ երկար տարիների բարեխիղճ և ազնիվ ծառայությունը ոչի՞նչ:

ԲԱԳՐԱՏ – Լավ, հեռացեք: Ես չեմ սիրում, երբ մարդիկ աշխատում են ինձ բան սովորեցնել: Ցտեսություն:

ԿԱՐԻՆՅԱՆ – (Գնում է գրասենյակ դժկամակ դեմքով: Մի փոքր անցած այնտեղ տիրում է մթություն):

ՏԵՍԻԼ 2

ԲԱԳՐԱՏ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

ԲԱԳՐԱՏ – (Անհամբեր) Քեռի, այժմ ասա տեսնեմ, ի՞նչ նորություն կա:

ՍԱՂԱԹԵԼ – Գոհություն Աստծու, ամեն բան կարգին է: (Հանդարտ ոտքի է կանգնում, ուղղելով արխալուղի փեշերը):

ԲԱԳՐԱՏ – Օթարյանն եկե՞լ է այստեղ:

ՍԱՂԱԹԵԼ – (Ուսերը վեր քաշելով): Ես ինչ գիտեմ, խոմ պահապան չեմ: (Սկսում է ծանր քայլերով անցուդարձ անել):

ԲԱԳՐԱՏ – Անհրաժեշտ է իմանալ, տեսնվե՞լ է նա Մարգարիտի հետ:

ՍԱՂԱԹԵԼ – Կարող է տեսնված լինի, կարող է չլինի, Աստծու բանն է:

ԲԱԳՐԱՏ – Ես չեմ կարողանում ամբողջ օրը Մարգարիտին հանդիպել: Չգիտեմ ինչու, նա փակվել է իր սենյակում և ոչ ոքի չի ընդունում:

ՍԱՂԱԹԵԼ – Աստծու բանն է:

ԲԱԳՐԱՏ – Առհասարակ այսօր մեր տանը տարօրինակ տրամադրություն է տիրում: Նկատեցի՞ր հայրիկը որքան փոխված էր ճաշի ժամանակ: Ես երբեք նրան այդպես անկապ խոսելիս չեմ տեսել: Նա սովորականից ավելի էր գինի խմում: Այդ արթուն մարդը, կարծես ուզում էր դիտմամբ հարբել:

ՍԱՂԱԹԵԼ – Աստծու բանն է:

ԲԱԳՐԱՏ – Քեզ ինչ է պատահել, չեմ հասկանում: Այսօր շատ շուտ-շուտ ես հիշում Աստծու անունը:

ՍԱՂԱԹԵԼ – Ես Աստծուն միշտ հիշում եմ; Դու էիր, որ ուզում էիր ինձ շեղել նրա ճանապարհից քո ուսումնական բացատրություններով:

ԲԱԳՐԱՏ – (Կանգ է առնում և նայում նրան խորը, խորը) Դու ինձ հանդիմանո՞ւմ ես: Այդ վատ չէ: Ես ինքս պատրաստվել էի քեզ մի թեթև նախատինք տալու:

ՍԱՂԱԹԵԼ – Նախատինք տալո՞ւ: Ի՞նձ: Ի՞նչու համար, ի՞նչ եմ արել:

ԲԱԳՐԱՏ – (Մոտենալով, ձեռը դնում է նրա ուսի վրա և կես բարեկամաբար, կես լուրջ) Արի պատվելի քեռի, խոստովանիր, որ դու շատ կցանկանայիր համոզվել, որ (Ձեռքը դեպի երկինք բարձրացնելով) այնտեղ ոչինչ չկա:

ՍԱՂԱԹԵԼ – Յանի, ի՞նչ ես ուզում ասել, պարզ խոսիր:

ԲԱԳՐԱՏ – Ուզում եմ ասել, պատվելի քեռի, որ քեզ նման մարդկանց համար շատ ձեռնատու է ոչ այնտեղ (Ձեռքը բարձրացնում է դեպի երկինք) երկյուղ ունենալ և ոչ այստեղ. (Ձեռքը խփում է Սաղաթելի ուսին):

ՍԱՂԱԹԵԼ – Իսկ դո՞ւ ինչ ես, դո՞ւ: Դո՞ւ ումից և ինչից ես վախենում, անհավատ:

ԲԱԳՐԱՏ – Ե՞ս: Ահա (Ձեռը զարկում է իր ճակատին) թե ինչից եմ վախենում: Իմ միակ Աստվածը բանականությունն է: Հիմա, քեռի, դառնանք գործնականին: Ասա, տեսնեմ, քսանհինգ տարվա ընթացքում որքա՞ն ես գողացել Էլիզբարյաններից:

ՍԱՂԱԹԵԼ – (Ցնցվում է և վիրավորված ձևանում) Ի՞նչ, գողացե՞լ: Հարբա՞ծ ես, ի՞նչ է:

ԲԱԳՐԱՏ – (Սառը լրջությամբ) Ես երբեք չեմ հարբում: Լսիր, քեռի, հորս հարստահարել ես, ներել է, այդ իր հաշիվն է, իսկ ես... ես խոնարհաբար խնդրում եմ, իմ գործերում ձեռներդ մի փոքր մաքուր պահես:

ՍԱՂԱԹԵԼ – Տեր Աստված, Տեր Աստված, այս տղան գժվել է:

ԲԱԳՐԱՏ – Մի քիչ առաջ, երբ քննում էի գործարանիս հաշիվները, նկատեցի, որ քո ձեռքով գնված նյութերը մեկով մեկ ավելի թանկ են նստել: Ծախքերի համար արդարացուցիչ փաստեր չես ներկայացրել: Ինչ որ էլ ներկայացրել ես, կեղծ է: Մի խոսքով, բավական վերադիր ես արել: Ես գիտեմ, որ քո արածը սովորական բան է գործակատարների համար, բայց իմ վերաբերմամբ զգույշ կաց:

ՍԱՂԱԹԵԼ – (Վրդովված՝ զանազան խոշոր շարժումներ է անում, կարծես պատերին բողոքելով) Այստեղ մտիք արեք, սրան, չի ամաչում իր հարազատ քեռուն գող է անվանում: Եվ երկինքը չի որոտում, պատերը ձայն չեն հանում: Վայ մեզ, վայ մեր օրին:

ԲԱԳՐԱՏ – Է, թող այդ բոշայական ձևերը: Նրանք ինձ խաբել չեն կարող: Ես քեզ կրկին անգամ խնդրում եմ, ձեռքերդ մաքուր պահիր: Ես արթուն մարդ եմ և վրիժառու, մորս եղբորն անգամ չեմ խնայիր:

ՍԱՂԱԹԵԼ – Անամոթ, չի էլ կարմրում ասածներից:

ՏԵՍԻԼ 3

ԲԱԳՐԱՏ, ՍԱՂԱԹԵԼ ԵՎ ԱՆԴՐԵԱՍ

ԱՆԴՐԵԱՍ – (Գալիս է ձախ դռնից: Ներքուստ անհանգիստ է, բայց աշխատում է անդորր ձևանալ) Հիմա ի՞նչ անենք, Սաղաթել: Կարծես վատ չի լինի գնալ կլուբ և մի պույլկա պրեֆերանս խաղալ: Վաղուց է չեմ եղել այնտեղ: Հըմ, ի՞նչ կասես, պարոն ինժեներ:

ԲԱԳՐԱՏ – Շատ ուրախ եմ, որ ուզում ես հասարակության մեջ երևալ: Կլուբ չգնալդ չար լեզուներին հազար ու մի բամբասանքի նյութ է տալիս: Բայց ես զարմանում եմ, որ այդպես հանգիստ ես:

ԱՆԴՐԵԱՍ – Ինչո՞ւ չպիտի հանգիստ լինեմ: Փառք Աստուծո, խոմ տունս կրակ չի ընկել կամ վեքսիլներս պրոտեստ չեն անում: (Անհանգիստ նայում է դեպի այն դռները, ուսկից դուրս է եկել):

ԲԱԳՐԱՏ – Երեկ դու այդպես չէիր խոսում:

ԱՆԴՐԵԱՍ – Երեկը երեկ էր, այսօրը - այսօր: Սաղաթել այդ տերողորմյան տուր ինձ: (Սաղաթելը տալիս է): Էհ, փառք քեզ Աստված, մեծ է քո ողորմությունը: (Նստում է իր գրասեղանի մոտ):

ԲԱԳՐԱՏ – Հայրիկ, ուրեմն, դու այլևս չե՞ս վախենում Օթարյանից:

ԱՆԴՐԵԱՍ – (Ծիծաղում է նյարդային, արվեստական ծիծաղով): Հի, հի, հի, լսեցի՞ր Սաղաթել: Ասում է Օթարյանից չե՞ս վախենում: (Որդուն): Ո՞վ է Օթարյանը Ե՞րբ եմ ես նրանից վախեցել կամ ումի՞ց եմ վախեցել: Անդրեաս Էլիզբարովը վախեցող պտուղներից չէ: (Դարձյալ նայելով ձախ դռների կողմը) Սաղաթել, տես ով կա այն սենյակում: (Բագրատին) Հիմար բաներ ես խոսում:

ՍԱՂԱԹԵԼ – (Նայում է ձախ դռներով դեպի ներս): Այստեղ ոչ ոք չկա:

ԱՆԴՐԵԱՍ – Աչքիս մեկը երևաց սպիտակ հագուստով, երկար մազերով: Ծածկիր այն դռները: Օթարյան – չէ, շուն, կատու, մուկ, խլեզ:

ԲԱԳՐԱՏ – (Ուշադիր դիտել է հորը) Զարմանում եմ: Երեկ դու համարյա սարսափում էիր Օթարյան անունից, այսօր ծաղրում ես նրան: Իսկ ես, ընդհակառակը, երեկ նրան արհամարհում էի, այսօր չեմ կարող:

ԱՆԴՐԵԱՍ – Այդ քո գործն է: Ինչ ուզում ես, արա: Դեհ Սաղաթել, գնո՞ւմ ենք կլուբ, թե չէ:

ՍԱՂԱԹԵԼ – (Համաձայնության նշան է անում):

ԲԱԳՐԱՏ – Երեկ երեկոյան ես Մարգարիտի մոտ տեսա և կարդացի այն թղթերը, որոնց գոյությունը քեզ հայտնի է: Եթե Մարգարիտն այդ թղթերը

վերադարձրել է Օթարյանին, չգիտեմ ինչպես կարելի է հանգիստ լինել:

ԱՆԴՐԵԱՍ – Դու կարող ես այդ մասին չմտածել: Գործարանդ կիսատ չի մնալ:

ԲԱԳՐԱՏ – (Ուրախացած): Ինչպե՞ս, հայրիկ, բացատրիր, չէ՞ որ գործը որքան քեզ, նույնքան էլ ինձ է վերաբերվում:

ԱՆԴՐԵԱՍ – (Վրդովված) Դադարելո՞ւ ես, թե՞ չէ: Գլուխս տրաքացրիր: Ես այսօր տրամադրություն չունիմ այդ մասին խոսելու:

ԲԱԳՐԱՏ – (Տարակուսանքով նայում է նախ նրան, ապա Սաղաթելին) Ոչինչ չեմ հասկանում: Պետք է անպատճառ տեսնվել Մարգարիտի հետ: Ես կգնամ և ուժով էլ լինի՝ կմտնեմ նրա սենյակը: Այստեղ մի բան կա, որ ինձանից թաքցնում եք: (Գնում է ձախ դռներով):

ՏԵՍԻԼ 4

ԱՆԴՐԵԱՍ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ

ԱՆԴՐԵԱՍ – Ահ: (Նյարդային թափով տերողորմյան ձգում է սեղանի վրա և վեր է կենում) Քիչ էր մնում բերանիցս խոսք թոցնեի: Չի լինում, ինչքան աշխատում եմ հանգիստ ձևանալ, չեմ կարողանում:

ՍԱՂԱԹԵԼ – Մարդասպանն էլ վերջ ի վերջո մարսում է իր հանցանքը: Դժվարն այսօր է, էգուց, հետո կմոռանաս, կգնա:

ԱՆԴՐԵԱՍ – Այդ աղջկա կերպարանքը կեսգիշերին, սարսափած դեմքը, ձայնը... Ես մինչև գերեզման չեմ մոռանալ:

ՍԱՂԱԹԵԼ – Երեխա ես, ուրիշ ոչինչ: Դու այն ասա - ուրիշները չիմանան, թե չէ՝ Մարգարիտն ինչ: Նա աղջիկ է, կների քեզ:

ԱՆԴՐԵԱՍ – (Անցուդարձ անելով) Մի ասա, չես իմանում ինչ եմ զգում: (Ցնցվելով) Տես, ով կա գրասենյակում, ձայն լսեցի:

ՍԱՂԱԹԵԼ – (Նայում է) Ոչ ոք չկա: (Դռները ծածկում է, հետո տերողորմյան վերցնում):

ԱՆԴՐԵԱՍ – Ամեն կողմից ձայն եմ լսում, ամեն տեղ մարդիկ եմ տեսնում: Ի՞նչ կմտածի հիմա իր հոր մասին: Նա երևի, ամոթից տանջվում է: «Հայրիկ», որ գոռաց սարսափից ոտներս թուլացան, քիչ էր մնում դռների մոտ ընկնեի: Սաղաթել ինձ թվում է, որ նա իմ հոգեհան հրեշտակն է, հետևում է ինձ շուքի պես և վերջը

պիտի բռնի օձիքս և ասի. «Հաշիվ տուր, ես քո դատավորն եմ»: Ի՞նչ պիտի ասեմ: Սաղաթել, ես ու դու շատ բաներ ենք արել, բայց այս մեկը չենք մարսիլ, կմնա մեր կոկորդում, կտեսնես...

ՍԱՂԱԹԵԼ – Իհարկե, եթե քեզ այդպես կպահես, ինքդ քեզ փորձանքի մեջ կգցես: Պետք է սառը լինել: Մտածիր, թե ինչ ահագին հարստություն ես ազատել, այն ժամանակ արածդ քեզ ոչինչ կերևա: (Լռություն) Հա, քանի միտդ է խոստումդ կատարիր: Մի փոքրիկ թուղթ տուր, որ հինգ հարյուր սաժեն հող քաղաքի այսինչ տեղում բաշխում ես ինձ:

ԱՆԴՐԵԱՍ – Անաստված, դու հենց քո մասին ես մտածում: Ագահ:

ՍԱՂԱԹԵԼ – (Հեգնաբար): Ագահ, քսանից մեկն է ինձ տալիս, էլի ես եմ ագահը:

ԱՆԴՐԵԱՍ – Լավ, հետո կտամ:

ՍԱՂԱԹԵԼ – Ոչ, ոչ, հիմա, հետո կուրանաս: Ես քեզ ճանաչում եմ:

ԱՆԴՐԵԱՍ – (Կատաղելով) Հետո, ասում եմ:

ՍԱՂԱԹԵԼ – (Նայում է նրան սուր և խորհրդավոր հայացքով) Դու գիտես:

ԱՆԴՐԵԱՍ – (Հասկանում է նրա միտքը) Ա, սադայել, դու հորդ գերեզմանն էլ տակնուվրա կանես մի ոսկու համար: (Մոտենալով գրասեղանին): Տուր ինձ մի կտոր թուղթ:

ՍԱՂԱԹԵԼ – Ես արդեն ինքս գրել պատրաստել եմ, մնում է, ստորագրես: (Հանում է իր գրպանից մի գրած թուղթ և տալիս է նրան):

ԱՆԴՐԵԱՍ – (Թուղթը կարդալով): Սատանա, նոտարիուսի պես է գրել: Հինգ հարյուր սաժեն: Քաղաքի կենտրոնում ամենալավ տափերիցս մեկը: Շատ է, այսքանը չեմ կարող տալ:

ՍԱՂԱԹԵԼ – (Սառն) Խոստացել ես:

ԱՆԴՐԵԱՍ – Շատ է ասում եմ: Կեսը նվիրելու եմ քաղաքային ուսումնարանի համար: Վաղուց են խնդրում ինձ այդ մասին:

ՍԱՂԱԹԵԼ – Լավ բարեգործություն է, ուրիշի հաշվով: Ստորագրիր:

ԱՆԴՐԵԱՍ – Շատ է, ասում եմ:

ՍԱՂԱԹԵԼ – (Սառնությամբ ձեռը մեկնելով, որ թուղթը վերցնի) Դու գիտես: Ես կարծում էի, որ ազնիվ վաճառականն իր խոսքի տերը պիտի լինի:

ԱՆԴՐԵԱՍ – (Ատամները կրճտելով) Ա, գազան: (Ստորագրում է):

ՍԱՂԱԹԵԼ – (Թուղթը վերցնում է, կանխապես ստորագրությունը ցամաքիչով չորացնելով, և ծոցը դնում): Շնորհակալ եմ: Այժմ կարող ես ինձ վրա հույս դնել: Դե լավ, քիչ մտածիր: Մեղքն այն ժամանակ է մեղք, երբ հայտնի է հասարակությանը: Իսկապես, ի՞նչ ես արել: Մի քաղցած գայլի ատամները հանել ես – պրծավ գնաց: Թող այժմ գոռա, ինչքան ուզում է, թե Էլիզբարովը նրա հորը կողոպտել է: Փաստեր կպահանջենք:

ԱՆԴՐԵԱՍ – Այո, փաստեր կպահանջենք: Թող այժմ գնա դատարան: Այժմ ես էլ եմ նրա դատավորը: «Պարոն, կասեմ նրան, դատավորների առաջ, հաստատիր, բեր ապացույցներ և ժառանգությունդ ստացիր»: Նա ապացույցներ չունի, հա, հա, հա, չունի, կորել են, անհետացել: Եվ ես կթքեմ նրա երեսին, վրեժս կառնեմ: Օ, Սաղաթել, ես շատ եմ տանջվել: (Բաց է անում բանալիով գրասեղանի արկղը) Ահա, այստեղ է նրա լեզուն, գոռոզությունը, նրա հոգին: (Հանում է ծրարը և նայում): Երեկ ես էի նրա ձեռքում, այսօր նա է իմ ճանկերում:

ՍԱՂԱԹԵԼ – Այրիր, կորչեն, ինչո՞ւ ես պահում:

ԱՆԴՐԵԱՍ – Օ, այնպիսի մի խարույկ սարքեմ, որ քեֆդ գա: Բայց դեռ թող մնա այստեղ, թող տեսնեմ, կշտանամ: (Թղթերը հետ է դնում): Մտեք այստեղ: Անդրեաս Էլիզբարովի ձեռքից Գաբրիել հրեշտակապետն էլ չի կարող ձեզ ազատել: Էհ, այժմ ումից եմ վախենում: Իմ աղջկանից:

ՍԱՂԱԹԵԼ – Նա երբեք քեզ չի մատնիլ:

ԱՆԴՐԵԱՍ – (Ցնցվելով, բանալին շտապով գրպանն է դնում) Ահ, ոտքի ձայն լսեցի: Տես ո՞վ է գալիս: Պետք է սառնարյուն լինել...

ՍԱՂԱԹԵԼ – (Մոտեցել է նախասենյակի դռներին, բաց է արել ու նայել): Նա է: (Դեպի նախասենյակ) Համեցեք... (Հետ է քաշվում, գլուխ տալով Օթարյանին):

ՏԵՍԻԼ 5

ԱՆԴՐԵԱՍ, ՍԱՂԱԹԵԼ ԵՎ ՕԹԱՐՅԱՆ

ՕԹԱՐՅԱՆ – (Ներս է մտնում անհանգիստ դեմքով, գլուխ է տալիս Անդրեասին, անուշադիր թողնելով Սաղաթելին: Վերարկուով է): Ներեցեք, որ ձեզ անհանգստացնում եմ: Ասացեք, ի սեր Սատծու, ինչ է պատահել ձեր տանը: Ինձ ասացին, որ մայրիկն ու օրիորդ Մարգարիտը հանկարծակի հիվանդ են:

ԱՆԴՐԵԱՍ – Շնորհակալ ենք, պարոն, որ այդպես մտածում ես մեր մասին: Բայց մեր տանը հիվանդ չկա: Ո՞ւրիշ:

ՕԹԱՐՅԱՆ – Պարոն Անդրեաս, ես գիտեմ, որ ամեն բան արդեն հայտնի է ձեզ: Չեմ թաքցնիլ, ինձ համար Մարգարիտի առողջությունը թանկ է: Ահա երրորդ անգամն է այսօր գալիս եմ, ինձ չեն ընդունում ասելով, թե հիվանդ է: Այդ ինձ վախեցնում է: Անկարելի է, որ Մարգարիտը թեթև տկարության պատճառով ինձ չընդունի: Անշուշտ նա շատ ծանր հիվանդ է:

ԱՆԴՐԵԱՍ – (Հեգնաբար) Սաղաթել, լսո՞ւմ ես: Մարդը տանջվում է: Հանգիստ կաց, պարոն, իմ աղջիկը հիվանդ չէ, միայն երևի չի ուզում քեզ ընդունել: Սաղաթել, կարծեմ ժամանակն է կլուբ գնալու:

ՍԱՂԱԹԵԼ – Իհարկե: (Նշան է անում Անդրեասին, որ իրան սառն պահի):

ԱՆԴՐԵԱՍ – Է, մնաս բարով պարոն սիրահար: Մեզ ներիր, գործ ունենք: Եթե ուզում ես, կարող ես նստել, հանգստանալ: Բազրատը տանն է, կարելի է նա քեզ ընդունի: (Անցնում է բեմի խորքը դուրս գնալու համար):

ՕԹԱՐՅԱՆ – (Զարմացած, մի քանի վայրկյան լուռ դիտել է նրան): Զարմանալի է, բոլորովին անհասկանալի...

ԱՆԴՐԵԱՍ – (Սառը նայելով իր ժամացույցին) Ի՞նչն է զարմանալի, պարոն փիլիսոփա:

ՕԹԱՐՅԱՆ – Ձեր խոսակցության եղանակը, ձեր սառնությունը, ձեր դեմքի հեգնական արտահայտությունը:

ԱՆԴՐԵԱՍ – (Տաքանալով) Բաս ինչպես կհրամայես խոսեմ, աղաս, հը՞: Ուզում ես, որ վիզս ծռեմ, վախենամ, աղաչեմ, պաղատեմ: (Լուրջ և խիստ): Հերիք է: Դու չհասկացար պատիվդ: Ես խոնարհվեցի քրիստոնեաբար, դու գլխիս նստեցիր: Համբերությունն էլ չափ ունի: Այժմ կարող ես գնալ, ուր որ ուզում ես, իմ տան դռները քեզ համար փակ են:

ՍԱՂԱԹԵԼ – (Առանձին Անդրեասին) Մի տաքանար, լավ չէ:

ՕԹԱՐՅԱՆ – (Հուզված և ապշած մի քանի վայրկյան լուռ նայում է) Ահա թե ինչ: Ուրեմն, կաշկանդված լեզվի կապերը քանդվել են: Ուրեմն երեկվա օրն այստեղ մոռացվե՞լ է: Այսօր իմ առջև փակում եք այն դռները, որոնց երեկ բաց էիք անում կրունկների վրա: Ասացեք, պարոն Անդրեաս, դուք ինձ ուզում եք վիրավորել իսկապես, թե՞ կատակ եք անում:

ԱՆԴՐԵԱՍ – Ես գյադա - գյուդաների հետ կատակ չեմ անում:

ՍԱՂԱԹԵԼ – Անդրեաս, Անդրեաս...

ԱՆԴՐԵԱՍ – (Վրդովված) Թող ինձ, բավական է ինչքան երես տվեցի լակոտի մեկին:

ՕԹԱՐՅԱՆ – (Կատաղի) Պարոն...

ԱՆԴՐԵԱՍ – Գոռա որքան ուզում ես: Ձայնդ յոթերորդ երկինք կբարձրանա, բայց Աստծուն չի հասնիլ: Շարունակիր էլի, ինչո՞ւ ես լռել: «Դուք ինձ օգնելով, ինձ վիրավորել եք: Ես ինքնասեր մարդ եմ, տանջվել եմ: Դուք իմ փողերով եք ինձ որդեգրել: Ձեր հարստության կեսն իմն է: Տվեք»: Անպատկառ: Ահա վեց ամիս է ես զրկվել եմ իմ հանգստությունից, քնից, ախորժակից: Քո տարածած սուտ լուրերը տանջում էին ինձ գիշեր-ցերեկ: Քո պատճառով մարդիկ ինձ սկսել էին համարել գող և քիչ էր մնում երեսիս թքեին: Քառասուն տարվա մեջ աշխատած անունս ու պատիվս ոտնատակ էին լինում: Այժմ... այժմ բավական է: Դու սպառնում ես ինձ դատի կանչել: Համեցեք, ճանապարհը բաց է, կարող ես գնալ: Իսկ իմ տան դռները փակ են քո առջև ու հավիտյան չեն բացվիլ:

ՍԱՂԱԹԵԼ – (Մեկուսի) Այս մարդն ինքն իր գործը փչացնելու է:

ՕԹԱՐՅԱՆ – (Լսել է մերթ զարմացած, մերթ վրդովվելով, մերթ իրան զսպելով) Եվ այդ համարձակ լեզվով խոսողը Անդրեաս Էլիզբարյա՞նն է: Նա, որ աշխատում էր ինձ մի քանի հազար ռուբլով կաշառել, որպեսզի ես հրաժարվի՞մ իմ արդար պահանջից: Դուք ինձ մինչև անգամ ծաղրո՞ւմ եք: Դուք ինձ վռնդում եք ձեր տնից, ինչպես մի փողոցային սրիկայի՞: Ինչո՞ւ: Որովհետև ես մինչև այսօր խնայել եմ ձեզ՝ հանուն ձեր աղջկա սիրուն: Ասացեք, այդ ինչ կերպարանափոխություն է: Ո՞վ կամ ի՞նչը ձեզ ազատեց երեկվա ողորմելի դրությունից: Ո՞վ ներշնչեց ձեզ այդքան քաջություն:

ԱՆԴՐԵԱՍ – Ես քո սպառնալիքներից մազի չափ չեմ վախեցել:

ՕԹԱՐՅԱՆ – Սուտ եք ասում, պարոն: Դուք ինքներդ այս րոպեիս խոստովանեցիք, որ ես ձեզ զրկել եմ քնից ու հանգստությունից: Կնշանակե, դուք համոզված էիք, որ ձեր հանգստությունն ինձանից է կախված: Զգում էիք, որ բավական է ես ցանկանամ, և դուք կսողաք իմ ոտների տակ:

ԱՆԴՐԵԱՍ – Լիրբ... (Հարձակվում է վրեն):

ՍԱՂԱԹԵԼ – (Մեջ ընկնելով) Անդրեաս, Անդրեաս (Լռություն):

ՕԹԱՐՅԱՆ – (Բռունցքները սեղմելով, ուզեցել է հարձակվել, բայց զսպել է իրեն) Ոչ, ոչ չպիտի խելագարվել: Պետք է իմանալ ինչ է անցել այստեղ: Ես ոչինչ չեմ կարող ասել: Հարկավոր է տեսնվել Մարգարիտի հետ: Նա ինձ կասի

ճշմարտությունը: Երկուսից մեկը – կամ ես խաբված եմ այդ աղջկանից, կամ այս մարդը մի զարհուրել չարագործ է: Մարգարիտը կբացատրի գաղտնիքը: Նա պարտավոր է բացատրել: Ես նրան հավատացել եմ ինչպես երկնային դատավորի: Ես կտանվեմ նրա հետ թեկուզ մահվան անկողնում լինի: (Քայլերն ուղղում է դեպի նախասենյակ):

ԱՆԴՐԵԱՍ – (Սաղաթելին) Հրամայիր ծառաներին, որ ներս չթողնեն նրան:

ՕԹԱՐՅԱՆ – (Կանգ առնելով): Զգուշացեք պարոն, ապա թե ոչ ձեզ հետ կկորչի և ձեր աղջիկը: (Շտապ անցնում է նախասենյակ):

ԱՆԴՐԵԱՍ – (Բարձր ձայնով) Վարդան, դուրս արեք նրան, դուրս: (Դիմում է նախասենյակի կողմը):

ՍԱՂԱԹԵԼ – (Բռնում է նրա թևից) Համբերիր, մարդ Աստծու, համբերիր: Լավ մտածիր, ինչ ես անում:

ԱՆԴՐԵԱՍ – (Մի կերպ ուշքի գալով) Ճշմարիտ ես ասում, ես չպիտի տաքանայի: Տես, որտեղ գնաց:

ՍԱՂԱԹԵԼ – (Նայում է նախասենյակի դռներով): Դռները բաց արին: Բագրատը խնդրում է նրան ներս մտնել:

ԱՆԴՐԵԱՍ – Ի՞նչ պիտի անենք, եթե Մարգարիտը հայտնի նրան:

ՍԱՂԱԹԵԼ – Վկան ես չե՞մ, մարդ Աստծո, ոչ տեսել եմ, ոչ լսել:

ՏԵՍԻԼ 6

ԱՆԴՐԵԱՍ, ՄԱՐԳԱՐԻՏ ԵՎ ՍԱՂԱԹԵԼ, հետո առանց Սաղաթելի

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դուրս է գալիս ձախից և կանգ է առնում դռների առջև: Գունատ է, դեմքի վրա երևում են անքնության և հոգեկան տանջանքների հետքեր):

ԱՆԴՐԵԱՍ – (Տեսնելով նրան, ուժգին ցնցվում է, բայց և արագությամբ իշխում է իրան):

Մի քանի վայրկյան պատկերավոր լռություն

ԱՆԴՐԵԱՍ – (Կանգնած է բեմի մեջտեղում):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Կանգնած է ձախ դռների մոտ և չի նայում հորը):

ՍԱՂԱԹԵԼ – (Անցել է բեմի աջ կողմը և տերողորմյան ձեռին նայում է առաստաղին):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ուզում է խոսել, բայց նեղված է Սաղաթելի ներկայությունից) Քեռի, մայրիկը կարծեմ ուզում էր քեզ տեսնել:

ՍԱՂԱԹԵԼ – (Մեկուսի): Ցանում է ինձ: (Հանդարտ քայլերով անցնում է աջից դեպի ձախ և դուրս է գալիս ձախ դռներով: Ճանապարհին հատակի վրա տեսնելով ինչ-որ թուղթ, վերցնում է և դնում Բագրատի սեղանի վրա):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Սաղաթելին ճանապարհ դնելով, դռները հետևից ծածկում է):

ԱՆԴՐԵԱՍ – Լսեցի հիվանդ ես, ինչո՞ւ ես վեր կացել:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Այնքան կլանված է իր մտքերով, որ գրեթե չի լսում) Հայրիկ, նա եկավ ինձ տեսնելու, չկարողացա նրան ընդունել: Երրորդ անգամն է գալիս այսօր, ես փախչում եմ նրանից: Հայրիկ, տուր ինձ միջոց նրան պարզերես հանդիպելու:

ԱՆԴՐԵԱՍ – Չեմ հասկանում, ինչ ես ուզում ինձանից:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Դողդոջուն ձայնով, բայց հաստատ): Ազնվություն:

ԱՆԴՐԵԱՍ – Ես այն եմ, ինչ որ կամ, ոչ ավելի, ոչ պակաս: Դու չես կարող ինձ խրատել

ՄԱՐԳԱՐԻՏ – Մի տանջիր ինձ, հայրիկ, ես չեմ կարող դիմանալ քո անպատվությանը:

ԱՆԴՐԵԱՍ – Եթե անպատիվ բան էր, ինչո՞ւ ինձ ստիպեցիր անել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ես ուզում էի անունդ խայտառակությունից ազատել:

ԱՆԴՐԵԱՍ – (Դառն հեգնական ծիծաղով) Ազատե՞լ: Ոչ, ընդհակառակը, դու ուզում էիր ինձ զոհել քո... սիրականին: (Վերջին բառը արտասանում է վիրավորական շեշտով):

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ մի ասա այդ բանը, մի ասա:

ԱՆԴՐԵԱՍ – Ինչպես չասեմ; Նրան ճանաչելու օրից հարազատ ծնողիդ մոռացել ես: Նրա մի համբույրը քեզ համար ավելի թանկ է, քան իմ պատիվը:

ՄԱՐԳԱՐԻՏ – Երդվում եմ մեր գերդաստանի անունով, որ սխալվում ես: Չեմ թաքցնում, ես սիրում եմ Օթարյանին: Բայց քո պատիվն ավելի եմ սիրել, որովհետև իմ ծնողի ազնվությունն ավելի բարձր է ինձ համար, քան իմ երջանկությունը:

ԱՆԴՐԵԱՍ – Սուս, անամոթ, մի համարձակվիր մոտս խոսել քո սիրո մասին: Ես շատ լավ գիտեմ, որ դու ուզում էիր ինձանից խլել հարստությունս, տալ այդ գյադային, որ հետո միասին ավելի փառավոր ապրեիք: Քո օժիտը քեզ քիչ էր թվում:

ՄԱՐԳԱՐԻՏ – Կարող եմ երդվել, հայրիկ, որ ինքդ չես հավատում քո ասածին: Դու շատ լավ գիտես, որ ես երբեք քո հարստության վրա աչք չեմ ունեցել:

ԱՆԴՐԵԱՍ – (Ծաղրով) Իհարկե, դու այս աշխարհից չես, քեզ մայր չի ծնել: Բավական է, դու սիրտ չունես, դու ատում ես ինձ, դու իմ թշնամին ես:

ՄԱՐԳԱՐԻՏ – Շատ լավ, թող այդպես լինի: Բայց մի օր կհամոզվես, որ ոչ ոք քեզ չի սիրել այնչափ, որչափ ես:

ԱՆԴՐԵԱՍ – Ինչո՞ւ ես եկել գլխիս, ասա կարճ, կտրական:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հետ տուր ինձ այդ թղթերը, հետ տուր:

ԱՆԴՐԵԱՍ – (Կծու ծիծաղ) Հա, հա, հա, հետ տուր: Անդրեաս Էլիզբարով, լսո՞ւմ ես, տուր սուրդ թշնամու ձեռը, վիզդ ծռիր, որ նա կտրե: Չէ որդի, Փառք Աստծո, դեռ չեմ զժվել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, մի ծաղրիր իմ տանջանքը, ես չեմ կարող դիմանալ:

ԱՆԴՐԵԱՍ – (Եղանակը փոխելով) Ի՞նչ թղթեր ես ուզում, ա՞, ի՞նչ թղթեր: Ես ոչ մի թուղթ չեմ տեսել, չեմ ունեցել և չունեմ, գնա բանիդ:

ՄԱՐԳԱՐԻՏ– (Ձեռները ջարդելով): Աստված իմ...

ԱՆԴՐԵԱՍ – Այո, դու երազ ես տեսել, ուրիշ ոչինչ...

ՄԱՐԳԱՐԻՏ – Կյանքս կտայի, եթե երազ լիներ: Երբ լսեցի բանալիների ձայնը, արթնացա և լուսամուտի թույլ լույսով տեսա քո ահեղ կերպարանքը, չհավատացի աչքերիս: Մի քանի րոպե, սարսափից քարացած, դիտում էի արարքդ: Ախ, այն ինչ վայրկյան էր, երբ դու հեռացար վախկոտ քայլերով, և ես հետևեցի քեզ: Այնտեղ, դահլիճում, քո սարսափած դեմքի վրա կարդացի իմ դատավճիռը: Դա ինձ համար կայծակի հարված էր:

(Երեսը դարձնելով, աշխատում է արտասուքը զսպել):

ԱՆԴՐԵԱՍ – Երազ չէ, բաս ինչ է: Երեկ ամբողջ գիշերը ես տանը չեմ եղել: Քեռիդ վկա է...

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, եթե ինձ չես խնայում, խնայիր քեզ: Սիրտս վկայում է, որ այդ թղթերը պետք է քո գլխին մի փորձանք բերեն:

ԱՆԴՐԵԱՍ – Դե, հերիք է, համբերությունս մի կտրիր, ես սկսում եմ կատաղել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ա, այլևս քո սպառնալիքներից չեմ վախենում: Իմ ամենամեծ պատիժը երեկվա քո արածն էր:

ԱՆԴՐԵԱՍ – (Կատաղած) Դե դուրս, դուրս, անպատկառ: Դու կարող ես ինձ որդեսպան դարձնել:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, մի՞թե չես մտածում, որ ես կարող եմ քո զողությունը պատմել բոլորին, առանց քեզ խնայելու:

ԱՆԴՐԵԱՍ – Մինչև բերանդ բաց անելը, ես այդ հանդուգն լեզուդ տակահան կանեմ և կշպրտեմ շներին: Դեհ կորիր, քանի որ սատանան ինձ չի հաղթել:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Հուսահատ) Աստված իմ, ի՞նչ անեմ: Նա սիրտ չունի: Հայրիկ, սիրելի թանկագին ծնող, տուր ինձ այդ թղթերը: Այսօր ես պարտավոր եմ նրանց վերադարձնել իրենց տիրոջը: Ես ազնիվ խոսք եմ տվել: Նա այնտեղ, հյուրասենյակում սպասում է: Ես փախա նրանից, ինչպես զող: Տուր, եթե մազի չափ հարգում ես քո աղջկա պատիվը:

ԱՆԴՐԵԱՍ – Անեծք քեզ, չար սադայել: Ասում եմ քեզ, որ իմ մոտ ոչինչ չկա:

ՄԱՐԳԱՐԻՏ – Հայրիկ, դու ինձ լավ չես ճանաչել: Ես քիչ եմ խոսել, բայց շատ եմ մտածել և զգացել: Ես պատրաստ եմ կյանքս զոհել պատվիդ հանար, բայց պատիվս արատավորել հարստությանդ համար – չեմ կարող, անզոր եմ: Դու պետք է ազատես ինձ խայտառակությունից: Այդ քո պարտքն է, որովհետև դու հայր ես: Տուր ինձ իմ պատիվը, ես առանց պատվի մի ժամ անգամ ապրել չեմ կարող:

ԱՆԴՐԵԱՍ – (Ատամները կրճտելով) Հեռացիր, աղջի, արյունս գլուխս է տալիս:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ոչ, չեմ հեռանալ, մինչև որ չստանամ այդ թղթերը: Զրկիր ինձ մի կտոր հացից, վոնդիր փողոց: Ես պատրաստ եմ քո վերջին գործակատարի աղախինը դառնալ, պատրաստ եմ դոնեդուռ ընկնել, ողորմություն մուրալ, բայց զող հռչակվել, ոչ այդ չեմ կարող: Նա ազնիվ է, նա ինձ էլ ազնիվ է համարում: Նա իմ մասին շատ մեծ գաղափար ունի: Եվ հանկարծ զող նրա աչքում: (Զոքում է) Խղճա

ինձ, խնայիր ինձ: Քեզանից է կախված իմ կյանքը: Լավ լսիր, կյանքս եմ ասում: ՄԻ արա, հայրիկ, այդ բանը, մի արա, գողությունը սոսկալի հանցանք է:

ԱՆԴՐԵԱՍ – (Կռվել է ինքն իր հետ) Վեր կաց, ամոթ է, ներս կմտնեն, կտեսնեն:

ՄԱՐԳԱՐԻՏ – Ոչ, ոչ, ես վեր կկենամ միայն պատիվս հետ ստացած: Տեսնո՞ւմ ես, խիղճդ արդեն տանջում է քեզ: Մի դարձնիր երեսդ, երդվում եմ, երբեք քեզ չեմ դատապարտել, երբեք, ոչ մի խոսքով, ոչ մի ակնարկով: Կպապանձվեմ և կհարգեմ քեզ առաջվա պես: Ես գիտեմ, որ դու մոլորվել ես և այժմ զղջում ես: Հայրիկ, տուր ինձ այդ թղթերը:

ԱՆԴՐԵԱՍ – (Վճռական շարժում է անում և վեր կենում) Հոգիս բերանս բերեցիր: (Մոտենում է գրասեղանին, արագ բաց է անում արկղը և ծրարը հանում):

ՄԱՐԳԱՐԻՏ – (Ուրախացած ոտքի կանգնելով) Ահ, ես գիտեի, որ դու բարի ես, որ քո չարությունը կեղծ է: Շնորհակալ եմ, հայրիկ, դրանով դու ազատում ես ոչ միայն պատիվս, այլև կյանքս...

ԱՆԴՐԵԱՍ – Հըմ, ձեռք վերցրու: Ես մի հարվածով վերջ կտամ ամեն բանի: Ինչ արած, դու համառ ես: (Թղթերը պատռում և ձգում է վառարան) Ահա նրանց տեղը:

ՄԱՐԳԱՐԻՏ – Քարսիրտ, այդ ինչ ես անում: (Ճչալով հարձակվում է, որ խանգարի):

ԱՆԴՐԵԱՍ – (Չի թողնում նրան վառարանին մոտենալ) Կաց, եթե ոչ քեզ էլ կգցեմ այնտեղ: Ահ, վերջապես, ազատվում եմ ձեզանից: Վառվեցեք, մոխիր դարձեք, դուք շատ եք այրել իմ սիրտը: Կռիվ երկուսի մեջ:

ՄԱՐԳԱՐԻՏ – Թող ինձ, թող ինձ: Դու ինձ ես այրում, ինձ: Բաց թող, բաց թող: (Ուզում է կծոտել հոր ձեռքերը) Ահ, ես թուլանում եմ, ուժ չունիմ: Լսիր, ես կգոռամ, կկանչեմ բոլորին այստեղ, որ տեսնեն քո ավազակությունը: Թող: (Ազատվելով հոր ձեռքից, մոտենում է վառարանին): Ահ, այլևս ուշ է: Այրվեցին, կորավ ամեն ինչ: (Բարձրաձայն) Այստղ եկեք, Ռոզալիա, Բագրատ, ամենքդ եկեք, տեսեք ինչ է կատարվում այստեղ: Հայրն այրեց իր աղջկա պատիվը: Ահ, կորավ ամեն ինչ: (Թուլացած ընկնում է աթոռի վրա: Լռություն) Բայց թող այդպես լինի: (Քայլերն ուղղում է դեպի ձախ դռները: Հանդիպում է Օթարյանին, որ գալիս է նույն դռներից, ցնցվում է և անշարժ մնում):

ԲԱԳՐԱՏ – (Ներս է մտնում նույն դռներից, Օթարյանից քիչ հետո):

ՏԵՍԻԼ 7

ԱՆԴՐԵԱՍ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՍԱՂԱԹԵԼ, ՕԹԱՐՅԱՆ ԵՎ ԲԱԳՐԱՏ

ԱՆԴՐԵԱՍ – (Ձեռները մեջքին դրած, կանգնած է դեպի ձախ):

ՕԹԱՐՅԱՆ – Վերջապես, տեսա քեզ: Դու հիվանդ չես և փախչում ես ինձանից: Լսիր, հայրդ ինձ անպատիվ արավ և դուրս վռնդեց իր տնից: Ես համարվում եմ ստոր մարդ, որ ուզեցել է խաբեբայությամբ կորզել նրա հարստությունը: Ցույց տուր նրան իմ թղթերը: Ցույց տուր իսկույն, ես այդպես եմ կամենում: Ես ստորացած եմ, անպատված: Ցույց տուր այդ ապացույցները:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Լուռ, գունատ, դողդոջուն և անշարժ կանգնած է պատի տակ):

ՕԹԱՐՅԱՆ – Ահա և եղբայրդ: Այժմ նա ուրիշ լեզվով է խոսում: Այստեղ մարդկանց դերերը փոխվել են: Երեկ հայրդ էր ուզում ինձ կաշառել, այսօր - եղբայրդ: Գոնե բացատրիր, ինչ է պատահել: (Լռություն) Ա, դու լսո՞ւմ ես ձայն չես հանում, կանգնած ես դատապարտյալի պե՞ս: Երդվում եմ հորս հարստահարված գերեզմանով, կամ դուք եք խելագարվել, կամ ես: (Մարգարիտին) Ասա, այդ ի՞նչ դավադրություն է: Չէ որ ես քեզ ընտրեցի դատավոր: Ո՞ւր են իմ ապացույցները: Բեր այստեղ:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Երկար տատանվելով) Չգիտեմ:

ՕԹԱՐՅԱՆ – Դեհ, լսո՞ւմ ես, Մարգարիտ, գնա բեր այն թղթերը:

ՄԱՐԳԱՐԻՏ – (Մեռելային սառնությամբ) Ես այրեցի այն թղթերը: Ահա այստեղ: (Ցույց է տալիս վառարանը, երկարատև տանջանքով մի հայացք է ձգում հոր վրա և թույլ քայլերով հեռանում է ձախ դռներով):

ՕԹԱՐՅԱՆ – }

ԲԱԳՐԱՏ – } (Միաժամանակ մոտենում են վառարանին):

ԲԱԳՐԱՏ – (Նայում է, փակում է վառարանի դռներն և ուրախություն արտահայտում):

ՏԵՍԻԼ 8

ԱՆԴՐԵԱՍ, ՍԱՂԱԹԵԼ,ՕԹԱՐՅԱՆ, ԲԱԳՐԱՏ հետո ՍՈՒՐԵՆ

Պատկերավոր տեսարան

ՕԹԱՐՅԱՆ – (Ապշած նայում է մերթ մեկին, մերթ մյուսին) Այրե՞լ է: Ուրեմն, այդ մի որոգա՞յթ էր ինձ համար: Մարգարիտը դաշնակից մի ավազակի: Ոչ, այդ

անկարելի բան է: Կասկածել նրա ազնվության մասին, կնշանակե հայհոյել սրբությունը: Նա սուտ ասաց: Նա իրան զրպարտեց: Այստեղ մեղավորն ուրիշ է: (Անդրեասին) Արդարացրեք ձեր աղջկան, ապա թե ոչ՝ ես նրան կվիրավորեմ:

ՍԱՂԱԹԵԼ – (Ներս է մտնում ձախ դռներից):

ԱՆԴՐԵԱՍ – Սաղաթել, գնանք կլուբ: (Քայլերն ուղղում է դեպի նախասենյակ): Բեմի հետևից լսվում է ատրճանակի խուլ պայթյուն:

ԲՈԼՈՐԸ – (Ցնցվում են):

ՍԱՂԱԹԵԼ – Այդ ի՞նչ էր: (Վազում է հետ ձախ դռներով):

ԲԱԳՐԱՏ – (Հետևում է Սաղաթելին):

ԱՆԴՐԵԱՍ – }

ՕԹԱՐՅԱՆ – } Քարացել են:

ՍՈՒՐԵՆ – (Ներս է վազում ձախ դռներից գունաթափված: Տատանվում է; Լռություն): Մարգարիտն իրեն սպանեց:

ԱՆԴՐԵԱՍ – (Մռնչում է, ձեռը զարկելով գլխին) Ահ, որդեսպան:

ՕԹԱՐՅԱՆ – Ա, այդ դու ես այրել: Գազա՞ն: (Ուզում է հարձակվել Անդրեասի վրա):

ՍՈՒՐԵՆ – (Մեջ է ընկնում) Կաց, նա արդեն պատժված է: (Նայում է հորը կատաղությամբ և զզվանքով):

ՕԹԱՐՅԱՆ – Մարգարիտ, Մարգարիտ: (Հեկեկալով վազում է դեպի ձախ և անզորացած հենվում դռներին):

Վարագույրն իջնում է հանդարտ:

Վերջ

About this digital edition

This e-book comes from the online library Wikisource[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported[2] license or, at your choice, those of the GNU FDL[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at this page[4].

The following users contributed to this book:

- Voskanyan
- Սահակ

---

1. ↑ http://wikisource.org
2. ↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0
3. ↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html
4. ↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium